



USAID
ԱՄԵՐԻԿԱՅԻ ԺՈՂՈՎՐԻՑ

csode
ՀԿ զարգացման
ծրագիր  **po**



ԵՎՐԱՍԻԱ
ԷԿՍՏՐԱԿՈՐԻՄԱԿՑՈՒՄ
ՎԻՏԱԿՐԱՑ

ԵՀՀ համալսարան

Հայաստանը և տարածաշրջանը

Հայաստանը և տարածաշրջանը

Սույն ձեռնարկը ներկայացնում է Հայաստանի հարևան հասարակությունները: Ձեռնարկը ուղղված է քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, ուսանողների և առհասարակ լայն շրջանակների համար՝ տարածաշրջանի մշակութային, քաղաքական և այլ առանձնահատկություններին ծանոթացնելու նպատակով:

Հեղինակներ

Աննա Սերգեյի Գևորգյան
Դավիթ Արտաշեսի Հովհաննիսյան
Հայկ Մկրտչի Քոչարյան
Շուշան Տիգրանի Կյուրեղյան
Տաթևիկ Սուրբատի Մկրտչյան

Եվրասիա համագործակցություն հիմնադրամի (ԵՀՀ) տեսլականն է նպաստել նրան, որ Հարավային Կովկասը կայանա որպես խաղաղ, հակամարտություններից զերծ և համագործակցող տարածաշրջան, և աչքի ընկնի քաղաքացիների ներգրավման բարձր մակարդակով, սոցիալապես պատասխանատու ձեռներեցությամբ ու կայուն, պատասխանատու և արդյունավետ հասարակությամբ: ԵՀՀ-ն տարիներ շարունակ աշխատում է քննադատական մտածողության և այլընտրանքային կրթության մեթոդների ասպարեզում իր մի շարք ծրագրերում, ինչպես, օրինակ, մարդու իրավունքների, կոնֆլիկտների տրանսֆորմացիայի և խաղաղարարության, քաղաքացիական հասարակության հզորացման և այլն:

Սույն ձեռնարկը մաս է կազմում «ԵՀՀ համալսարան» խորագրի ներքո հրատարակվող ձեռնարկների շարքի: Շարքն ընդգրկում է գրույցներ չորս ծավալուն թեմաների վերաբերյալ.

- **Քննադատական մտածողություն (ՔՄ)**
- **Պատերազմ և խաղաղություն (ՊԽ)**
- **Քաղաքացիական հասարակություն (ՔՀ)**
- **Կրթություն, պատմության մեթոդաբանություն, մշակույթ և արժեքներ (ԿՊՄՄԱ)**

Ձեռնարկը ստեղծվել է «ՀԿ Դեպո – Հասարակական կազմակերպությունների զարգացման ծրագրի» շրջանակում՝ Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության միջոցով: Ծրագրի շրջանակում ստեղծված նյութերի բովանդակությունը կամ արտահայտված տեսակետները միմիայն Եվրասիա համագործակցություն հիմնադրամին են, և պարտադիր չէ, որ արտահայտեն ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:

«ՀԿ Դեպո – Հասարակական կազմակերպությունների զարգացման ծրագիրը» խթանում է քաղաքացիական հասարակության կայուն զարգացումը և ուժգնացնում ՀԿ-ների՝ որպես բարեփոխումներն առաջ մղող, ծառայությունները բարելավող և տնտեսական, ժողովրդավարական ու սոցիալական ոլորտներում արդյունավետ կառավարմանը նպաստող դերակատարների կարողությունները:

Հայաստանը և տարածաշրջանը

| | |
|---|----|
| Նախաբան ԵՀՀ-ից | 4 |
| Ներածություն | 5 |
| 1. Ամեն ինչ Իրանի և իրանցիների մասին. հայացք Հայաստանից | 6 |
| 2. Հայ-արարական առնչություններ. երկկողմ դիվանագիտական հարաբերություններ և «փափուկ ուժ» | 17 |
| 3. ՀՀ արտաքին քաղաքականությունը և իսլամական ծայրահեղական կառույցները տարածաշրջանում. ով ո՞վ է. իսլամական ծայրահեղականությունը մեր հարևանությամբ | 35 |
| 4. Իսլամ. բացատրական բառարան-տեղեկագիրք | 47 |
| Abstract | 93 |

Նախարան ԵՀՀ-ից

Քաղաքացիական հասարակությանը (ՔՀ) տրվել են տարբեր բնութագրեր և ձևակերպումներ: Դրանք փորձում են սահմանել այն մեծ ծավալի աշխատանքը, որ ՔՀ կառույցները և կազմակերպությունները կատարում են՝ լուծելու հասարակության տարբեր խնդիրներ: ՔՀ կազմակերպությունների գործունեությունը, սակայն, միշտ չէ, որ գնահատվում է արժանի կերպով: Ի տարբերություն բիզնեսի, որի համար հեղինակություն ստեղծելը առաջնային է հաջողության հասնելու ճանապարհին, և պետական կառույցների, որոնք այսպես թե այնպես հանրության ուշադրության կենտրոնում են, ՔՀ-ների աշխատանքը և ազդեցությունը երբեմն անտեսանելի են մնում: Աշխատելով պետությունից հասարակություն, մարդուց օրենք, մարդուց հասարակություն, բիզնեսից մարդ, տեղականից միջազգային, հասարակությունից պետություն և մի շարք այլ վեկտորներով՝ ՔՀ-ները ստեղծում են անհրաժեշտ կապերը և լրացնում պակասող օղակները «մարդ-հասարակություն» համակարգի սահուն աշխատանքի համար:

Մեր օրերում, սակայն, ՔՀ-ները զբաղված են ոչ միայն այս պակասող օղակները լրացնելով և հասարակությունում առկա խնդիրները հայտնաբերելով ու վերացնելով, այլև դրանց լուծման համար միջոցներ հայթայթելով: Արդյունքում գրեթե ժամանակ չի մնում ինքնակրթվելու և կարողությունների զարգացման համար՝ ուժեղացնելու սեփական կազմակերպությունը, քանի որ ուժեղ կազմակերպությունը միայն կարող է արդյունավետ կերպով ծառայել հասարակության տարբեր խմբերի շահերին:

Միբելի՝ ընթերցող, Եվրասիա համագործակցություն հիմնադրամը (ԵՀՀ) ՀԿ Դեպո ծրագրի շրջանակում ԱՄՆ ՄԶԳ-ի օժանդակությամբ բացառիկ հնարավորություն է ստացել ստեղծելու գործիքներ և գիտելիքի փոխանցման արդյունավետ միջոցներ, որոնք ՔՀ-ներին օգնում են մեծացնելու իրենց կայունության զարգացման և փոփոխություններին դիմակայելու հնարավորությունները:

Այս ձեռնարկը ստեղծված միջոցներից մեկն է, որի նպատակն է խնայել ՔՀ-ի աշխատակցի ժամանակը և մասնագիտական հսկայածավալ դասագրքերի ու լրատվահոսքի փոխարեն տրամադրել նրանց տարբեր ոլորտների առնչվող կառուցվածքային և վերլուծական ամենաանհրաժեշտ տեղեկատվությունը:

ԵՀՀ-ն մշտապես իր ուշադրության կենտրոնում է պահում գիտելիքների և մտածելակերպի նորացման գործը, և «ԵՀՀ համալսարան» խորագրով հրատարակվող նյութերը ծառայում են այդ նպատակին:

Հուսով ենք՝ այս ձեռնարկը, ինչպես ԵՀՀ համալսարանի մյուս հրապարակումները, կաջակեն ՔՀ-ներին պետություն-ՔՀ համագործակցության, շահերի պաշտպանության, նոր նախաձեռնությունների գործընթացներում, ինչպես նաև բարելավելու իրենց ծառայություններն ու ռազմավարությունները:

Ներածություն

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության աշխարհաքաղաքական դիրքը, պատմական ուղին, այսօրվա արագ փոփոխվող աշխարհում տեղի ունեցող զարգացումները քաղաքացիական հասարակության յուրաքանչյուր անդամ կարիք ունի այս տեղեկատվական անսահման դաշտում արժանահավատ աղբյուր ունենալ, որը կօգնի նրան արագորեն կողմնորոշվել բավականին բարդ թեմաների շուրջ:

ՀՀ-ի հարևանությամբ են գտնվում մուսուլմաններով բնակեցված երեք պետություն, որոնցից միայն Իրանի Իսլամական Հանրապետության հետ են առկա սերտ հարաբերություններ, իսկ Թուրքիայի և Ադրբեջանի հետ մինչ օրս ունենք առկախված կոնֆլիկտներ: Միաժամանակ անկայուն տարածաշրջանի քաղաքականության վրա իսլամական ծայրահեղական խմբերի գործունեության ազդեցությունը, դրանց ուսումնասիրությունն ու իմացությունը ևս կարևոր է դարձնում Հայաստանի համար:

ՀՀ-ն ունի առևտրատնտեսական, մշակութային, սոցիալական կապեր արաբական երկրների հետ և մեր բազմաթիվ քաղաքացիներ ապրում և աշխատում են այդ երկրներում, որտեղ կան նաև հայկական համայնքներ:

Քաղաքական և դիվանագիտական առումով Հայաստանն ակտիվ ներկայություն ունի մի շարք արաբական երկրներում, ինչն առավել կարևոր է դարձնում ստույգ և հստակ տեղեկատվություն ունենալու անհրաժեշտությունը:

ՔՀԿ-ների ներկայացուցիչները պետք է իմանան նաև իսլամի հիմնական դրույթները, ինչն օգտակար կլինի մուսուլմանների հետ հարաբերություններ հաստատելիս: Այս իրողություններով պայմանավորված՝ ներկա ձեռնարկում ընդգրկված են Իրանի, Արաբական երկրների, իսլամական ծայրահեղական խմբավորումների մասին բաժիններ, ինչպես նաև Իսլամի հիմնական հասկացությունների և իմաստների բառարան-ուղեցույց:

Քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոնը (ՔՄՀԿ) Երևանի պետական համալսարանի (ԵՊՀ) ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանում է, որն իրականացնում է ֆունդամենտալ հետազոտություններ մշակութաբանության, քաղաքագիտության, աշխարհաքաղաքականության և այլ ոլորտներում: ՔՄՀԿ-ն իրականացնում է նաև քաղաքակրթական գործընթացների փորձագիտական վերլուծություն և զբաղվում է ընթացիկ քաղաքական իրադարձային վերլուծությամբ:

1. Ամեն ինչ Իրանի և իրանցիների մասին. հայացք Հայաստանից

Ներածություն

Մի շարք հետազոտություններ, ինչպես նաև հանրային խոսույթի ու մամուլի մշտադիտարկումը փաստում են, որ Հայաստանի հասարակությունը չունի ամբողջական պատկերացում իր հարևանների հասարակությունների մասին: Մի կողմից փակ սահմաններն ու հակամարտությունը, մյուս կողմից միջնորդավորված ու կարծրատիպային ընկալումները հասարակության մեջ առաջացնում են հարևանների, այդ թվում՝ նաև բաց սահմաններով հարևանների մասին տեղեկատվական քառու: Իրանի մասին մասնավորապես հայկական մամուլում անդրադարձների համար տեղեկատվական առիթ են դառնում միայն Իրանի միջուկային ծրագրով պայմանավորված ԱՄՆ–Իրան հարաբերությունների հերթական սրացումները և կանանց իրավունքների ոտնահարման աղմկահարույց դեպքերը: Արդյունքում Իրանը հասարակական ընկալումներում պատկերվում է որպես միայն կանանց իրավունքները ոտնահարող ու Արևմուտքի հետ հակամարտության մեջ եղած կարծրատիպային ընկալմամբ երկիր: Այնինչ Իրանի հետ կայուն հարաբերությունների զարգացման գրավականներից մեկը այդ երկրներն ու նրանց հասարակությունները նաև հասարակական մակարդակում ճանաչելն է:

Վերոնշյալ խնդիրները հաշվի առնելով՝ սույն ձեռնարկի այս բաժինը ընթերցողին կփորձի հաղորդել Իրանի ու իրանցիների մասին հնարավորինս բազմաշերտ տեղեկություններ: Թեմաների ընտրությունը կատարվել է մի կողմից Իրանի մասին նվազագույն գիտելիքներ հաղորդելու, մյուս կողմից՝ մեր հասարակական խոսույթում տարածված կարծրատիպերի ապակառուցման նպատակով:


Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքական համակարգը

Հայաստանյան մամուլին ու անգամ քաղաքական խոսույթին բնորոշ է մեր հարավային հարևանին Պարսկաստան անվանելը: Պարսկաստանը երկար դարեր եղել է թագավորական տարբեր դինաստիաների գերիշխանությամբ երկիր՝ հաճախ համաշխարհային մակարդակի դերակատար (հատկապես մինչև արաբների կողմից նվաճվելն ու իսլամ ընդունելը), նվազագույնը՝ տարածաշրջանային գերտերություն: Հետաքրքիրն այն է, որ անկախ նրանից, թե ինչ ծագման դինաստիա է իշխել Պարսկաստանում, պարսկական հասարակական ու քաղաքական ընկալմամբ դա եղել է պարսկական թագավորություն: Այդ պատճառով էլ համարվում է, որ այդ երկիրն ունի երկուհազարամյա անընդհատ պետականության պատմություն:

20-րդ դարի սկզբին Պարսկաստանում տեղի է ունենում սահմանադրական հեղափոխություն, որի արդյունքում հաստատվում է սահմանադրական միապետություն: 1935 թ.՝ Ղաջարական Ռեզա շահի օրոք, երկրի կառավարությունը դիմում է բոլոր այն երկրներին, որոնց հետ դիվանագիտական հարաբերություններ էր հաստատել խնդրանքով, որ երկիրը կոչեն Իրան. սա արվում էր այն նպատակով, որ Իրանի բազմազգ հասարակությունը միավորող «Արիանա» աշխարհի բնակիչ լինելը դառնա գերակա ցուցիչ (դոմինանտ մարկեր) և չկաշկանդի միայն փարսերին (ֆարսերին) նշող Պարսկաստան տերմինով, մյուս կողմից ժամանակին Եվրոպայում նացիստական գաղափարախոսության տարածման պայմաններում շեշտի երկրի ու ժողովրդի արիական ծագումը: Այսպիսով՝ 1935 թվականից աշխարհի քաղաքական քարտեզի վրա գոյություն չունի Պարսկաստան երկիրը, այդ տերմինը հնաբանություն (արխաիզմ) է, և դրա օգտագործումը մեր հարևանին նկարագրելիս քաղաքականապես կոռեկտ չէ: 1979 թ. դեռևս շահական Իրանում Ղաջարական դինաստիայի Ռեզա Մուհամմադ շահի օրոք հակաշահական հսկայածավալ ցույցերը երկրից արտաքսված այաթոլլահ Խոմեյնիի առաջնորդությամբ վերաճեցին Իսլամական հեղափոխության ու, տապալելով Ղաջարական դինաստիան, ստեղծեցին Իրանի Իսլամական

Հանրապետությունը (ԻԻՀ): Այսպիսով՝ անկախությունից ի վեր մեր հարավային հարևանի հետ ստեղծված հարաբերությունները հարաբերություններ են Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության միջև:

Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքական համակարգը խարսխված է այսօրվա Խոմեյնիի «Վեյլայթե Ֆադիհ» (Կրոնագետների կառավարում) տեսության վրա: Այդ տեսության էությունն այն է, որ Մուհամմադ մարգարեի մահից հետո և շիայական 12-րդ իմամ Մահդիի թաքուցման պայմաններում իսլամական ումմայի աստվածահաճո ու արդար կառավարման միակ ճանապարհը աստվածաբան-կրոնագետների կառավարումն է: Այլ կերպ ասած՝ Խոմեյնիի տեսության հիմքը շիա կրոնագետների քաղաքականացումն էր, նրանց ապաքաղաքական, միայն հոգևոր հարցերի ոլորտից դեպի երկրի կառավարման ու ղեկավարման դաշտ տեղափոխումը: Թեև պատմությունը ցույց է տալիս, որ իսլամը երբեք էլ զուտ կրոն չի եղել, այլ իր մեջ նաև քաղաքական տարր է պարունակել, և Մուհամմադ մարգարեն էլ միայն հոգևոր առաջնորդ չէր, այլ նաև քաղաքական ու ռազմական գործիչ, բայց կրոնագետների կառավարման մասին Խոմեյնիի տեսությունը նոր մակարդակի էր բարձրացնում հոգևորի ու քաղաքականի, հոգևորի ու ռազմականի փոխկապակցվածությունը: Ըստ «Վեյլայթե Ֆադիհ» տեսության հիման վրա գրված ԻԻՀ Սահմանադրության՝ երկրի իշխանությունը պատկանում է Ալլահին, իսկ երկրի ղեկավարը Հոգևոր Առաջնորդն է՝ Ռահբարը: Ըստ էության՝ նա ոչ միայն երկրի զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարն է, այլ նաև վեր է կանգնած օրենսդիր, գործադիր ու դատական համակարգերի ղեկավարներից և ուղղակի կամ անուղղակի կերպով նրանց ընտրության կամ նշանակման հարցում էլ որոշիչ դերակատարում ունի: Իսկ իշխանության այսպիսի հսկա ծավալը «կարգավորվում» է մի շարք միմյանց փոխզսպող պետական մարմինների ու դրանց ընտրելու, նշանակելու տարաբնույթ մեխանիզմների միջոցով: Այսպես, Իրանի Իսլամական Հանրապետության Հոգևոր Առաջնորդի պաշտոնը ընտրվի է, ընտրվում է 88 կրոնագետներից բաղկացած Փորձագետների խորհրդի կողմից: Այս խորհրդի անդամներն իրենց հերթին 8 տարի ժամկետով ընտրվում են համապետական ընտրությունների միջոցով՝ մեծամասնական ընտրակարգով: Ընտրությունների մասնակցելու համար, սակայն, յուրաքանչյուր թեկնածու պետք է նախ թույլտվություն ստանա ԻԻՀ Սահմանադրության պահապանների՝ 12 հոգուց բաղկացած խորհրդի կողմից, որի կազմի վեց անդամներն իրավագետներ են, վեցը՝ Հոգևոր Առաջնորդի կողմից նշանակված կրոնագետներ: Այսպիսով՝ տեսականորեն ներկա հոգևոր Առաջնորդը կարող է անուղղակի նշանակումների միջոցով կանխել իր համար անցանկալի թեկնածուների մուտքը Փորձագետների խորհրդի կազմ և ապահովագրել իր նախընտրելի թեկնածուի ընտրությունը՝ որպես իր իրավահաջորդի: Իսլամական հեղափոխությունից ի վեր Իրանում երկու Հոգևոր Առաջնորդ է եղել՝ հեղափոխության առաջնորդ այսօրվա Խոմեյնին և նրա մահից հետո Փորձագետների խորհրդի կողմից ընտրված այսօրվա Ալի Խամենեին, որ պաշտոնավարում է ցայսօր:



Նկարը՝ www.Iranchamber.com կայքից

Իրանի Իսլամական Հանրապետությունում տարիներ ի վեր գոյություն չունեն կուսակցություններ. քաղաքական ընտրությունները տեղի են ունենում քաղաքական դաշինքների կազմավորմամբ: Ընդհանուր առմամբ, անկախ իրանական ներքաղաքական առանձնահատկություններից՝ քաղաքական այդ դաշինքները բնութագրելու համար հաճախ օգտագործում են «պահպանողականներ» և «բարեփոխիչներ» տերմինները, որոնք երբեմն թյուրընկալման առիթ են դառնում արևմտյան և միջնորդավորված կերպով նաև հայաստանյան քաղաքական վերլուծաբանների ու լրագրողների, քաղաքական գործիչների ու քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների համար: Իրանական համատեքստում այդ տերմինները պետք է ընկալել երկրի քաղաքական համակարգի տիրույթում. այլ կերպ ասած՝ աստվածապետական երկրի բարեփոխիչներն ամենևին երկրի քաղաքական համակարգը չէ, որ ուզում են «բարեփոխել», այլ առկա համակարգի գործիքակազմն ու որոշ, հատկապես արտաքին քաղաքական ու հասարակական միտումները: Բացի դրանից՝ որևէ կոնկրետ դաշինք կամ այդ դաշինքի անդամ քաղաքական գործիչ հաճախ բոլոր ոլորտների «բարեփոխիչ» չի լինում, այլ միայն կոնկրետ որևէ կամ մի քանի հարցում ունենում է ավելի բարեփոխական հայացքներ: Այս ամենը Իրանի քաղաքական ճամբարների միջև սահմանը դարձնում է չափազանց հեղհեղուկ, իսկ քաղաքական դաշտի բաժանումը «բարեփոխիչների» և «պահպանողականների» խիստ պայմանական:

Կանանց իրավունքների հարցն Իրանում

Իրանի Իսլամական Հանրապետությունը փաստացի աշխարհի միակ կրոնապետությունն է կամ աստվածապետությունը. երկրի սահմանադրության 1-ին հոդվածի համաձայն՝ իշխանությունը երկրում պատկանում է Ալլահին: Ու քանի որ սահմանադրության բոլոր մյուս հոդվածներն էլ այս կամ այն չափով հիմնված են շիայական իսլամի հիմնադրությունների վրա, իսլամի ազդեցությունը տարածվում է քաղաքական, տնտեսական, մշակութային ու հասարակական բոլոր ոլորտների վրա: Այս ամենով հանդերձ, սակայն, կամ գուցե հենց այս ամենով պայմանավորված, Իրանի հասարակությունը ամենակրոնավորներից չէ տարածաշրջանում: Իրանի հասարակության մյուս՝ քիչ հայտնի առանձնահատկություններից է այն փաստը, որ այն ամենաֆեմինինն է համարվում իսլամական աշխարհում՝ ի տարբերություն իսլամադավան այլ երկրների մասկուլին հասարակությունների: Իսկ քաղաքական իմաստով՝ կանանց իրավունքների հարցերը

Իրանում վերջին մեկ դարում բազում փոխակերպումների են ենթարկվել: Որոշ գիտական հետազոտություններ առաջ են քաշում այն տեսակետը, որ Իրանում իշխանության եկող յուրաքանչյուր ուժ «կնոջ մարմնի» միջոցով էր նաև փորձում ի ցույց դնել իր որդեգրած քաղաքականությունը: Այսպես, 20-րդ դարակերպին աշխարհիկ պետություն կառուցելու նպատակ հետապնդող Ռեզա շահի հատուկ որոշմամբ արգելվում է չաղրայի կրումը հասարակական վայրերում ու պետական հաստատություններում: Չարմանալի չէ, որ այսպիսի փոփոխություններին անպատրաստ հասարակության մեջ բողոքի ալիք է բարձրանում. ավանդական մտածողությամբ ընտանիքների մեծ մասի համար տնից առանց չաղրայի դուրս գալը նույնացվում էր տնից մերկ դուրս գալուն, և շատերը նախընտրում էին պարզապես մեկուսանալ հասարակությունից: Հետագայում՝ արդեն Ռեզա շահի որդի Մուհամմադ Ռեզայի օրոք, այս որոշումը մեղմվում է, և չաղրայից հրաժարումը դառնում է ցանկալի, բայց ոչ պարտադիր պայման հասարակական վայրերում հայտնվելու համար, թեև պետական հաստատությունները դե ֆակտո շարունակում են արգելել չաղրայավորների ներկայությունը: Իսլամական հեղափոխությունից անմիջապես հետո, սակայն, ընդունվում է ճիշտ հակառակ պարտադրանքի մասին որոշումը. առանց չաղրայի հասարակական վայրում հայտնվելը դառնում է քրեորեն պատժելի արարք: Այս որոշման դեմ 1979 թ. մարտի 8-ին հսկայածավալ բողոքի երթ է կազմակերպվում, բայց սպարոյուն. այաթոլլահ Խոմեյնիի գաղափարախոսության այս հիմնադրույթն անդրդվելի էր. կանայք պետք է չաղրայով լինեն: Կանանց իրավունքների համատեքստում կարևոր էր նաև այն հանգամանքը, որ նույնպիսի փոխակերպումների էին ենթարկվում ամուսնության ու ամուսնալուծության, կրթության ու ազատ տեղաշարժի հարցերը. ընտանեկան հարցերով դատարանների ստեղծումը 20-րդ դարի կեսերին ու ամուսնության տարիքի բարձրացումը մինչև տասնհինգ, իսկ հետագայում տասնյոթ տարեկանը զգալի առաջընթաց էր իսլամական օրենքով նախատեսված ինը տարեկանի համեմատ: Հեղափոխությունից հետո, սակայն, այս դատարանները փակվեցին, իսկ ընտանեկան բոլոր հարցերով դեպքերը դարձան կրոնավորների քննության առարկա:

Կրթության իրավունք կանայք Իրանում ստացել են սահմանադրական հեղափոխությունից հետո՝ 1907 թ., երբ բացվում է աղջիկների առաջին տարրական դպրոցը, իսկ բարձրագույն կրթության իրավունք նրանց շնորհվել է Ռեզա շահի օրոք, երբ 1930-ականներին բացվում է առաջին աշխարհիկ կրթական հաստատությունը՝ Թեհրանի համալսարանը, որը բաց էր նաև կանանց համար: Այս ամենով հանդերձ, սակայն, շահական Իրանում կանանց իրավունքների ոլորտում տեղի ունեցող փոփոխությունները հաճախ որակվում են որպես փոփոխություններ ընտրյալների համար, քանի որ հասարակական լայն շերտերին այդ փոփոխություններն այդպես էլ հասանելի չէին դառնում: Այնինչ Իսլամական հեղափոխությունից հետո, բոլոր առկա սահմանափակումներով հանդերձ, կրթության հասանելիությունը աննախադեպ մակարդակի է հասնում և ընդգրկում է բոլոր կանանց՝ քաղաքաբնակ թե գյուղաբնակ, մեծահարուստ թե աղքատ: Արդյունքում Իրանի կանայք հաջողություններ գրանցեցին անգամ այնպիսի ոլորտներում, ինչպես ինժեներիան, աստղաֆիզիկական, բժշկությունը, ռեժիսուրան, ճարտարապետությունը և այլն. այս բոլորն, իհարկե, իսլամական տրամաբանության ու փիլիսոփայության պայմաններում: Այսօր կանայք Իրանում ներգրավված են տնտեսության բոլոր ոլորտներում, հասարակական ու մշակութային կյանքի բոլոր բնագավառներում:

Քաղաքական իմաստով կանանց ներգրավվածությունը որոշակի արգելքներ ունի. թեև կանայք ներգրավված են պետական մարմիններում, մասնակցում են տեղական ու համապետական ընտրություններին, ներկայացված են երկրի օրենսդիր մարմնում՝ Մաջլեսում, կառավարությունում, անգամ դիվանագիտական առաքելություններում, սակայն երկրի նախագահական ընտրություններին ու կրոնավորներից բաղկացած պետական ինստիտուտների ընտրություններին չեն մասնակցում՝ օրենքներում սեռի հիմքով խտրականության պատճառով: Իրանի կանանց իրավունքներով մտահոգ ու այդ իրավունքների ընդլայնման համար պայքարող շրջանակները, սակայն, յուրաքանչյուր նոր ընտրության ժամանակ առաջադրում են իրենց թեկնածուությունները՝ այդպիսով ընդլվզելով

այդ կարգերի դեմ, և ամեն անգամ պահանջում են բացատրագիր տալ թեկնածության մերժման փաստարկներով: Եվ եթե տարիներ առաջ այդ փաստարկը միակն էր՝ «որովհետև կին ես», այսօր արդեն թույլտվություն տրամադրող մարմինը՝ Սահմանադրության պահապանների խորհուրդը, ստիպված է հղում անել նրանց «ոչ կոմպետենտությանն ու փորձի պակասին»:

Իրանի Իսլամական Հանրապետության կրոնական փոքրամասնությունները

Իրանը բազմադարյա պատմության ընթացքում ներառել է բազում ազգեր ու ժողովուրդներ, որոնք ապրել են կողք կողքի՝ երբեմն հաշտ, երբեմն պատերազմելով, բայց կիսելով ընդհանուր մշակութային տարածք, ավանդույթներ ու սովորույթներ: Իսլամական Հանրապետության Սահմանադրությամբ՝ ժամանակակից Իրանում գոյություն չունեն ազգային փոքրամասնություններ, պետությունը ճանաչում է միայն կրոնական փոքրամասնությունների: Ընդ որում՝ երկրի բոլոր քաղաքացիները համարվում են իրանցի՝ մուսուլման իրանցի, քրիստոնյա իրանցի, գրադաշտական իրանցի և այլն: Իրանի կրոնական փոքրամասնությունները ներկայացված են երկրի օրենսդիր մարմնում հինգ պատգամավորական տեղով՝ մեկ պատգամավոր հրեական, մեկը՝ գրադաշտական, մեկը՝ քրիստոնյա ասորական և երկուսը հայկական համայնքի հյուսիսային ու հարավային թեմերից: Այս տեղերը Իրանի խորհրդարանում մշտական են, այլ կերպ ասած՝ ընտրությունների ժամանակ կրոնական այս համայնքներն ընտրում են իրենց ներկայացուցիչներին:

Իրանի հյուսիսային նահանգներում՝ արևելյան ու արևմտյան Ատրպատականներում և Արդեբիլում, ապրում են ազերիախոս իրանցիներ: Ըստ իրանական քաղաքական փիլիսոփայության՝ այս հատվածի իրանցիները ազերիախոս են դարձել այստեղ հաստատված թյուրքախոս իշխանությունների ազդեցությամբ: Այս հանգամանքը հաշվի առնելով՝ ճիշտ չէ հայկական խոսույթում նրանց ադրբեջանցի անվանելն ու Ադրբեջանի Հանրապետությունում ապրողների հետ նույնացնելը: Իրանի այս նահանգներում ապրող իրանցիները մեծ մասամբ կիսում են Իրանի պաշտոնական քաղաքականության տեսակետները երկրի ներքին ու արտաքին քաղաքական հարցերի վերաբերյալ:

Այս շրջաններում, սակայն, կա ոչ շատ տարածված, բայց երբեմն-երբեմն իր մասին հիշեցնող ազգայնական հատված: Ազերիական ազգայնականության տեսակետից իրենք ազգակցական ընդհանրություն ունեն Ադրբեջանի Հանրապետության ազերիների հետ: Քանի որ այս տեսակետը հենց Ադրբեջանի քարոզչական դրույթներից մեկն է և իր մեջ նվաճողական նկրտումներ է պարունակում, այստեղ հակազդեցության է հանդիպում Իրանի կենտրոնական իշխանությունների կողմից: Ընդհանուր առմամբ, սակայն, ազերիախոս իրանցիները, ներգրավված լինելով պետական կառավարման համակարգում, ընդհանուր համաիրանական օրակարգերի կրողն են դառնում, և ազգային պատկանելությունը քիչ դեպքերում է որոշիչ գործոն լինում: Իրանի Հոգևոր Առաջնորդ այաթոլլահ Խամենեյի հայրն, օրինակ, նույնպես ազերիախոս իրանցի է՝ Արևելյան Ատրպատական նահանգի Խամենեյ բնակավայրից:

Իրանում ապրում են նաև քրդեր, որ կենտրոնացած են հիմնականում Թուրքիային ու Իրաքին սահմանակից նահանգներում, արաբներ՝ հիմնականում երկրի հարավում, իրանական այլ ժողովուրդներ՝ բելուջներ, զազաներ, թաթեր, գիլանցիներ, մազանդարանցիներ և այլն: Ֆարսերը, որոնց անունից է ծագում Իրանի Պարսկաստան, Persia, Персия անունը, տարբեր աղբյուրների համաձայն, կազմում են երկրի ընդհանուր բնակչության 45-50 %-ը միայն: Նրանց անունով է կոչվում երկրի կենտրոնական նահանգներից մեկը՝ Ֆարսը, որ հայտնի է իր Շիրազ մարզկենտրոնով ու Սաադի և Հաֆեզ բանաստեղծներով:

Իրանի մուսուլման բնակչության մեծամասնությունը շիա մուսուլմաններ են՝ տասներկուիմամական ճյուղի հետևորդներ: Իրանում ապրող սուննի մուսուլմանները, ըստ

պաշտոնական, միջազգային որևէ հետազոտությամբ չհաստատված տվյալների, 10 %-ից էլ քիչ են և հիմնականում երկրի արևելյան նահանգներում են կենտրոնացած: Մուննի մուսուլմաններ են Իրանի բելուջներն ու քրդերը, որոնց շրջանում կան նաև անջատողական տրամադրություններով խմբեր, որոնք պարբերաբար ավելի են ակտիվանում ու միջկրոնական բախումների առիթ ստեղծում: Բելուջական այդ խմբերը կապեր ունեն Պակիստանի բելուջների հետ, իսկ քրդերը՝ Թուրքիայի ու Իրաքի քրդերի հետ: Այս հանգամանքը առիթ է դառնում տարածաշրջանային ու արտատարածաշրջանային տարբեր ուժերի ու խմբավորումների կողմից նրանց խնդիրների շահարկման, հակաիրանական քաղաքականությունների մեջ օգտագործման համար:

Քրիստոնյաները Իրանի տարածքում ապրում են դարեր շարունակ. հայկական համայնքը Իրանի քրիստոնեական ամենահին համայնքն է: Հայերից բացի՝ Իրանում ապրում են նաև ասորի քրիստոնյաներ: Քրիստոնեությունը երկրում տարածվել է քրիստոնեության առաջին իսկ դարերում, բայց պատմության ողջ ընթացքում մնացել է երկրի փոքրամասնության կրոն զրադաշտականության, սուննի և հետագայում շիա իսլամի մեծամասնության կողքին:

Իրանական մշակույթի առանձնահատկությունները

Իրանական մշակույթը բազմադարյա պատմություն ու հարուստ ավանդույթներ ունի: Իրանական մշակույթին հատուկ են ինչպես նախաիսլամական կրոնական ավանդույթների ու ծեսերի պահպանումն ու դրանց իսլամականացումը, այնպես էլ բուն իսլամական կրոնական ավանդույթների իրանականացումը: Իրանական ճարտարապետության գոհարները, ինչպես Աքեմենյան դինաստիայի ծիսական կենտրոն Պերսեպոլիսը, Սպահանի «Սիոսե փոլ»՝ «Երեսուներեք կամուրջ» կոչվող կամուրջը, «Նաղշե Ջահան» հրապարակը, այնպես էլ Շիրազի, Քաշանի, Ղոմի ու մյուս քաղաքների ճարտարապետական կոթողներն ու հնավայրերը համաշխարհային մշակութային ժառանգության կարևոր կենտրոններ են:

Իրանական մշակույթի մեջ առանձնահատուկ տեղ է գրավում նաև պոեզիան: Պոեզիան ու պոետիկությունը իրանական ժողովուրդների ու Իրանի հասարակության անբաժանելի մասն են: Պոեզիային առանձնահատուկ նշանակություն տվող իրանցիները քաղաքականությունը նույնպես զերծ չեն պահում պոետիկ համեմումներից: Ներքաղաքական թե արտաքին քաղաքական, սոցիալական թե տնտեսական խնդիրների համատեքստում հաճախ կարելի է հանդիպել քաղաքական ուղերձների, էլույթների, երկխոսությունների, որոնք զարդարված են իրանցի բանաստեղծներից մեջբերումներով:

Իրանական պոեզիան, որ իր մեջ համաշխարհային գրականության գանձեր է պարունակում, ցայսօր գերում է բազում ընթերցասերների ու գրականագետների, արվեստագետների ու փիլիսոփաների նաև Իրանից դուրս: Ռուդաքիի ստեղծագործություններով ու Ֆիրդուսիի «Շահնամեով» սկսած ու ավարտած իրանական ժամանակակից գրողների ստեղծագործություններով, դրանք մեծ մասամբ դուրս են գալիս տեղական նշանակության գործեր լինելուց ու համաշխարհային հռչակ են վայելում: Իրանական գրականության մի զգալի հատված խարսխված է սուֆիական՝ իսլամական միստիցիզմի գաղափարների վրա. Հաֆեզի, Ռումիի, Աթթարի գործերը այլաբանական, խոհափիլիսոփայական գրականության նմուշներ են և ժամանակակից հատկապես արևմտյան ընթերցողական շրջանակներում լայն տարածում ունեն՝ հատկապես հաշվի առնելով արևելյան փիլիսոփայական ուղղությունների նկատմամբ նոր հետաքրքրության տարածումը:

Իրանական ժամանակակից կինոն նույնպես, չնայած գրաքննության բազմաթիվ տարրերի, ի հեճուկս դրանց ու երբեմն էլ նաև դրանց պատճառով այլաբանությունների օգտագործման մեծ քանակով համաշխարհային կինեմատոգրաֆիայի կարևոր բաղադրիչ է դարձել: Իրանական ֆիլմերը շատ հաճախ են մրցանակներ ստանում հեղինակավոր միջազգային կինոփառատոներում, իսկ դրանցից ամենահեղինակավոր «Օսկար» մրցանակաբաշխության

կողմից իրանցի ռեժիսոր Ասդար Ֆարհադիի «Նադերի և Սիմինի ամուսնալուծությունը» և «Վաճառող» ֆիլմերը արժանացել են լավագույն օտարալեզու ֆիլմի համար մրցանակների:

Իրանական կինոարտադրությունը հատկապես լայն թափ հավաքեց այն ժամանակ, երբ հեղափոխությունից հետո երկրում «հարամ» արգելված համարվեց «օտարերկրյա բարքերը պատկերող» արտասահմանյան ֆիլմերի ցուցադրությունը: Կինոների ու կինոթատրոնների սովոր իրանական հասարակության այդ պահանջմունքը բավարարելու, ինչպես նաև նոր գաղափարախոսությամբ պայմանավորված նոր հասարակական հարաբերությունների, վարքի ու վարքաձևերի ամրապնդման համար պետությունը սկսում է ֆինանսական մեծ աջակցություն ցուցաբերել կինոգործիչներին ու կինոարտադրությանը՝ այդպիսով զարկ տալով իրանական կինոյի վերելքին: Ժամանակակից իրանցի ռեժիսորներ Աբբաս Քիառոստամիի, Սամիրա Մախմալբաֆի, Ասդար Ֆարհադիի, Թեհմինե Միլանիի, Դարյուշ Մեհրջուիի, Ջաֆար Փանահիի ֆիլմերը ռեժիսորական յուրահատուկ հնարքներով անդրադառնում են երկրի սոցիալական, հասարակական, գենդերային ու մշակութային ամենացավոտ խնդիրներին:

Արդիականությունն Իրանում

Իրանի իսլամական հեղափոխության ընթացքում արդեն շահական Իրանը բավական առաջադիմել էր արդիականությանը համաքայլ գնալու իմաստով, ու երկրի հասարակությունը թեև բևեռացված ու ոչ ներառական, բայց տարածաշրջանի աշխարհիկ ու արդիական միտումներով ապրող հասարակություններից մեկն էր: Նորագույն տեխնոլոգիաները, նորաձևությունն ու կենցաղային պարագաները աստիճանաբար իրանցիների առօրյայի մասն էին կազմում, իսկ նավթամշակման ու միջուկային ծրագրերը մեծ թափով զարգացում էին ապրում: Ավելին՝ Իրանի Իսլամական հեղափոխությունը մարդկության պատմության առաջին հեղափոխությունն է, որում օգտագործվել են նորագույն տեխնոլոգիաներն ու, կարելի է պնդել, նաև ցանցային մոբիլիզացիայի սկզբունքները. այսօրվա Խոմեյնին, երկրից քստրված լինելով, իր ուղերձներն ու հրահանգները Փարսիցից Իրանի հասարակությանն էր հասցնում նոր տարածում գտած ձայներիգների միջոցով: Այդ ձայներիգները գաղտնի փոխանցվում էին կրոնական մի կենտրոնից մյուսը ու հավաքում էին բազմահազարանոց ունկնդիրներին:

Իսլամական հեղափոխությանն անմիջապես հաջորդեցին ԱՄՆ տնտեսական պատժամիջոցները, խզված դիվանագիտական հարաբերությունները մի շարք պետությունների հետ, Իրան-Իրաքյան ութնամյա պատերազմն ու հյուժված տնտեսությունը՝ ոչ միայն զրկված արտաքին օգնությունից, այլ նաև ներմուծվող ապրանքների հանդեպ ներքին արգելքի գաղափարական մոտեցմամբ: Դժվարին այս կացությունը Իրանի ղեկավարությանը ստիպում է կառուցել տնտեսական մի համակարգ, որ հիմնված է ինքնաբավ տնտեսության գաղափարի վրա: Այս գաղափարի շնորհիվ Իրանում ձեռնամուխ են լինում անհրաժեշտ բոլոր մշակաբույսերի աճեցմանը, անհրաժեշտ բոլոր իրերի, սարքավորումների ու տեխնիկայի արտադրությանը: Ողջ այս արտադրանքի ներքին սպառումն ապահովելու նպատակով Իրանը զուգահեռաբար որդեգրում է նաև պրոտեկցիոնիստական տնտեսական քաղաքականություն և նվազագույնի է հասցնում ներմուծված ապրանքների տեսակարար կշիռը՝ դրանց համար մեծ մաքսատուրքեր սահմանելով:

Այս քաղաքականությունն, իհարկե, իր դրական ազդեցությունն է ունեցել երկրի տնտեսական բարգավաճման ու պատժամիջոցների դիմակայելու համար անհրաժեշտ տնտեսական իմունիտետ ստեղծելու իմաստով: Բայց իրանական ապրանքների ու ծառայությունների ոչ բոլոր տեսակներն են իրենց որակով համապատասխանում միջազգային չափանիշներին. փոխադրամիջոցները, դեղորայքը, մի շարք մթերքներ և այլ ապրանքներ զգալիորեն զիջում են արևմտյան շուկաների սահմանած որակին ու չափանիշներին, բայց իրանցիները

ստիպված են օգտագործել միայն տեղական արտադրության ապրանքները: Հատկապես բժշկական ոլորտում սա մի շարք խնդիրների պատճառ է դառնում, և մի կողմից պրոտեկցիոնիստական այս քաղաքականությունը, մյուս կողմից երկրի տնտեսական պատժամիջոցներն իրենց որոշակի ազդեցությունն են ունենում մարդկանց առողջության, նրանց ճակատագրերի վրա:

Հայաստան-Իրան քաղաքական ու տնտեսական հարաբերությունները

Իրանի Իսլամական Հանրապետությունը առաջիններից մեկն է ճանաչել Հայաստանի անկախությունը՝ 1991 թ. դեկտեմբերի 25-ին: Դիվանագիտական հարաբերությունների ստեղծման պահից երկու երկրների միջև ստեղծվել են բարիդրացիական, գործընկերային հարաբերություններ: Պետք է հաշվի առնել, որ Իրանի համար երկբևեռ աշխարհի արևելյան, «փոքր չարիքը» համարվող ԽՍՀՄ-ի փլուզումն ու իր հարևանությամբ նորանկախ պետությունների ստեղծումը ավելի քան ողջունելի իրադարձություն էր: Իսլամական հեղափոխությունը տարածաշրջանի այլ երկրներում տարածելու նպատակ ունեցող երկրի համար աթեիստական այդ կայսրության երկաթե վարագույրները անցանկալի խոչընդոտ էին միլիոնավոր մուսուլմաններին նոր գաղափարախոսությունը հասցնելու ճանապարհին: Սա հատկապես մեծ ասպարեզ էր բացում միջինասիական պետությունների պարագայում: Անդրկովկասյան երեք հանրապետությունները նույնպես Իրանի համար կարևոր նշանակություն ունեին. հատկապես Ադրբեջանը՝ որպես շիայական մեծամասնությամբ երկրորդ երկիր Իրանից հետո, և Հայաստանը՝ որպես Իրանի միակ քրիստոնյա հարևան:

Դիվանագիտական հարաբերություններ ստեղծելուց անմիջապես հետո շատ ակտիվ շփումներ ու փոխայցելություններ են սկսվում ԻԻՀ-ի և ՀՀ-ի միջև: Հայաստանի իշխանություններին հաջողվում է գրագետ դիվանագիտության շնորհիվ անգամ պատերազմական տարիներին նյութական ու աշխարհաքաղաքական աջակցություն ստանալ իր հարավային հարևանից, որ հատկապես այդ տարիներին դարձել էր արտաքին աշխարհի հետ կապն ապահովող կարևոր ու ռազմավարական հարավային դարպասը: Այդ հարաբերությունները հնարավոր եղավ անսասան պահել անգամ այն բանից հետո, երբ հայկական տարածքում խոցվեց իրանցի դիվանագետներ տեղափոխող իրանական ուղղաթիռը. ծանր ու պատասխանատու բանակցություններից հետո հնարավոր եղավ ապացուցել ադրբեջանական սադրանքը: Դիվանագիտական հարաբերությունների ողջ ընթացքում հայ-իրանական հարաբերությունները պահպանել են իրենց գործընկերային բնույթն ու ռազմավարական նշանակությունը: Հայաստանն Իրանի համար կարևոր է ոչ միայն աշխարհաքաղաքական իմաստով՝ որպես Եվրոպայի հետ կապող կամուրջներից մեկը, ինչպես հաճախ բնութագրում են իրանցի քաղաքական գործիչները, այլ նաև որպես իրենց դեմ սանձազերծված հակաքարոզչության կարևոր խաղաքարտ: Արևմտյան տեղեկատվական հորձանուտում Իրանին որպես դիվական, ահաբեկչական ու հակաքրիստոնեական երկիր ներկայացնող քարոզչությանը Իրանը հաջողությամբ պատասխանում է ոչ միայն իր երկրում ապրող քրիստոնյա փոքրամասնությունների պաշտպանված իրավունքների ու պետական հոգածության տակ առնված մշակութային ու կրոնական կոթողների առկայության մասին փաստերով, այլ նաև իր քրիստոնյա հարևան Հայաստանի հետ ունեցած բարձր մակարդակի քաղաքական հարաբերություններ ունենալու հանգամանքով: Իրանի «ռեֆորմիստ» նախագահներից Մուհամմադ Խաթամիի առաջ քաշած «Քաղաքակրթությունների երկխոսություն» դրույթին անդրադառնալիս փորձագիտական հանրությունը հաճախ հայ-իրանական հարաբերությունները մատնանշում է որպես այդ երկխոսության օրինակելի փաստ: Սա հատկապես ուսումնասիրության հետաքրքիր նյութ է դառնում այն հետազոտողների համար, որոնք շիայական իսլամական փոխօգնության գաղափարի հիման վրա խարսխված Իրանի արտաքին հարաբերությունները դիտարկելիս նշում են հայ-իրանական հարաբերությունների որակը նաև Ղարաբաղյան պատերազմի ու հակամարտության ողջ ընթացքում:

Փորձագիտական հանրությունը, սակայն, հաճախ մատնանշում է այն հանգամանք, որ ի հեճուկս հայ-իրանական բարձր մակարդակի քաղաքական հարաբերությունների՝ տնտեսական ոլորտում հաջողությունների քիչ օրինակներ ունենք: Հայ-իրանական տնտեսական ծրագրերն են հայ-իրանական զագատար խողովակը, «Էլեկտրաէներգիա զագի դիմաց» փոխանակման ծրագիրը, Մեղրու ազատ տնտեսական գոտին և այլն: Ապագային միտված, բայց դեռևս ներդրումային անհրաժեշտ աղբյուրների բացակայության պատճառով միս ու արյուն չստացած ծրագրերից են Մեղրու հէկը, հայ-իրանական երկաթգիծը, եռակողմ ու քառակողմ մի շարք ծրագրեր, որոնք միտված են Պարսից Ծոց–Սև ծով կամրջի ստեղծմանը: Հայաստանի՝ ԵԱՏՄ անդամ դառնալուց հետո մի կողմից նվազել են ինքնուրույն տնտեսական քաղաքականություն վարելու հնարավորություններն ու դրանց շրջանակում հայ-իրանական տնտեսական հարաբերությունները զարգացնելու գործիքակազմը, մյուս կողմից հնարավորություն է ստեղծվել Իրանի հետ բանակցություններ վարելու նաև ԵԱՏՄ անունից ու միջոցով՝ Հայաստանը դիտարկելով որպես ԵԱՏՄ-Իրան փոխգործակցության կարևոր առանցք: Այս առանցքը հատկապես կարևոր դերակատարում է ստանձնելու ԵԱՏՄ–Իրան ազատ տնտեսական գոտի ստեղծելու մասին պայմանագիրը Իրանի ու ԵԱՏՄ անդամ պետությունների կողմից վավերացվելուց հետո:

Ընդհանուր առմամբ հայ-իրանական տնտեսական ծրագրերի ավելի լայն թափով զարգացմանը խանգարում են մի կողմից Իրանի միջուկային ծրագրով պայմանավորված տնտեսական պատժամիջոցները, մյուս կողմից այն հանգամանքը, որ Հայաստանը նոր-նոր է փորձում մեջքը շտկել հեղափոխությունից առաջ ունեցած կոռուպցիայի ու անձնական շահերի վրա խարսխված տնտեսության պատճառով:

Հայաստան-Իրան մշակութային հարաբերություններ

Իրանի Իսլամական Հանրապետության մշակույթի և իսլամական կապերի նախարարության ենթակայության տակ գործող, 80-ից ավելի երկրներում ԻԻՀ դեսպանատներին կից բացված Իրանի մշակույթի կենտրոնները փափուկ ուժի ու դրա միջոցով մշակութային ազդեցության տարածման յուրօրինակ կենտրոններ են: Մուսուլմանական երկրներում գործող այդ կենտրոններն իրենց ջանքերը դնում են Իրանում գերակա շիայական իսլամական գաղափարախոսների գրքերը, աշխատություններն ու մտքերը տարածելու վրա: Ոչ իսլամական երկրներում իսլամական մշակույթի տարածումը հասկանալիորեն վերափոխվում է մշակութային իսլամի տարածման: Երևանում գործող Իրանի մշակույթի կենտրոնի ջանքերով հայերեն են թարգմանվել իրանցի գրողների, փիլիսոփաների, կրոնական ու աշխարհիկ հեղինակների հարյուրավոր գրքեր: Կենտրոնի աջակցությամբ Հայաստանի մեկ տասնյակից ավելի հանրակրթական դպրոցներում պարսկերենը դասավանդվում է որպես օտար լեզու, գործում է նաև մեկ պարսկական դպրոց Հայաստանում ապրող իրանցիների համար:

Մշակույթի կենտրոնի աջակցությամբ ամեն տարի Իսլամական հեղափոխության տարեդարձի, ինչպես նաև հեղափոխության առաջնորդ այաթոլլահ Ռուհոլլահ Խոմեյնիի ծննդյան ու մահվան օրերի կապակցությամբ Իրանի ու իսլամի, հայ-իրանական հարաբերությունների հետ կապված այլ հիշարժան օրերի առիթներով գիտաժողովներ, կլոր սեղան-քննարկումներ ու սեմինարներ են կազմակերպվում հայաստանյան իրանագիտական ինստիտուտների ու կենտրոնների մասնակցությամբ: Հայաստանում իրանական մշակույթի հանրահռչակման կարևոր կենտրոն է նաև Երևանում գործող Կապույտ մզկիթը, որ Իրանի ինդրանքով ու ՀՀ կառավարության որոշմամբ տնօրինման է հանձնվել Իրանի Իսլամական Հանրապետությանը: Մզկիթը վերջին տարիներին հիմնանորոգվել, բարեկարգվել ու իր դռներն է բացել հայաստանաբնակ իրանցիների առջև որպես կրոնական ու մշակութային կենտրոն: Մզկիթին կից սրահում պարբերաբար կազմակերպվում են կրոնական երկխոսության, հայ-իրանական մշակութային կապերին նվիրված միջոցառումներ՝ գիտաժողովներ, ցուցահանդեսներ, մրցույթներ: Մզկիթն ունի մեծ գրադարան, մզկիթին կից

գործում է պարսից լեզվի անվճար ուսուցման լսարան: Մզկիթում կատարվում են նաև կրոնական ծեսեր շիայական առանցքային կրոնական օրերի ընթացքում, որ սպասարկում է Իրանից հրավիրյալ իմամը:

Հայկական մշակույթն Իրանում բարգավաճման, ծաղկման ու պետական հոգածության կարևոր միջավայրում է գոյատևել: Իրանում գտնվող Մուրբ Թադեի վանքը, որ բազմահազար հայ հավատացյալների համար նշանավոր ուխտավայր է, Մուրբ Ստեփանոս և Չորձոր վանքերի հետ միասին ներառված է ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության ցանկում՝ «Հայկական եկեղեցիները Իրանում» անվամբ: Իրանի՝ հայերով բնակեցված համայնքներում գործում են հայերենի ուսուցմամբ հանրակրթական դպրոցներ, Իրանում տպագրվում են հայալեզու թերթեր ու ամսագրեր, Իրանի պետական հեռուստաընկերության համացանցային տարբերակն ունի հայերեն հաղորդումների բաժին:

Իրանցիները՝ որպես Հայաստան այցելող զբոսաշրջիկներ

Վերջին տասնամյակում Հայաստան այցելող զբոսաշրջիկների թվում մեծ թիվ են կազմում իրանցիները. նրանք հատկապես մեծ խմբերով այցելում են մարտ ամսին՝ գիշերահավասարի օրը՝ նշելու հին իրանական Նովրուզ տոնը: Նովրուզը զբաղաշտական արմատներով իրանական այն տոներից է, որ պահպանվել է իրանական մշակույթում նաև իսլամի ընդունումից հետո: Գարնանային գիշերահավասարին նշվող իրանական Նովրուզը իրանցիները համարում են իրանական տոմարով նոր տարվա սկիզբ, որ խորհրդանշում է նաև նոր կյանքի, նոր հույսերի ու նոր ձեռքբերումների հնարավորություն: Որպեսզի ակնկալվող այդ նոր փոփոխությունները լիովին ներկա լինեն եկող տարում, իրանցիները տարին դիմավորում են խորհրդանշական «Հաֆթ սին» (յոթ «սին») կոչվող սեղանով, որի վրա «սին»՝ «ս» տառով սկսվող յոթ պարտադիր տարր են դնում՝ նորածիլ կանաչեղեն, ածիկ, փշատ, սխտոր, խնձոր, սումախ և քացախ (սրանք բոլորը պարսկերենում «ս» տառով են սկսվում): Տոնական սեղանին ընդունված է դնել նաև ոսկե ձկնիկներ՝ ջրի մեջ, հիլիկ, հայելի, ներկած ձու, գիրք՝ հաճախ Ղուրան՝ մուսուլմանական ընտանիքներում, Ավեստա՝ զբաղաշատական ընտանիքներում կամ սուրբ այլ գիրք, ինչպես նաև Հաֆեզի «Դիվանը»՝ դազալների ժողովածուն, Ֆիրդուսիի «Շահնամեն» և այլն: Նովրուզին, ինչպես տարածաշրջանի՝ տարեմուտը խորհրդանշող այլ տոներին, ընդունված է այցելել բարեկամներին ու հարազատներին, միասին ժամանակ անցկացնել, սեղան նստել ու բարեմաղթանքներ ասել միմյանց: Տարեմուտի այդ տոնին, սակայն, ընդունված է նաև ճամփորդել՝ բացահայտել նորանոր վայրեր: Այս տոնի առիթով սահմանված արձակուրդները հնարավորություն են տալիս իրանցիներին նաև երկար ժամանակով բացակայելու ոչ միայն տնից, այլև երկրից: Հայաստանը դառնում է Նովրուզ տոնող իրանցիների համար գրավիչ մի քանի պատճառներով՝ Իրանից ու հատկապես նրա հյուսիսային նահանգներից ոչ հեռու գտնվելը, ազատ միջավայրը, ժամանցի ժամանակակից վայրերն ու բարենպաստ կլիման: Իրանցիների՝ դեպի Հայաստան հոսքին նպաստում են նաև իրանցի վտարանդի երգիչ-երգչուհիների՝ Երևանում կազմակերպված համերգները. Իսլամական հեղափոխությունից հետո երկրում արգելված «փոփ» ոճի երաժշտությունը շարունակում է հանրաճանաչ լինել իրանցիների շրջանում, իսկ այդ ժանրի՝ ԱՄՆ-ում բնակվող աստղերը, Իրանում համերգ ունենալու հնարավորությունից զրկված լինելով, հաճույքով գալիս են Երևան՝ իրենց իրանցի երկրպագուներին հանդիպելու:

Հայկական համայնքն Իրանում

Հայկական համայնքն Իրանում մեծապես ձևավորվել է 17-րդ դարի սկզբին Սեֆյան Շահ Աբբասի մեծ բռնագաղթի հետևանքով: Սպահանի մոտակայքում հաստատված ու հետագայում Նոր Ջուղա բնակավայրը կառուցած հայերն Իրանում բռնագաղթի առաջին իսկ օրերից առանձնահատուկ ուշադրության ու վերաբերմունքի են արժանացել իրանցի ղեկավարների կողմից: Քանի որ Շահ Աբբասի նպատակը հայերի միջոցով Եվրոպայի հետ

առևտրային ու մշակութային կապեր հաստատելն էր, նա ջանում էր պարարտ հող ստեղծել, որպեսզի հայերն Իրանում իրենց երկրորդ տունը կառուցեն ու հաջողությունների հասնեն այն բնագավառներում, որոնցում զբաղված էին՝ առևտուր, արտադրություն, նաև գրատպություն ու եկեղեցաշինություն: Իր գոյության չորսդարյա պատմության ընթացքում հայկական համայնքը կարողացել է պահպանել իր լեզուն, մշակութային առանձնահատկությունները, կրոնական ծեսերի հանդեպ հոգատար վերաբերմունքն ու ավանդական հայկական սովորույթները: Համայնքում գերիշխող ավանդական հայացքները միջազգային ու միջկրոնական ամուսնությունների հանդեպ հնարավորություն են տվել գրեթե բացառելու ուժացման դեպքերը:

Հայկական համայնքը Իրանում ազնիվ, աշխատասեր ու օրինապաշտ քաղաքացիների համայնքի համբավ ունի, իսկ հայերն Իրանում զուգորդվում են քրիստոնեության հետ. հաճախ մյուս քրիստոնյաներին նույնպես հայ են անվանում, այսպես, Իրանում կարելի է լսել՝ հայ գերմանացի, հայ ֆրանսիացի և այլն:

Իրանահայերը ակտիվ մասնակցություն ունեն Իրանի հասարակական-մշակութային կյանքում, իսկ քաղաքական կյանքին մասնակցում են՝ օգտվելով իրենց վերապահված քվոտաներից. ընտրվում են Մաջլեսի պատգամավոր, մասնակցում համայնքային ու համահայկական մարմինների գործունեությանը: Քաղաքական ու պետական մյուս օղակների համար անհրաժեշտ մուսուլմանական ինքնության բացակայությունը թույլ չի տալիս ունենալ հայկական ներգրավվածություն նաև այդ ոլորտներում: Իրանահայերին նվիրված Ժանետ Տ. Լազարյանի «Իրանահայոց հանրագիտարան» աշխատության միջոցով կարելի է ծանոթանալ հարյուրավոր նշանավոր իրանահայերի կենսագրությունների, որոնք հաջողությունների են հասել բժշկության, աստղաֆիզիկայի, ճարտարապետության ու մշակույթի բնագավառներում: Առաջին իրանցի կին աստղաֆիզիկոս Ալենուշ Տերյանը, կոմպոզիտոր Լորիս Ճգնավորյանը, գրող Ջոյա Փիրզադը և շատ ուրիշներ այդ ցանկի առանցքային դեմքերից են:

2. Հայ-արաբական առնչություններ. երկկողմ դիվանագիտական հարաբերություններ և «փափուկ ուժ»

7-րդ դարում դեպի Հայաստան արաբական արշավանքներից մինչ օրս մենք անընդհատ շփման մեջ ենք արաբների, իսլամադավան ժողովուրդների և պետությունների հետ: Այդ շփումների արդյունքում հայ-արաբական հարաբերություններում առկա են պատմական, մշակութային, լեզվական, առևտրային, տնտեսական, քաղաքական փոխազդեցության և փոխներթափանցման բազմաթիվ դրսևորումներ: Հայ-արաբական հարաբերությունների բնական զարգացումն ի սկզբանե պայմանավորված է եղել հայերի՝ Արաբական խալիֆայության, ապա արաբների հետ Օսմանյան կայսրության կազմում ապրելու հետ: Այժմ ՀՀ-ն արաբական երկու տասնյակից ավելի պետությունների հետ ունի բազմակողմ հարաբերություններ և տարատեսակ շփումներ: Հաշվի առնելով արաբական երկրների կարևորությունը մեր տարածաշրջանի համար՝ ձեռնարկի այս բաժնում տեղեկություններ կհաղորդվեն արաբական երկրներում հայկական համայնքների, հայ-արաբական երկկողմ հարաբերությունների և այդ երկրների՝ տարաբնույթ հիմնադրամների և դեսպանատների միջոցով ՀՀ-ում իրականացվող ծրագրերի մասին:

Ձեռնարկում արաբական երկրներ ասելով նկատի են առնվում Հյուսիսային Աֆրիկայի, Առաջավոր Ասիայի և Արաբական թերակղզու տարածքում գտնվող, Արաբական պետությունների լիզա կազմակերպության անդամ 22 պետությունները, որոնց պաշտոնական լեզուն արաբերենն է: Դրանք են՝ Սիրիա, Լիբանան, Իրաք, Հորդանան, Պաղեստին, Եգիպտոս, Քուվեյթ, ԱՄԷ, Կատար, Բահրեյն, Օման, Եմեն, Սաուդյան Արաբիա, Ալժիր, Սուդան, Մարոկկո, Թունիս, Մոմալի, Լիբիա, Մավրիտանիա, Ջիբութի, Կոմորյան կղզիներ (տե՛ս Հավելված 1):

Հայկական համայնքներն արաբական երկրներում

Արաբական երկրների հայկական համայնքներն իրենց ծագման պատմությամբ և ժամանակագրությամբ տարբերվում են միմյանցից և հատկապես ՀՀ անկախությունից հետո շոշափելի դերակատարություն են ունեցել և ունեն մեր երկրի և արաբական մի շարք պետությունների հետ հարաբերությունների կայացման և զարգացման գործում: Հնագույն ժամանակներից հայկական ավանդական համայնքներ են գործել ժամանակակից Սիրիայում, Լիբանանում, Հորդանանում, Եգիպտոսում, Իրաքում, իսկ ավելի ուշ հայերը հաստատվել են նաև Ծոցի տարածաշրջանի երկրներում, մասնավորապես Քուվեյթում և Արաբական Միացյալ Էմիրություններում: Հայերի ներկայության հաստատումն արաբական աշխարհում ընդունված է բաժանել երկու շրջանի՝ մինչև ցեղասպանությունը և դրանից հետո: Որպես մի նոր շրջան առանձնանում է նաև հայկական ավանդական համայնքների վերարտադրության և աշխատանքային միգրացիայի միջոցով Պարսից ծոցի¹ տարածաշրջանում հայկական նոր համայնքների ձևավորումը:

Հայերը արաբական աշխարհի երկրներում բնակություն են հաստատել մ.թ.ա. 1-ին դարում: Պատմաաշխարհագրական Սիրիայի տարածքում (Բիլադ ալ-Շամ, ընդգրկում է ներկայիս Սիրիան, Պաղեստինի որոշ հատվածներ, Իսրայելի տարածքը, Լիբանանի լեռնային հատվածները) հայերը հաստատվել են դեռևս Տիգրան Մեծի օրոք, երբ Ասորիքի մեծ մասն ընդգրկվել է հայկական պետականության կազմում, ինչն ուղեկցվել է հայերի զանգվածային տեղափոխությամբ Ասորիք և դրան հարող փյունիկյան տարածքներ: 7-րդ դարում Հայաստանում արաբական տիրապետության հաստատման, ավելի ուշ՝ 9-11-րդ դարերում

¹ Իրանի և Արաբական թերակղզու միջև գտնվող ծոցը հնագույն ժամանակներից հայտնի է Պարսից ծոց անվամբ, թեև 1960-ական թվականներից Ծոցի արաբական երկրները սկսեցին կոչել այն Արաբական ծոց:

Բյուզանդական կայսրության կողմից Հյուսիսային Սիրիա զգալի թվով հայեր գաղթեցնելու, Բագրատունիների թագավորության անկման, սելջուկյան թուրքերի ասպատակությունների, ինչպես նաև Կիլիկիայի հայկական պետության անկման հետևանքով հայերի թիվը Սիրիայի տարածքում աճել է:

Լիբանանում հայկական համայնքի ձևավորումն ընթացել է Սիրիայում հայերի հաստատման ուղիով՝ պայմանավորված միևնույն՝ Բիլադ ալ-Շամի տարածաշրջանում գտնվելու հանգամանքով: Ժամանակակից Հորդանանում ևս հայերը բնակվել են վաղնջական ժամանակներից, հայերի թիվը ստվարացել է խաչակիրների շրջանում, սակայն որպես համայնք ձևավորվել է միայն 20-րդ դարում:

Մ.թ.ա. 83 թ. Մոսուլի գրավումը Տիգրան Մեծի կողմից կարող է վկայել ժամանակակից Իրաքում առաջին հայերի հաստատման մասին, սակայն համայնքի ձևավորումը թվագրվում է միայն Արքայան խալիֆայության շրջանին (8-13-րդ դդ.): Իրաքահայ համայնքը մեծացել է 19-րդ դ. վերջին Արևելյան և Արևմտյան Հայաստանից, ինչպես և Պարսկաստանից գաղթած մեծ թվով հայերի և հատկապես հայոց ցեղասպանությունից հետո արհավիրքից փրկված հայերի միջոցով:

Ըստ պատմական տեղեկությունների՝ Եգիպտոսում հայերը բնակվել են փարավոնյան երրորդ դինաստիայի ժամանակներից, նրանց թիվը զգալիորեն ավելացել է հատկապես Ֆարֆայանների (10-12-րդ դդ.) իշխանության օրոք, ապա՝ Մուհամմադ Ալիի կառավարման շրջանում՝ հասնելով շուրջ 12000-ի:

Վերոնշյալ արաբական երկրներում հայկական ներկայությունը համալրվել և արդեն կազմակերպված համայնքային գործունեության է ձևափոխվել 1915 թ. հայոց ցեղասպանությունից հետո, երբ այս երկրները ապաստան տվեցին հայերին:

Օոցի արաբական երկրների հայկական համայնքները ձևավորվել են համեմատաբար ուշ՝ պայմանավորված այստեղ միայն 1950-ական թվականներին նավթարդյունաբերության զարգացման և աշխատանքի հնարավորությունների ստեղծման հետ: Միևնույն ժամանակ Մերձավոր Արևելքի տարածաշրջանում ընդհանուր լարվածության, Լիբանանում 1975-1990 թթ. քաղաքացիական պատերազմի, Իրանի Իսլամական հեղափոխության (1979), Իրան-իրաքյան պատերազմի (1980-1988) հետևանքով ևս Մերձավոր Արևելքից հայերի մեծ հոսք սկսվեց Արաբական թերակղզու երկրներ:

Օոցի երկրներից հայերն առաջինը հաստատվել են Քուվեյթում՝ այստեղ գալով Իրաքից, Իրանից, Լիբանանից, Սիրիայից, Պաղեստինից և Հորդանանից: Համայնքի ձևավորման սկիզբը համարվում է առաջին համայնքային կառույցի՝ Ազգային վարչության ստեղծումը 1954 թ.: ԱՄԷ-ում ևս հայերը հաստատվել են դեռևս նախորդ դարի 60-ական թվականներին, 1975-1980-ական թվականներին նրանց թիվը աճել է՝ դարձյալ Լիբանանից, Սիրիայից և Իրանից տեղափոխված հայերի հաշվին: Այս երկու երկրներում արդեն նախորդ դարի վերջին կային կայացած համայնքային կառույցներ: Այժմ նկատելի է հայերի թվի աճ և համայնքային կառույցների ստեղծման միտում նաև Կատարում:

Օոցի տարածաշրջանի մյուս երկրներում՝ Սաուդյան Արաբիայում, Բահրեյնում, Օմանում, ինչպես նաև Հյուսիսային Աֆրիկայի արաբական երկրներում հայերի ներկայությունը փոքրաթիվ է:

Համայնքների կարգավիճակն ու ղեկավար մարմինները: Մերձավոր և Միջին Արևելքի երկրներում հայկական համայնքները դիտարկվում են որպես կրոնական փոքրամասնություն, ուստի ղեկավարվում են հոգևոր-կրոնական իշխանության կողմից: 1924 թ. Սիրիայում բնակվող հայերը ստացել են քաղաքացիություն՝ միևնույն ժամանակ հնարավորություն ստանալով մասնակցելու ընտրություններին: Համայնքը ղեկավարվում է

հոգևոր-կրոնական իշխանության կողմից, որն ունի նաև դատական ու իրավական որոշ գործառնություններ (հաստատված է Սիրիայի արդարադատության նախարարության կողմից):

Եգիպտահայ ոչ այնքան մեծաթիվ համայնքը 1946 թ-ից ունի կրոնական համայնքի իրավաբանական կարգավիճակի պետական վավերացում: Համայնքային օրենսդիր մարմինը Եգիպտահայ թեմական ժողովի համագումարն է (Կահիրեի և Ալեքսանդրիայի թեմական ժողովներ): Այժմ համայնքը ղեկավարվում է թեմական (օրենսդիր) ժողովների, դրանց անդամների կողմից ընտրված քաղաքական ժողովների (գործադիր), թեմական առաջնորդի և հայ կաթողիկե թեմի առաջնորդների միջոցով:

Իրաքահայ համայնքի բարձրագույն ղեկավար մարմինը թեմական խորհրդի ընտրած Ազգային կենտրոնական վարչությունն է (կենտրոնը՝ Բաղդադ), որին հաշվետու են Մոսուլի, Քիրքուքի և Բասրայի թաղական խորհուրդները:

Քուվեյթի հայկական համայնքը 1962 թ. ստացել է օրինական կրոնական համայնքի կարգավիճակ և վկայագիր. այս վկայագրով շնորհված աղոթատեղի ունենալու իրավունքով 1963 թ. Քուվեյթում բացվել է միակ հայկական եկեղեցին: 1996 թ-ից ԱՄԷ-ում բնակվող հայերը ևս ճանաչվել են որպես կրոնական համայնք և ստացել ազգային եկեղեցական հաստատություններ ստեղծելու հնարավորություն: Համայնքի բարձրագույն և օրենսդիր կառույցը թեմական մարմինն է, իսկ գործադիր մարմինները տեղերում ձևավորվող ազգային վարչություններն են:

Ի տարբերություն Սիրիայի և Լիբանանի՝ Օոցի երկրներում բնակվող հայերը տվյալ երկրի քաղաքացիություն ստանալ չեն կարող: Համաձայն այս երկրների քաղաքացիության մասին օրենքի՝ այլ ազգությունները, այդ թվում հայերը, կարող են ունենալ միայն ժամանակավոր կացության և աշխատանքի իրավունք:

Կուսակցություններ: Մերձավոր Արևելքի գրեթե բոլոր երկրներում, որտեղ առկա են հայկական համայնքներ՝ առնվազն հայոց ցեղասպանությունից հետո ձևավորված, գործում են հայկական ավանդական երեք կուսակցությունները՝ Հայ հեղափոխական դաշնակցությունը (ՀՅԴ), Ռամկավար ազատական կուսակցությունը (ՌԱԿ) և Մոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցությունը (ՄԴՀԿ): Դրանք, սակայն, գործունեության տարբեր դրսևորումներ ունեն արաբական երկրներում՝ պայմանավորված այդ երկրների քաղաքական համակարգի առանձնահատկություններով:

Սիրիայում հայկական կուսակցությունների գործունեությունն արտոնված չէ, սակայն հայերը կարող են քաղաքականությամբ զբաղվել: 1971 թ-ից մինչ օրս հայ պատգամավորները ներկայացվածություն ունեն Սիրիայի խորհրդարանում: Այժմ Սիրիայի խորհրդարանում 250 պատգամավորների թվում են նաև երկու հայ պատգամավոր, Հալեպի և Լաթաքիայի տեղական ինքնակառավարման մարմիններում ևս հայեր կան:

Հայերն առավել ակտիվ մասնակցում են Լիբանանի քաղաքական կյանքին: Լիբանանահայերը կարող են մասնակցել Լիբանանի ներքաղաքական կյանքին՝ որպես կրոնադավանական համայնքներից մեկի ներկայացուցիչներ: Մինևույն ժամանակ Լիբանանի քաղաքացիություն ունեցող ազգությամբ հայ գործիչները կարող են քաղաքական գործունեություն ծավալել այդ երկրի այս կամ այն քաղաքական ուժի շրջանակում՝ զբաղեցնելով քաղաքական պաշտոններ կամ լինելով պետական ծառայության մեջ: Այժմ Լիբանանի 30 նախարարներից բաղկացած կառավարության կազմում երկու հայ նախարար կա (զբոսաշրջության և սոցիալական հարցերի): Այստեղ, ի տարբերություն Սիրիայի, պատգամավորները կարող են առաջադրվել հենց հայկական կուսակցությունների ցուցակներով: Վերջին ընտրությունների արդյունքներով Լիբանանի 128 պատգամավորներից բաղկացած խորհրդարանում 5 հայ պատգամավոր կա:

Իրաքում հայ ազգային քաղաքական կուսակցությունների գործունեությունն արգելված է: Համայնքի ազգային կյանքը կազմակերպում են կրոնական, բարեգործական, մշակութային, մարզական, երիտասարդական կազմակերպությունները:

Եզիպտոսում և Հորդանանում ևս հայ ազգային կուսակցությունները չունեն պետական գրանցում, այլ գործում են իրենց ենթակա մշակութային և մարզական միությունների, ինչպես նաև մամուլի միջոցով:

Հոգևոր կյանք: Արաբական երկրների հայկական համայնքները բաժանված են կրոնադավանական երեք համայնքների՝ առաքելականներ, կաթոլիկներ, ավետարանականներ: Այս բոլոր համայնքների կենտրոնական ղեկավար կառույցները Լիբանանում են. դրանք են Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունը (Անթիլիաս), Հայ Կաթողիկե պատրիարքարանը (Զմմառ), Մերձավոր Արևելքի Հայ ավետարանական եկեղեցիների միությունը (Բեյրութ. ներառում է տարածաշրջանի 6 երկրների՝ Թուրքիայի, Իրանի, Իրաքի, Սիրիայի, Լիբանանի, Եզիպտոսի, ինչպես նաև Հունաստանի և Ավստրալիայի հայ ավետարանական համայնքները):

Սիրիայում հայ առաքելական եկեղեցին ունի երկու թեմ՝ Բերիո, որ ենթակա է Անթիլիասին, և Դամասկոսի, որ ենթակա է Էջմիածնին: Սիրիայի հայ կաթողիկեներն ունեն առաջնորդարաններ Դամասկոսում և Հալեպում, իսկ հայ ավետարանականները՝ համայնքապետություն Հալեպում:

Իրաքի հայոց թեմը ևս Էջմիածնական է և ունի 9 եկեղեցի:

Եզիպտոսում կա հայ առաքելական 5, հայ կաթողիկե 3 և հայ ավետարանական 1 եկեղեցի:

Քուվեյթի, Կատարի, Արաբական Միացյալ Էմիրությունների և Բահրեյնի հայ համայնքները Քուվեյթի և Արաբական ծոցի թեմի կազմում են: Քուվեյթում և ԱՄԷ-ում կաթոլիկ և ավետարանական կառույցներ չկան, ուստի այդ եկեղեցիների հետևորդներն այցելում են առաքելական եկեղեցի:

Կրթական կյանք: Արաբական երկրների հայկական դպրոցները տվյալ երկրների կրթական համակարգի կազմում են և իրականացնում են պետական համակարգով ուսուցում՝ հայագիտական անհրաժեշտ առարկաների դասավանդմամբ: Այժմ հայկական ամենօրյա դպրոցներ կան Սիրիայում, Լիբանանում, Քուվեյթում, Իրաքում, իսկ Կատարում, Շարժա-Դուբայում և Աբու Դաբիում գործում են մեկօրյա վարժարաններ: Արաբական երկրներում կան հայկական գիտահետազոտական կառույցներ: Դրանցից հատկապես հայտնի են Կահիրեի համալսարանի Հայագիտական կենտրոնը և Բեյրութում գործող Հայկազյան համալսարանը:

Հայագիտական կենտրոնը բացվել է 2007 թ. Եզիպտոսում ՀՀ դեսպանության ջանքերի շնորհիվ Կահիրեի համալսարանի (ԿՀ) բանասիրության ֆակուլտետում: Գործունեության մի քանի տարիների ընթացքում կենտրոնում կազմակերպվել է չորս միջազգային համաժողով, տպագրվել են հայագիտական մեծաքանակ աշխատություններ արաբերենով: Կենտրոնում անցկացվում են հայոց լեզվի և պատմության դասընթացներ:

Համազգային նշանակությունից զատ միջազգային կրթական հաստատության կարգավիճակ ունի Լիբանանի Հայկազյան համալսարանը (1955 թ-ից՝ Հայկազյան քոլեջ, 1996 թ-ից՝ համալսարան): Այստեղ ուսանում են աշխարհի ավելի քան 20 երկրների քաղաքացիներ: Համալսարանի Հայկազյան հայագիտական հանդեսը բարձր հեղինակություն վայելող հայագիտական պարբերականներից է:

Արաբական երկրների հայկական համայնքներում կան նաև մշակութային, մարզական, երիտասարդական տարբեր ակումբներ և միություններ:

Հայերի թիվն արաբական երկրներում: Արաբական երկրներում ապրող հայերի թիվն վերաբերյալ աղբյուրներում հանդիպում են տարբեր, երբեմն միմյանց հակասող տվյալներ: Մերձավորարևելյան տարածաշրջանի քաղաքական տարբեր իրադարձությունների և ճգնաժամերի արդյունքում այստեղ բնակվող հայերի թիվը անընդհատ փոփոխվել է: Սիրիայում և Իրաքում քաղաքական անկայունության, Լիբանանի քաղաքացիական պատերազմի և երկար տարիներ պաշտոնական մարդահամար չանցկացնելու, Քուվեյթում և ԱՄԷ-ում աշխատանքային միգրանտների պարբերական ներգաղթի և արտագաղթի պայմաններում հայերի թիվն վերաբերյալ ստույգ տվյալներ ներկայացնել հնարավոր չէ:

Ներկայում Եգիպտոսում բնակվում է մոտ 6000 հայ, որոնք կենտրոնացած են Եգիպտոսի երկու խոշոր քաղաքներում՝ Կահիրեում (4000) ու Ալեքսանդրիայում (2000), Քուվեյթում ապրում է շուրջ 5000 հայ (մեծ մասն ապրում է մայրաքաղաքում), ԱՄԷ-ում ևս՝ 5000: Իրաքում բնակվող հայերի թիվը վերջին տվյալներով 13000 է, լիբանանահայերինը՝ 140000-150000:

Տարբեր տվյալների համաձայն՝ նախքան Սիրիայում պատերազմական գործողությունների մեկնարկն այստեղ բնակվող հայերի թիվը 120000-150000-ի էր հասնում: Այժմ հայ բնակչության թիվն վերաբերյալ ստույգ տեղեկություններ չկան:

Երկրորդ դիվանագիտական հարաբերություններ

Հայաստանի Հանրապետությունը մշտապես հաշվի է առնում Մերձավոր Արևելքի և Օղջի արաբական երկրների հետ հարաբերություններն արտաքին քաղաքականության օրակարգ մշակելիս: Մերձավոր Արևելքի երկրների հետ փոխգործակցության ընդլայնման կարևորությունն ամրագրված է ՀՀ Ազգային անվտանգության հայեցակարգում² և ՀՀ կառավարության ծրագրի³ արտաքին քաղաքականության ուղենիշներում:

ՀՀ անկախության հռչակումից հետո երկրի արտաքին քաղաքականության առանցքում մեծ ուշադրություն հատկացվեց արաբական երկրների հետ հարաբերությունների հաստատմանը և հետագա ընդլայնմանը: 1992 թ. դիվանագիտական հարաբերություններ հաստատվեցին Եգիպտոսի, Սիրիայի, Լիբանանի, Մարոկկոյի, Սուդանի, Օմանի և Ալժիրի, 1994 թ. Քուվեյթի, 1996 թ. Հորդանանի և Բահրեյնի, 1997 թ. Կատարի, 1998 թ. ԱՄԷ-ի, 2000 թ. Իրաքի և Լիբիայի, 2001 թ. Սոմալիի, 2002 թ. Թունիսի, 2008 թ. Մավրիտանիայի, Կոմորյան կղզիների հետ: Ջիբութիի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատվել են միայն 2019 թ. մայիսին: Մինչ օրս ՀՀ-ն դիվանագիտական հարաբերություններ չունի արաբական երկրներից Սաուդյան Արաբիայի և Եմենի հետ:

Արտաքին գործերի նախարարությունում այժմ գործում է Միջին Արևելքի և Աֆրիկայի վարչությունը, որի կազմում ներառված երկու՝ Մերձավոր Արևելքի և Հյուսիսային Աֆրիկայի ու Արաբական թերակղզու բաժինները զբաղվում են արաբական երկրների հետ փոխառնչություններով:

Արաբական երկրների հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատումն ուղեկցվեց երկուստեք դիվանագիտական ներկայացուցչությունների՝ դեսպանատների և հյուպատոսությունների բացմամբ: Դրանք առաջին հերթին բացվեցին հայկական սովորական համայնքներ ունեցող երկրներում: Հարկ է նշել, որ միջպետական հարաբերությունների ամրապնդմանն ուղղված՝ դեսպանատների և հյուպատոսությունների հիմնման գործընթացն այժմ էլ շարունակվում է:

² ՀՀ ազգային անվտանգության հայեցակարգ, [առցանց] հասանելի է <https://www.mfa.am/filemanager/Statics/Doctrinarm.pdf> [մուտք. 30 օգոստ., 2019]:

³ ՀՀ կառավարության ծրագիր 2019, [առցանց] հասանելի է՝ <https://www.gov.am/files/docs/3133.pdf> [մուտք. 30 օգոստ., 2019]:

ՀՀ-ն արաբական երկրներից առաջինը դիվանագիտական ներկայացուցչություն բացեց Եգիպտոսի մայրաքաղաք Կահիրեում 1992 թ. սեպտեմբերին: Եգիպտոսում ՀՀ դեսպանը միաժամանակ հավատարմագրվում է Լիբիայում, Եթովպիայում և Ալժիրում, ինչպես նաև Արաբական պետությունների լիգայում որպես ՀՀ լիազոր ներկայացուցիչ: Հս. Աֆրիկայի արաբական երկրներից Եգիպտոսը միակն է, որտեղ Հայաստանն ունի դեսպանություն: Համայնքը, Կահիրեի ազգային առաջնորդարանը, ՀԲԸՄ-ն ու եգիպտահայ համայնքի անհատ ներկայացուցիչներ զգալի դերակատարում են ունեցել դեսպանության հաստատման հարցում: 1993 թ-ից գործում է նաև Եգիպտոսի դեսպանատունը
Հայաստանում: Հայաստանի Հանրապետությունում Եգիպտոսի դեսպանը մինևույն ժամանակ հավատարմագրվում է Վրաստանում:

Միրիայում ՀՀ-ի դեսպանատունը բացվել է 1992 թ. նոյեմբերին: 1993 թ. փետրվարից Միրիայի Հալեպ քաղաքում գործում է ՀՀ գլխավոր հյուպատոսությունը, իսկ 2010 թ. Դեյր Զորում բացվում է նաև ՀՀ պատվո հյուպատոսությունը:

Միրիայի դեսպանությունը Հայաստանում հիմնվել է 1997 թ. սեպտեմբերին: ՀՀ-ն միակ պետությունն էր աշխարհում, որի դեսպանությունն ու հյուպատոսությունը շարունակեցին անխափան գործել Միրիայում պատերազմի ողջ ընթացքում:

Լիբանանում Հայաստանի Հանրապետության դեսպանությունը հիմնադրվել է 1994 թ. հունիսին: Հայաստանում Լիբանանի դեսպանությունը հիմնվել է 1997 թ. սեպտեմբերին:

Ի տարբերություն Միրիայի և Լիբանանի՝ նույն տարածաշրջանում գտնվող Իրաքի հետ ՀՀ դիվանագիտական հարաբերությունները հաստատվել են միայն 2000 թ.: Նույն տարում Բաղդադում բացվել է ՀՀ դեսպանությունը, իսկ 2001 թ-ից Երևանում գործում է Իրաքի Հանրապետության դեսպանատունը: 2003 թ. Իրաքում սկսված պատերազմի հետևանքով երկու երկրների դեսպանություններն ընդհատեցին իրենց գործունեությունը: 2010 թ. հոկտեմբերից Հայաստանը վերաբացեց իր դեսպանությունն Իրաքում, իսկ 2012 թ. վերաբացվեց Իրաքի դեսպանությունը Երևանում:

Արաբական Միացյալ Էմիրություններում ՀՀ-ի դեսպանությունը հիմնադրվել է 2012 թ. մարտին: 2015 թ. փետրվարին ՀՀ-ում հիմնադրվել է ԱՄԷ դեսպանությունը:

Արաբական երկրներից միայն չորսում՝ Միրիայում, Հորդանանում, Արաբական Միացյալ Էմիրություններում և Մարոկկոյում, ՀՀ-ն ունի նաև հյուպատոսություններ, իսկ Օմանն ու Սարոկկոն Հայաստանում ունեն պատվո հյուպատոսների գրասենյակներ:

2019 թ. ՀՀ կառավարությունը որոշում է կայացրել դեսպանություն հիմնել Կատարում (նստավայրը՝ Դոհա): Կատարի պետությունը պատրաստակամություն է հայտնել տարածք և որոշակի ֆինանսական միջոցներ տրամադրելու Հայաստանի Հանրապետության դեսպանության համար:

Արաբա-մուսուլմանական միջազգային կազմակերպությունները և Հայաստանի Հանրապետությունը

Հայ-արաբական հարաբերությունների զարգացմանը նպաստում է ինչպես առանձին երկրների հետ համագործակցության ընդլայնումը, այնպես էլ միջազգային, համաարաբական և համամուսուլմանական կազմակերպությունների շրջանակում ծավալվող գործունեությունը: Այս ձեռնարկում անդրադառնալու ենք դրանցից երկուսին՝ Արաբական պետությունների լիգային և Իսլամական համագործակցություն կազմակերպությանը:

Արաբական պետությունների լիգա



Արաբական պետությունների լիգան (ԱՊԼ) ստեղծվել է Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո՝ 1945 թ.: Այն տարածաշրջանային քաղաքական կազմակերպություն է, որի նպատակն է պաշտպանել արաբական երկրների շահերը: ԱՊԼ-ի հետ ՀՀ-ի հարաբերությունների ամրապնդման հարցում մեծ դերակատարում ունի Եգիպտոսում (Կահիրեում) ԱՊԼ կենտրոնական գրասենյակի տեղակալվածությունը, որտեղ էլ 1992 թ. հոկտեմբերից գործում էր ՀՀ դեսպանությունը: Համաարաբական այս կառույցում Հայաստանը ձեռք է բերել ԱՊԼ դիտորդի կարգավիճակ:

2005 թ. հունվարին Եգիպտոսում ՀՀ դեսպանի ջանքերով ՀՀ ԱԳՆ և ԱՊԼ Գլխավոր քարտուղարության միջև կնքվել է առաջին փաստաթուղթը՝ փոխըմբռնման հուշագիրը, որով նախատեսվում էր կողմերի միջև քաղաքական պարբերական խորհրդակցությունների անցկացում, գիտական, կրթական, մշակութային և այլ բնագավառներում համագործակցություն: 2008 թ. մարտի 5-ին Արաբական պետությունների լիգայի նախարարների խորհուրդը համաձայնություն սովեց ԱՊԼ-ում ՀՀ ներկայացուցիչ ունենալուն, և արդեն հունիսի 20-ից ՀՀ նախագահի հրամանով Եգիպտոսում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպանը համատեղության կարգով նշանակվեց ԱՊԼ-ում Հայաստանի Հանրապետության լիազոր ներկայացուցիչ՝ իրավունք ստանալով ներկա լինելու ԱՊԼ զագաթաժողովներին (առանց ձայնի իրավունքի), մասնակցելու ԱՊԼ բոլոր բաց քննարկումներին, շրջանառելու ՀՀ պաշտոնական հայտագրեր ու փաստաթղթեր:

ԱՊԼ-ի գործունեության շրջանակում 2014 թ. մայիսին տեղի ունեցավ Միջին Ասիայի և Ադրբեջանի Հանրապետության հետ Արաբական տնտեսական համագործակցության ֆորումի առաջին հանդիպումը: Հանդիպմանը մասնակից արաբական երկրների, ինչպես նաև Ադրբեջանի, Թուրքմենստանի, Տաջիկստանի, Ղրղզստանի և Ղազախստանի տնտեսության, ֆինանսների և արտաքին գործերի նախարարները հաստատեցին Հայաստանի և Ադրբեջանի միջև Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ ճանապարհով կարգավորման անհրաժեշտությունը ինքնիշխանության և տարածքային ամբողջականության սկզբունքի հիման վրա և համաձայն ՄԱԿ-ի բանաձևերի:

Նշենք, որ նույն տեքստը տեղ գտավ 2017 թ. հոկտեմբերի 16-ի նույն ֆորումի երկրորդ նստաշրջանի արդյունքում ընդունված Դուշանբեի հռչակագրում, որի ժամանակ մասնակիցները քննարկել են տարածաշրջանային և միջազգային համատեղ հետաքրքրություն առաջացնող քաղաքական խնդիրները, որոնց թվում Արցախի հարցը, և ոչ հայանպաստ որևէ ձևակերպում տեղ չի գտել ամրագրված փաստաթղթում:

Իսլամական համագործակցություն կազմակերպություն (ԻՀԿ)



Իսլամական համագործակցություն կազմակերպությունը (մինչև 2011 թ. հունիսի 28-ը՝ Իսլամական կոնֆերանս կազմակերպություն) հիմնադրվել է 1969 թ. սեպտեմբերի 25-ին Ռաբաթում (Մարոկկո) իսլամական 24 երկրների ղեկավարների կոնֆերանսում՝ Սաուդյան Արաբիայի նախաձեռնությամբ: Ի տարբերություն Արաբական պետությունների լիգայի, որ ստեղծված է համաարաբական շահերի պաշտպանության համար, այս կազմակերպությունը հիմնված է համաիսլամական արժեքների վրա:

Իսլամական համագործակցություն կազմակերպությունը ամենախոշոր և ազդեցիկ պետական կառավարական մուսուլմանական (կրոնաքաղաքական) միջազգային կազմակերպությունն է, որի հիմքում ընկած է իսլամական համաշխարհային համերաշխության գաղափարը: 2015 թ. տվյալներով 57 անդամ երկրներից (այդ թվում

Արաբական պետությունների լիգայի անդամ բոլոր 22 երկրները) 53-ում բնակչության մեծամասնությունը՝ ընդհանուր մոտ 1,8 մլրդ, մուսուլմաններ են:

Իսլամական համագործակցություն կազմակերպության առաքելությունն է լինել մուսուլմանական աշխարհի հավաքական ձայնը, որը պետք է աշխատի «մուսուլմանական աշխարհի շահերի պաշտպանության համար»: Եվ բնական է, որ այս կազմակերպության կազմում իրենց շահերն ունեն իսլամադավան բնակչություն ունեցող բոլոր պետությունները, որոնց թվում են մեր հարևաններ Թուրքիան և Ադրբեջանը:

Հասկանալի է, որ տնտեսական, մշակութային, քաղաքական լծակները և հնարավորություններն օգտագործելով՝ Թուրքիան և Ադրբեջանը պետք է հակահայկական լուրջ գործունեություն ծավալեն՝ իսլամական աշխարհում հակահայկական քարոզչությունն ամուր հիմքերի վրա դնելով և ընդարձակելով դրա աշխարհագրությունը: ԻՀԿ-ն արդեն մի քանի տասնամյակ է՝ կոշտ դիրքորոշում ունի Հայաստանի հարցում, որն էլ իր գործնական կիրառությունն է ստանում ՄԱԿ-ում արցախյան հակամարտության վերաբերյալ ԻՀԿ անդամ պետությունների քվեարկություններով:

Ադրբեջանը անդամակցել է Իսլամական կոնֆերանս կազմակերպությանը 1991 թ.՝ Խորհրդային Միության փլուզումից հետո, Սենեգալի մայրաքաղաք Դակարում ԻԿԿ-ի 6-րդ համաժողովին: 1991 թ-ից մինչ այժմ տեղի է ունեցել ԻՀԿ բարձրագույն մարմնի ևս 8 (2019 թ. մայիսին կայացել է ԻՀԿ վերջին՝ 14-րդ գագաթաժողովը Սաուդյան Արաբիայի Մեքքա քաղաքում) գագաթաժողով, որոնց ավարտին կնքված կոմյունիկեներում, հռչակագրերում և բանաձևերում Հայաստանը դիտարկվում է որպես ագրեսոր:

Արդեն 1994 թ. ԻԿԿ-ի 7-րդ գագաթաժողովին ընդունված եզրափակիչ կոմյունիկեի դրույթներում խստորեն դատապարտվում էր «ՀՀ ագրեսիան» ընդդեմ Ադրբեջանի Հանրապետության: «Օկուպացված տարածքներում» Ադրբեջանի քաղաքացիների նկատմամբ կատարված գործողությունները համարվեցին հանցագործություն՝ ուղղված մարդկության դեմ, և խստորեն պահանջվում էր ՄԱԿ-ի ԱԽ 822, 853, 874, 884 բանաձևերի իրականացում, նաև հայկական ուժերի անհապաղ անվերապահ և ամբողջական դուրսբերում ադրբեջանական «գրավյալ տարածքներից», այդ թվում՝ Լաչինի և Շուշիի շրջաններից, ՀՀ-ին կոչ էր արվում հարգելու Ադրբեջանի Հանրապետության ինքնիշխանությունն ու տարածքային ամբողջականությունը: Ավելին՝ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին կոչ էր արվում ընդունելու Հայաստանի կողմից ագրեսիայի առկայությունը: ՀՀ-Ադրբեջան հարաբերությունների վերաբերյալ այս ձևակերպումները չնչին փոփոխություններով և լրացումներով առկա են ԻՀԿ ընդունած այլ փաստաթղթերում:

ՀՀ-ն արաբա-մուսուլմանական մյուս կազմակերպությունների՝ Օնցի համագործակցության խորհրդի և Մադրիբի արաբական միության հետ ևս առանձնակի հարաբերություններ և դրանցում ներկայացվածություն չունի:

Արաբական երկրների «փափուկ ուժը» Հայաստանի Հանրապետությունում

Պետության մշակույթի և լեզվի տարածման մակարդակը նրա սահմաններից դուրս, պետության գրականության և արվեստի տարածումը, օտարերկրյա ուսանողների կրթությունը տվյալ երկրի կրթական հաստատություններում, տեխնոլոգիական նորարարությունը, միջազգային օգնությունը, զբոսաշրջությունը, ներգաղթը, դաշնակցային կապերը և այլն «փափուկ ուժի»⁴ կիրառման գործիքներ են: Արաբական տարբեր երկրներ ՀՀ-

⁴ «Փափուկ ուժ» հասկացության հեղինակ Ջոզեֆ Նայի ձևակերպմամբ դա մշակութային և գաղափարական գրավչության միջոցով հետաքրքրություն առաջացնելու կարողությունն է: «Փափուկ ուժը» հիմնվում է ազգային ռեսուրսների վրա, որոնց կարողությունների լիարժեք օգտագործմամբ հնարավոր է ներգրավել դիմացինին սեփական օրակարգի մեջ՝ դրանով իսկ ավելացնելով ազդեցության լծակները նախընտրելի արդյունքների հասնելու համար: Nye, J.S. Jr., 2011. The Future of

ում իրենց դեսպանությունների, այլ կազմակերպությունների և ֆոնդերի գործունեության միջոցով կամա թե ակամա օգտագործում են «փափուկ ուժի» այս գործիքակազմը: Արաբական երկրներից, օրինակ, ԱՄԷ-ն, ունի հստակ ձևակերպված և պետականորեն ընդունված «փափուկ ուժի» ռազմավարություն:

Գիտակրթական և մշակութային ծրագրեր

ՀՀ-արաբական երկրներ հարաբերություններում կարևոր բաղադրիչ է կրթական, գիտական, մշակութային կապերի հաստատումը: Մշակութային երկխոսության հաստատումը, լեզվի ճանաչելիության մեծացումը, արվեստի, ֆիլմերի և մշակույթի այլ դրսևորումների տարածումը ևս համարվում են «փափուկ ուժի» չափման փոփոխականներ կամ դրա կիրառման միջոցներ:

ՀՀ-արաբական երկրներ կրթական, գիտական և մշակութային առնչությունները կարգավորվում են երկկողմ հուշագրերի, համաձայնագրերի, արձանագրությունների միջոցով: Նման փաստաթղթեր ստորագրվել են և դրանցով գործնական ծրագրեր իրականացվել են Սիրիայի, Եգիպտոսի, Հորդանանի, Լիբանանի, Քուվեյթի և ԱՄԷ-ի հետ:

ՀՀ-ի բարձրագույն ուսումնական հաստատություններում դեռ նախորդ դարի կեսերից մեծ ուշադրություն է հատկացվում Մերձավոր և Միջին Արևելքի պատմության, մշակույթի, կրոնի, տարածաշրջանային հիմնախնդիրների, ինչպես նաև արաբերենի, արաբական լեզվաբանության և գրականության ուսումնասիրությանը: Արաբերենի, արաբական երկրների պատմության, քաղաքականության ուսումնասիրությամբ զբաղվում են ԵՊՀ-ի արևելագիտության և միջազգային հարաբերությունների ֆակուլտետները, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտը, Վ. Բրյուսովի անվան լեզվահասարակագիտական համալսարանի Ասիական լեզուների գիտաուսումնական կենտրոնը և Հայ-ռուսական սլավոնական համալսարանի միջազգային հարաբերությունների, լեզվաբանության ֆակուլտետներն ու արևելագիտության ինստիտուտը:

Արաբերենի ուսուցումը ԵՊՀ-ում սկսվել է հիմնադրման առաջին օրերից: 40-ական թվականներից բանասիրական ֆակուլտետի կազմում ձևավորվել է արևելյան լեզուների ամբիոնը: 1968 թ. արևելագիտության ֆակուլտետի հիմնադրումից հետո այն բաժանվել է երկու՝ իրանական բանասիրության և արաբական ու թուրքական բանասիրության ամբիոնների: Այժմ արդեն ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի ինքնուրույն ստորաբաժանում հանդիսացող արաբագիտության ամբիոնում դասավանդվում են արաբագիտության բոլոր հիմնական ուղղությունները:

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի արևելագիտության ինստիտուտի գործունեության հիմնական ոլորտներն են արաբական երկրների ազգային-ազատագրական շարժումների, նրանց սոցիալ-քաղաքական և հոգևոր-մշակութային զարգացման ուղիների, միջարաբական, ինչպես նաև հայ-արաբական պատմաքաղաքական հարաբերությունների, իսլամի դերի և այդ երկրներում հայ համայնքների պատմության ուսումնասիրությունը և տարածաշրջանային հիմնախնդիրների վերհանումը:

Վ. Բրյուսովի անվան լեզվահասարակագիտական համալսարանում 2010 թ-ից գործում է Արևելյան լեզուների ամբիոնը, որը 2018 թ-ից դարձել է «Ասիական լեզուների գիտաուսումնական կենտրոն», որտեղ ի թիվս այլ լեզուների դասավանդվում է արաբերենը:

Այս կրթական ծրագրերի առկայությունը թեպետ պայմանավորված չէ արաբական փափուկ ուժի գործադրմամբ, սակայն այս կառույցների հետ արաբական դեսպանատներն ու կրթական-մշակութային հիմնադրամներն այսօր սերտ կապեր են հաստատել:

Power. New York: Public Affairs, pp. 20-21, Փափուկ ուժի մասին տե՛ս՝ Nye, J.S. Jr., 2005. Soft Power: The Means to Success in World Politics. New York: Public Affairs.

ՀՀ անկախությունից հետո հայ ուսանողների՝ արաբական երկրներում վերապատրաստվելու հնարավորությունները բազմապատկվել են: Արաբական երկրների հետ միջպետական համաձայնագրերի շրջանակում հայ ուսանողներն այսօր հնարավորություն ունեն արաբերենի ուսուցման միամյա դասընթացներ անցնելու արաբական երկրներում: Մինչ 2011 թ. քաղաքական անկայունության պատճառով ծրագրի կասեցումը ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի արաբագիտության ամբիոնի շուրջ 30 ուսանող հնարավորություն ուներ մեկամյա վերապատրաստման դասընթաց անցնելու Դամասկոսի արաբերենի ուսուցման ինստիտուտում: Այժմ ընթացքի մեջ են Եգիպտոսի (2-5 հոգի), Քուվեյթի (ծրագիրը մեկնարկել է 2012 թ-ից, ուսանողների թիվը յուրաքանչյուր տարի՝ 6, մինչ այժմ՝ 24 ուսանող), Հորդանանի (մեկնարկը՝ 2015 թ., մինչև 25 ուսանող յուրաքանչյուր տարի) լեզվի կենտրոնների հետ համագործակցության ծրագրերը: Դեռ 2014 թ-ից Հորդանանի հետ միջպետական համագործակցության շրջանակում ՀՀ քաղաքացիները կարող են օգտվել նաև Ամմանի համալսարանի մագիստրատուրայում և ասպիրանտուրայում սովորելու հնարավորություններից (2014-2019 թթ. տվյալներով մագիստրատուրայում սովորել է 8, ասպիրանտուրայում՝ 2 ուսանող):

Եգիպտոսի Արաբական Հանրապետության Կահիրեի համալսարանի հետավարտական կրթության ֆակուլտետի արաբերենի զարգացման կենտրոնում ամեն տարի վերապատրաստվում է ՀՀ բուհերում դասավանդող 2-3 արաբագետ:

Ոչ լեզվակիրների համար արաբական երկրներում գործող այսպիսի լեզվի կենտրոնները և դրանց միջոցով օտարերկրացի ուսանողների, դասախոսների և հետազոտողների ներգրավումը արաբերենի՝ որպես լեզվի ճանաչման և դրա միջոցով մշակույթի տարածման գործիք է:

Հայ-արաբական կրթական կապերի ամրապնդման փոխադարձ շահագրգռվածության արդյունք է ոչ միայն հայ ուսանողների համար արաբական երկրներում կրթական հնարավորություններ ստեղծելը, այլև Հայաստանում արաբերենի ուսուցման համար առավել նպաստավոր պայմաններ ապահովելը: Այս նկատառումից ելնելով՝ ԵՊՀ արաբագիտության ամբիոնում բացվել են արաբական երկու լսարան և մեկ մշակութային կենտրոն: Արաբական լսարաններից մեկը գործում է 2000 թ-ից և կրում էր այդ ժամանակահատվածում Եգիպտոսի նախագահ Հուսնի Մուբարաքի տիկնոջ՝ Սյուզան Մուբարաքի անունը, այժմ վերանվանվել է «Եգիպտոսի լսարան»: Իսկ 2018 թ. հունվարից ԱՄԷ միջազգային համագործակցության գործակալության հովանավորությամբ ԵՊՀ-ում բացվել է ժամանակակից տեխնիկայով հագեցած նոր լսարան, որի նպատակն է նպաստել արաբերենի ուսուցման արդյունավետության բարձրացմանը:

2018 թ-ից ԵՊՀ արաբագիտության ամբիոնում գործում է նաև Քուվեյթի Աբդուլազիզ Սաուդ Ալ-Բաբտեյնի անվան արաբական մշակույթի կենտրոնը, որը հովանավորվում է «Աբդուլազիզ Սաուդ ալ-Բաբտեյն» մշակութային հիմնադրամի կողմից: Կենտրոնի ֆինանսավորմամբ արաբագիտության ամբիոնի աշխատակազմը՝ ուսանողների ներգրավմամբ, իրականացրել է կրթական, գիտահետազոտական մի շարք ծրագրեր:

2014 թ. ԵՊՀ-ում Արաբերենի միջազգային օրվա կապակցությամբ բացվել է Եգիպտոսի անվան արաբերենի և մշակույթի կենտրոն, որտեղ բուհում արաբերեն սովորող ուսանողներն անցկացնում են իրենց դասերը:

2014 թ-ից Քուվեյթի պետության ջանքերով Երևանի Նար-Դոսի դպրոցում անցկացվում են արաբերենի խորացված դասընթացներ դպրոցի սիրիահայ աշակերտների համար:

ԱՄԷ գիտական և ակադեմիական դիվանագիտության գործարկման ապացույցն է ՀՀ-ի համալսարանների (մասնավորապես ԵՊՀ և Շիրակի համալսարան), ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի արևելագիտության ինստիտուտի, Մատենադարանի, գրադարանների

(Շիրակի, Լոռու մարզային գրադարաններ, Խնկո Ապոբ մանկական գրադարան, Ազգային գրադարան) և այլ կրթական օջախների հետ կապերի ամրապնդումը: Կրթական նախաձեռնությունների շրջանակում դեսպանությունների միջնորդությամբ կազմակերպվում են պրոֆեսորների և հետազոտողների այցեր ՀՀ կրթական հաստատություններ:

Դեսպանատանը պարբերաբար հյուրընկալվում են նաև գիտական, գիտահետազոտական և գրական տարբեր կազմակերպությունների տնօրեններ («Արի» գրական ընկերություն, ԱՐԴԻ, «Կոմպաս» գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոն, «Թեքնոլոջի ընդ սայենս դայնամիքս» հետազոտական ընկերություն, Գլոբալիզացիայի և տարածաշրջանային համագործակցության վերլուծական կենտրոն, Միջազգային և անվտանգային հարցերի ինստիտուտ և այլն):

Մշակութային ծրագրեր

Հայ-արաբական հարաբերություններն ամրապնդվում են փոխադարձ մշակութային նախագծերի իրականացմամբ: Հայ-արաբական մշակութային նախաձեռնությունների շարքում է ՀՀ-ում արաբական երկրների մշակույթի օրերի և արաբական երկրներում ՀՀ մշակութային օրերի միջոցառումների կազմակերպումը: Մինչ այժմ հայկական մշակույթի օրեր են կազմակերպվել Սիրիայում (2010), Եգիպտոսում (2010, 2011, 2015, 2016), Քուվեյթում (2011), Հորդանանում (2012), Հայաստանում անցկացվել են Լիբանանի (2008), Սիրիայի (2009), Եգիպտոսի (2011), Քուվեյթի (2013), Հորդանանի (2015) մշակութային օրեր: Այս իրադարձություններն ուղեկցվել են արաբ և հայ ժամանակակից նկարիչների ու վարպետների աշխատանքների ցուցահանդեսներով, ազգային համույթների ելույթներով, ֆիլմերի ցուցադրություններով, գիտական կենտրոններում դասախոսություններով, քննարկումներով և այլ միջոցառումներով:

Կարևոր իրադարձություն է նաև Երևանում արաբական երկրների անկախության օրերի և ազգային տոների ամենամյա նշումը տարբեր ձևաչափերով և հանդիսավորությամբ:

ԵՊՀ արաբագիտության ամբիոնի և ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի ջանքերով 2011 թ-ից ամեն տարի տարբեր միջոցառումների և մրցույթների միջոցով մեծ շուքով նշվում է Արաբերենի միջազգային օրը, որին ներկա են լինում արաբական դեսպանությունների ներկայացուցիչներ: Վերջիններս խրախուսական մրցանակներ են հանձնում միջոցառման մասնակիցներին: 2017 թ. ԱՄԷ դեսպանությունը հովանավորեց մրցույթին մասնակից ուսանողներից և դասախոսներից բաղկացած պատվիրակության ուսումնական այցը ԱՄԷ: Եգիպտոսի դեսպանության միջոցներով արաբերենով գրված լավագույն շարադրության հեղինակը ևս մեկ ամիս կրթական ծրագիր անցավ Եգիպտոսում:

2005 թ. Լիբանանի դեսպանության ջանքերով Երևանի կենտրոնում՝ Բեյրութի փողոցի հարևանությամբ, տեղադրվել է լիբանանցի բանաստեղծ, նկարիչ և փիլիսոփա Ջուբրան Խալիլ Ջուբրանի կիսանդրին: Հատկանշական է, որ բանաստեղծի ձեռքին պատկերվել է նրա հանրահայտ «Մարգարեն» գիրքը, որի արևելահայերեն թարգմանությունը հրատարակվել է 2008 թ.՝ ՀՀ-ում Լիբանանի Հանրապետության դեսպանատան և «Վիվասել-ՄՏՍ» ընկերության աջակցությամբ:

Հայ-արաբական գրական կապերն ամրապնդվում են հայտնի արաբ հեղինակների ստեղծագործությունների հայերեն և համապատասխանաբար հայ հեղինակների գործերի արաբերեն թարգմանություններով, որոնց թիվը մեծ չէ: Արաբ հայտնի հեղինակներից «Անտարես» հրատարակչությունը թարգմանել է Ալա ալ-Ասուանիի «Յակուբյան շենքը», Նազիբ Մահֆուզի «Ռադոբիս» վեպերը, թարգմանվել են նաև ցեղասպանության մասին արաբ ականատեսների հուշերը և այլն:

Արաբական Միացյալ Էմիրությունները մեծ տեղ է հատկացնում նաև մեդիա դիվանագիտությանը: Դրա մասին են վկայում տարբեր լրատվամիջոցների (Արմենպրեսս,

Պանոբրամա.ամ, Արմնյուզ, Կենտրոն, Մեդիամաքս, Արմեդիա, Մպուտնիկ Արմենիա և այլն) հետ ունեցած կապերը և դեսպանության ծրագրերն ու գործունեությունը լուսաբանող լրագրողների պարբերական պարզևատրումները:

Բարեգործական-մարդասիրական ծրագրեր

Արաբական երկրները ՀՀ-ում իրենց դեսպանությունների և այլ կազմակերպությունների միջոցով լայնածավալ բարեգործական ծրագրեր են իրականացնում ինչպես մայրաքաղաք Երևանում, այնպես էլ մարզերում: Նման ծրագրերի իրականացմամբ աչքի են ընկնում հատկապես Ծոցի արաբական երկրները, մասնավորապես ԱՄԷ-ն և Քուվեյթը:

ԱՄԷ նախագահը 2019 թվականը հայտարարել է հանդուրժողականության տարի՝ կարևորելով ԱՄԷ-ի դերակատարությունը որպես հանդուրժողականության համաշխարհային կապիտալի, և շեշտելով, որ հանդուրժողականությունը համընդհանուր հայեցակարգ է, որն ուղղված է հանդուրժողական արժեքների, տարբեր մշակույթների միջև երկխոսության, համակեցության և փոխգործակցության խթանմանը: Դեռևս 2017 թ. սեպտեմբերին ԱՄԷ-ի Փափուկ ուժի խորհուրդը ընդունել է Փափուկ ուժի ռազմավարություն, որի նպատակն է մեծացնել երկրի համաշխարհային հեղինակությունը՝ կարևորելով ինքնությունը, ժառանգությունը, մշակույթը և ԱՄԷ նպաստը աշխարհին: Ռազմավարությունը հիմնված է չորս նպատակների վրա: Դրանք են՝

- Մշակել միասնական ուղղություն տարբեր ոլորտների, այդ թվում տնտեսության, հումանիտար, զբոսաշրջության, մեդիայի և գիտության համար
- Նպաստել ԱՄԷ-ի՝ որպես տարածաշրջանի դարպասի դիրքերի ամրապնդմանը
- ԱՄԷ-ն վերածել մշակույթի, արվեստի և զբոսաշրջության տարածաշրջանային կապիտալի
- Ամրապնդել ԱՄԷ-ի հեղինակությունը՝ որպես ժամանակակից և հանդուրժող երկրի, որը պատրաստ է ընդունելու ամբողջ աշխարհի մարդկանց

Այս նպատակների իրականացման համար ԱՄԷ-ի դեսպանատունը ակտիվորեն ընդլայնում է իր ցանցը: ԱՄԷ դիվանագետները դեսպանի և երկրորդ քարտուղարի մակարդակով պարբերաբար հանդիպումներ են ունենում ՀՀ տարբեր բարձրաստիճան պաշտոնյաների, մասնավորապես ԱԳՆ-ի, Էկոնոմիկայի, ԱԻՆ, ԿԳՄՍ, արդարադատության, աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունների, ՊԵԿ-ի, ոստիկանության և այլ կառույցների աշխատակիցների հետ: ԱՄԷ դիվանագետներն օգտագործում են այս հարթակը ոչ միայն հայաստանյան գործընկերների, այլև օտարերկրյա դիվանագիտական ներկայացուցիչների հետ հարաբերությունների ամրապնդման համար: Դեսպանությունը տեղական ինքնակառավարման մարմինների, տարբեր համայնքների ղեկավարների հետ ևս կազմակերպում է առանձին հանդիպումներ (օրինակ՝ Երևանի քաղաքապետի հետ Էջմիածնում հյուրընկալվել են Էռնեսկյան դպրոցում, Կոտայքում Զորավանի գյուղապետի ներկայությամբ այցելել են գյուղի մանկապարտեզ, ինչպես նաև Արարատի մարզի Նոր Կյուրիհի, Կոտայքի մարզի Նոր Գեղի և Հրազդանի համայնքապետները և այլք հյուրընկալվել են դեսպանատանը):

ՀՀ-ում ԱՄԷ դեսպանատան մարդասիրական օգնության ծրագրերն իրականացվում են հատկապես մարզերում, դրանցից են Լոռու, Շիրակի, Արմավիրի, Տավուշի և Կոտայքի մարզերից յուրաքանչյուրում մոտ 250 անապահով ընտանիքի սննդային փաթեթների տրամադրումը, Լոռու մարզի 11 գյուղերի առաջին դասարանցիներին պայուսակներով և գրենական պիտույքներով ապահովելը, Շիրակի մարզային գրադարանին հեռուստացույցներ, Լոռու մարզային գրադարանին գրքեր նվիրելը, Զայեդի տարվա շրջանակներում Վայոց ձորի Վայքի բժշկական միավորմանը բժշկական սարքավորումների

տրամադրումը, ՍՕՍ Մանկական գյուղ բարեգործական կազմակերպության «Ընտանիքների ամրապնդման ծրագրի» շահառու 53 ընտանիքներին տաքացուցիչներ նվիրելը և այլն:

Սոցիալական ծրագրերի շրջանակում դեսպանատունը աջակցություն է ցուցաբերում Խարբերդի մասնագիտացված մանկատան հատուկ կարիքավոր երեխաներին, աուտիզմով տառապող երեխաներին և այլն: Դեսպանատունը պարզևատրել է 2019 թ. Աբու Դաբիում կայացած միջազգային հատուկ օլիմպիական խաղերին մասնակցած հայ մարզիկներին և պատրաստակամություն հայտնել համագործակցելու աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և Հաշմանդամների միության հետ՝ մասնակցելու այն ծրագրերի իրականացմանը, որոնք ուղղված են հաշմանդամների աջակցմանը, նրանց հնարավորությունների ամրապնդմանը: Հայկական բարեգործական ընդհանուր միության հետ ևս քննարկվել են հնարավոր համատեղ ծրագրեր իրականացնելու հեռանկարները:

Երևանում բարեգործական ծրագրեր է իրականացնում նաև Քուվեյթի Պետությունը: 2014 թ. Երևանի Նար-Դոսի անվան թիվ 14 դպրոցում ժամանակակից տեխնիկայով հագեցած ինֆորմատիկայի դասարան է բացվել Քուվեյթի հովանավորությամբ: Քուվեյթի Պետության բարեգործական ծրագրերից է Երևանում Սուրբ Զատիկի տոնի կապակցությամբ 2016 թ. մարտի 25-ին բացված « N1 Տարեցների խնամքի և վերականգնման տուն-ինտերնատը», որը 1 միլիոն դոլարի ներդրումային ծրագիր է:

Զբոսաշրջություն

Հայաստանում զբոսաշրջության զարգացման ընդհանուր միտումներին զուգահեռ վերջին տարիներին անհերքելիորեն աճել է արաբ զբոսաշրջիկների թիվը: Արաբական երկրների զբոսաշրջիկները Հայաստան են այցելում հատկապես Ռամադան ամսվա արձակուրդներին և Զոհաբերության տոնին (արաբերեն *հաջ`* ուխտագնացության ավարտին նշվող տոն): Ծոցի տարածաշրջանից մեծ քանակությամբ զբոսաշրջիկների ՀՀ-ն ընդունում է նաև ձմռանը՝ պայմանավորված այդ երկրների բնակչիմայական պայմաններով և ՀՀ-ում ձյան առկայությամբ, ինչը մեծացնում է մեր երկրի գրավչությունը այս տարածաշրջանի բնակիչների համար: ՀՀ-ն մեծապես գրավում է նաև Լիբանանի քրիստոնյա համայնքների ներկայացուցիչներին, որոնք կրոնական ուխտագնացությունների ձևաչափով ճամփորդություններ են իրականացնում Հայաստան: ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալներում զբոսաշրջության վերաբերյալ պաշտոնական տեղեկատվությունը ներկայացնում է զբոսաշրջիկների թվերը եռամսյակային և տարեկան կտրվածքով, սակայն առավել մանրամասն տեղեկատվություն առկա չէ: Զանգվածային լրատվամիջոցների հրապարակումներում առկա են այս կամ այն երկրի տվյալները արտացոլող տարբեր ժամանակահատվածների մասին առանձին թվեր: 2018 թ. միայն առաջին կիսամյակի արդյունքներով Լիբանանից Հայաստան ժամանած զբոսաշրջիկների թիվը կազմել է 3437 մարդ նախորդ տարվա 2410-ի համեմատ: 2013 թ. մոտ 400 էմիրաթցի էր այցելել Հայաստան, 2017 թ. նրանց թիվը հասել է 8347-ի, իսկ 2018 թ. պաշտոնական տվյալներով ՀՀ-ն ընդունել է 11500 էմիրաթցու (ԱՄԷ-ի դեսպանի հարցազրույցից):

Զբոսաշրջության զարգացման համար մեծ խթան է օդային կապի՝ Երևան-Բեյրութ-Երևան, Երևան-Դուբայ-Երևան, Երևան-Շարժա-Երևան ուղիղ չվերթների առկայությունը, ուստի պատահական չէ, որ արաբական երկրներից ամենամեծ թվով զբոսաշրջիկներ ներգրավվում են հենց ԱՄԷ-ից և Լիբանանից: Նախորդ տարիների համեմատ աճել է նաև «Էյր Արաբիայի» և «Ֆլայ Դուբայի» չվերթների պարբերականությունը (2016 թ. շաբաթական վեց չվերթ էր իրականացվում, այժմ այդ թիվը մոտ երեք անգամ աճել է): Դեպի արաբական երկրներ հայ զբոսաշրջիկների ամենատարածված ուղղությունը եղել է և առայժմ շարունակում է մնալ Եգիպտոսը:

Զբոսաշրջային դիվանագիտության ակտիվացման համար ԱՄԷ դեսպանությունը վերջին մեկ տարվա ընթացքում հանդիպումներ է ունեցել «Զվարթնոց» օդանավակայանի,

տարբեր հյուրանոցների վաճառքի գծով տնօրենների, զբոսաշրջային կազմակերպությունների, «Ֆլայ Դուբայ» և «Էյր Արաբիա» ընկերությունների տնօրենների հետ:

Տնտեսական հարաբերություններ

Հայ-արաբական տնտեսական հարաբերությունները ևս կարգավորվում են երկկողմ համաձայնագրերի և հուշագրերի միջոցով, որոնք էլ ձևավորվում և հստակեցվում են հատկապես միջկառավարական հանձնաժողովների հանդիպումների և նիստերի ընթացքում, ինչպես նաև առևտրաարդյունաբերական պալատների միջև համագործակցության ծավալման և երկկողմ առևտրաարդյունաբերական ասոցիացիաների (Հայաստան–ԱՄԷ, Հայաստան–Քուվեյթ, Հայաստան–Կատար) գործունեության արդյունքում: ՀՀ-ում հատկապես շոշափելի է Էմիրաթական և լիբանանյան կապիտալի առկայությունը: Առևտրական, տեխնիկական և տնտեսական համագործակցության տեսանկյունից մեծ կարևորություն ունի միջկառավարական հանձնաժողովների գործունեությունը: Նման միջկառավարական հանձնաժողովների նիստեր են գումարվել Եգիպտոսի (1996-2017 թթ. 5 նիստ), Լիբանանի, Իրաքի (4 նիստ), Քուվեյթի (2 նիստ), ԱՄԷ-ի (1-ին նիստը 2019 թ.) հետ: ՀՀ կառավարության և Կատարի Պետության կառավարության միջև համատեղ հանձնաժողով ևս ստեղծվել է, որի շրջանակում իրականացվել են պատվիրակությունների փոխադարձ այցելություններ, սակայն դեռևս որևէ նիստ չի գումարվել:

ՀՀ-ում ԱՄԷ դեսպանության բացվելուց հետո տարբեր ոլորտներում, հատկապես տնտեսության մեջ նկատելի է ակտիվացում: Դրա մասին են վկայում առևտրաշրջանառության ցուցանիշները, որոնք, ըստ ԱԳՆ պաշտոնական տվյալների, 2014-2019 թթ. զգալիորեն աճել են: ՀՀ–ԱՄԷ միջև հիմնական շրջանառության ապրանքներն են շինանյութը, շաքարը, հրուշակեղենը, կահույքը, էլեկտրատեխնիկական, տրանսպորտի միջոցները և այլն: ՀՀ-ից ԱՄԷ արտահանվում են պղնձե և ալյումինե իրեր և այլն: Պայմանավորված 2019 թ. ՀՀ–ԱՄԷ միջկառավարական հանձնաժողովի անդրանիկ նիստի կայացմամբ և ՀՀ-ում ԱՄԷ դեսպանության ակտիվ գործունեությամբ՝ առաջիկայում նախատեսվում է տնտեսական երկկողմ հարաբերությունների աշխուժացում:

ՀՀ-ում Էմիրաթական կապիտալով գործունեություն ծավալով խոշոր կազմակերպություններն են BMW-ն, Fly Dubai-ը, Air Arabia-ն, Carrefour հիպերմարկետների ցանցը, Business Gate-ը և այլն:

ԱՄԷ դեսպանությունը հատկապես շահագրգռված է դեռ 1992-ին ստեղծված «Մաջիդ ալ Ֆուտտեյմ» Մերձավոր Արևելքի և Հյուսիսային Աֆրիկայի տարածաշրջանում բազմագործառնության առևտրային համալիրների, ժամանցային կենտրոնների շահագործման ոլորտում մասնագիտացած առաջատար ընկերության հայաստանյան ներկայությամբ, որը համարվում է տարածաշրջանում ֆրանսիական «Կարֆուր» հիպերմարքեթների ցանցի արտոնագրային գործընկերը (աշխարհում երկրորդ մանրածախ ցանցը):

ԱՄԷ տնտեսական դիվանագիտության ներդրումային խոշոր ծրագրերից է Ճարտարապետական խորհրդատվությունների «Բեյնունա» կազմակերպության և «Լաուրա» կազմակերպության միջև հուշագրի ստորագրումը Երևանում «Անմոռուկ» անունով 71 հարկանի աննախադեպ աշտարակ կառուցելու մասին, որի արժեքը 270 մլն դոլար է:

«Հայաստան–ԱՄԷ» առևտրաարդյունաբերական ասոցիացիայի կայքէջից տեղեկանում ենք, որ իրականացման փուլում է Տավուշի հանքային ջրերի գործարանի ծրագիրը:

Տնտեսական և ներդրումային ծրագրերի զարգացման համար կարևոր էր նաև հայ-Էմիրաթական միջկառավարական համատեղ հանձնաժողովի անդրանիկ նիստը, որը

կայացել է 2019 թ. մայիսի 2-ին Երևանում: Այս նիստին Էմիրությունների պետնախարարը, վերահաստատելով տնտեսական երկկողմ հարաբերությունների ռազմավարական նշանակությունը, հատուկ ընդգծեց, որ ԱՄԷ-ն հայկական արտահանվող ապրանքների շուկայում 8-րդն է և ամբողջ աշխարհով ներմուծումների 11-րդ աղբյուրը:

ԱՄԷ դեսպանատունը պարբերաբար հյուրընկալում է հայկական տարաբնույթ կազմակերպությունների ղեկավարների (օրինակ՝ «Թամարա Ֆրութ», «One Armenia», «Երևան իմ սեր»), ԱՄԷ ներդրումներ ներգրավելու համատեքստում այցելություններ կազմակերպում հայկական գործարաններ (օրինակ՝ «Նիկոլ Դուման» մասնագիտացված գործարան, որը զբաղվում է փողոցների և տների կանաչապատման և լուսավորության աշխատանքներով):








2018 թ. տվյալներով ՀՀ-ում գործում են լիբանանյան կապիտալով աշխատող 215 ընկերություն և անհատ ձեռնարկատեր: Դրանք աշխատում են իրավաբանական, բիզնես խորհրդատվության և ծառայությունների, ոսկերչության, ժամագործության, գյուղատնտեսության, ֆինանսների և այլ ոլորտներում: ՀՀ-ում հեռահաղորդակցության ցանցի առաջատար ընկերություններից մեկի՝ «ՄՏՍ Հայաստանի» բաժնետոմսերի 20 %-ի սեփականատերը 2007-2019 թթ. լիբանանյան «Ֆաթուշ Գրուփ» հոլդինգն է, Երևանում աղբահանության գործընթացը 2014-2019 թթ. իրականացնող «Sanitek s.a.r.l.» ընկերությունը ևս լիբանանյան ներդրումային ծրագիր էր:










Հայաստանի զարգացման «Բիզնես Արմենիա» հիմնադրամը ակտիվ շփումներ է հաստատում լիբանանյան գործընկերների հետ՝ ներդրումների ներգրավման, այդպիսով Հայաստանի վարկանիշի և մրցունակության բարձրացման համար: Ըստ այդ հանդիպումների արդյունքների՝ լիբանանյան ապահովագրական «Չեդիդ Կապիտալ», պարարտանյութերի և թունաքիմիկատների արտադրությամբ զբաղվող «Մակ Ագրոքեմիկալս» ընկերությունները մտադիր են մասնաճյուղեր բացել Հայաստանում, «Մակիտեկ» ընկերությունը պատրաստ է 250 հազար դոլարի ներդրումներով ՀՀ-ում պլաստմասե իրերի պատրաստման կադապարների և արդյունաբերական մեքենաների բաղադրիչների արտադրություն ստեղծելու:







ՀՀ-արաբական երկրներ առևտրատնտեսական հարաբերությունների իրավապայմանագրային բազան բավական հարուստ է, պարբերաբար անցկացվում են բիզնես ֆորումներ, սակայն այս ոլորտում այլ շոշափելի արդյունքներ չեն արձանագրվել:

Հայ-արաբական հարաբերությունները դիտարկելու արդյունքում պարզ է դառնում, որ մեր երկրում արաբական երկրներն իրենց ներկայացուցչական մարմինների, դեսպանությունների, տարաբնույթ հիմնադրամների, կազմակերպությունների, անհատների մասնակցությամբ այս կամ այն չափով կիրառում են փափուկ ուժի գործիքակազմը: Մասնավորապես ակնառու են մարդասիրական դիվանագիտության, գիտական և ակադեմիական դիվանագիտության, մշակութային և մեդիա դիվանագիտության, տնտեսական դիվանագիտության դրսևորումները: ՀՀ-ում մարդասիրական ծրագրեր են իրականացնում Արաբական Միացյալ Էմիրությունները և Քուվեյթը, կրթամշակութային սերտ առնչություններ կան Եգիպտոսի, Հորդանանի, ԱՄԷ-ի և Քուվեյթի հետ (մինչ 2011 թ.՝ Միրիայի), զբոսաշրջիկների հոսքը մեծ է Լիբանանից և ԱՄԷ-ից, տնտեսական ծրագրեր իրականացվում են հիմնականում ԱՄԷ-ի և Լիբանանի կապիտալով:

Հավելված 1

| Պետության անվանումը | Մայրաքաղաք | Տարածք (կմ ²) | Բնակչության թիվ (2018) | Կրոնական կազմ | Լեզուներ |
|---|------------|------------------------------|---------------------------|---|---|
|  Եգիպտոսի Արաբական Հանրապետություն | Կահիրե | 1, 001,449 | 99,413,317 | մուսուլման 90 %, քրիստոնյա 10 % | արաբերեն, տարածված են նաև անգլերենն ու ֆրանսերենը |
|  Սիրիայի Արաբական Հանրապետություն | Դամասկոս | 187,437 | 19,454,263 | մուսուլման՝ 87 % (սուննի 74 %, շիա/ալավի 13 %), քրիստոնյա՝ 10 %, դրուզներ, հրեաներ՝ 3 % | արաբերեն, տարածված են նաև անգլերենը, ֆրանսերենը, հայերենը, արամեերենն ու քրդերենը |
|  Լիբանանի Հանրապետություն | Բեյրութ | 10,400 | 6,100,075 | մուսուլման՝ 57,7 % (սուննի 28,7 %, շիա 28,4 %), քրիստոնյա՝ 36,2 %, դրուզներ՝ 5,2 % | արաբերեն, տարածված են նաև անգլերենը, ֆրանսերենը, հայերենը |
|  Իրաքի Հանրապետություն | Բաղդադ | 438,317 | 40,194,216 | մուսուլման՝ 95-98 % (շիա 64-69 %, սուննի 29-34 %), քրիստոնյա՝ 1 %, այլ՝ 1 % | արաբերեն, տարածված են նաև քրդերենը, թուրքմենական բարբառները և արամեերենը |
|  Հորդանանի Հաշիմյան Թագավորություն | Ամման | 89,342 | 10,458,413 | մուսուլման՝ 97.2 % (մեծ մասամբ՝ սուննի), քրիստոնյան՝ 2.2 % (բուդդայական՝ 0.4 %, հինդու 0.1 %, հրեա <0.1, այլ <0.2 | արաբերեն, տարածված է նաև անգլերենը |
|  Քուվեյթի Պետություն | Էլ-Քուվեյթ | 17,818 | 2,916,467 | մուսուլման՝ 74,6 %, քրիստոնյա՝ 18,2 %, այլ՝ 7,2 % | արաբերեն, տարածված է նաև անգլերենը |
|  Արաբական Միացյալ Էմիրություններ | Աբու Դաբի | 83,600 | 9,701,315 | մուսուլման՝ 76 %, քրիստոնյա՝ 9 %, այլ՝ 15 % | արաբերեն, տարածված է նաև անգլերենը, պարսկերենը, ուրդուն, փուշտուն և հինդու |

| | | | | | | |
|---|--|---------|-----------|------------|---|--|
|  | Կատարի Պետություն | Դոհա | 11,586 | 2,363,569 | մուսուլման՝ 67.7 %, քրիստոնյա՝ 13.8%, հինդու՝ 13.8 %, հրեա<0.1 %, բուդդայական՝ 3.1 %, այլ <2 % | արաբերեն, անգլերենը հիմնականում որպես երկրորդ լեզու |
|  | Բահրեյնի Թագավորություն | Մանամա | 760 | 1,600,000 | Մուսուլման 73.7 %, Քրիստոնյաներ՝ 9.3 %, հրեա՝ 0.1 %, այլ՝ 16.9 % | արաբերեն, խոսում են նաև անգլերեն, պարսկերեն, ուրդու |
|  | Սաուդյան Արաբիայի Թագավորություն | Էր-Ռիադ | 2,149,690 | 33,091,113 | մուսուլման (պաշտոնական՝ 85-90 % սուննի, 10-15 %՝ շիա) | Արաբերեն |
|  | Օմանի Սուլթանություն | Մասկատ | 309,500 | 4,613,241 | մուսուլման՝ 85.9%, քրիստոնյա 6.5 %, հինդու՝ 5.5 %, բուդդայական՝ 0.8 %, հրեա՝ <0.1 %,այլ 1,2 %, | արաբերեն, նաև՝ անգլերեն, բելուջերեն, սուահիլի, ուրդու, հնդկական խոսվածքներ |
|  | Եմենի Հանրապետություն | Սանա | 527,968 | 28,667,230 | 99,1 %՝ մուսուլման (65 %՝ սուննի, 35 %՝ շիա), այլ 0,9 % հրեաներ, բահաիներ, հինդուներ, քրիստոնյաներ, | արաբերեն, Մահրի (արևելյան Եմեն) և Սոկոտրի (Սոկոտրա կղզում) |
|  | Ալժիրի Ժողովրդական Ժողովրդավարական Հանրապետություն | Ալժիր | 2,381,740 | 41,657,488 | մուսուլման՝ 99 % (մեծ մասամբ՝ սուննի), այլ՝ ներառյալ քրիստոնյաներ և հրեաներ <1% | արաբերեն, նաև՝ ֆրանսերեն, բերբերերենի տարբեր խոսվածքներ |
|  | Թունիսի Հանրապետություն | Թունիս | 163,610 | 11,516,189 | Մուսուլմաններ՝ 99,1 %, այլ՝ 1 % (քրիստոնյաներ, հրեաներ, շիա մուսուլմաններ, բահաիներ) | արաբերեն, ֆրանսերեն, բերբերերեն |
|  | Լիբիայի Պետություն | Տրիպոլի | 1,759,540 | 6,754,507 | սուննի մուսուլման՝ 96.6 %,քրիստոնյա՝ 2.7 %, բուդդայական՝ 0.3 %, հինդու՝ <0.1, հրեա՝ <0.1, այլ<0.4 | արաբերեն, իտալերեն և անգլերեն (մեծ քաղաքներում), նաև՝ բերբերերեն |
|  | Մարոկկոյի Թագավորություն | Ռաբաթ | 446,550 | 34,314,130 | 99 % (զրեթե բոլորը սուննի, <0.1 %՝ շիա), այլ 1% (քրիստոնյան, հրեա, բահաի) | արաբերեն, բերբերերեն, ֆրանսերեն |

| | | | | | | |
|---|--|--|-----------|------------|--|---|
|  | Սուդանի Հանրապետություն | Խարթում | 1,861,484 | 43,120,843 | մուսուլման, շատ փոքր քրիստոնյա բնակչություն | արաբերեն, անգլերեն, նուբիերեն |
|  | Մավրիտանիայի Իսլամական Հանրապետություն | Նուակշոտ | 1,030,700 | 3,840,429 | 100 % մուսուլման | արաբերեն, փուլար, սոնինկե (ազգային լեզուներ), նաև ֆրանսերեն |
|  | Կոմորյան Կղզիների Միության Հանրապետություն | Մորոնի | 2,235 | 821,164 | սուննի մուսուլման 98 % (պաշտոնական կրոն), այլ՝ 2 % | արաբերեն և ֆրանսերեն, կոմորերեն կամ շիկոմորո |
|  | Ջիբութիի Հանրապետություն | Ջիբութի | 23,200 | 884,017 | սուննի մուսուլման 94 % (գրեթե բոլորը ջիբութցի), քրիստոնյա՝ 6 % | ֆրանսերեն և արաբերեն, նաև՝ սոմալերեն, աֆար |
|  | Սոմալիի Դաշնային Հանրապետություն | Մոգադիշու | 637,657 | 11,259,029 | հիմնականում սուննի մուսուլմաններ | սոմալերեն և արաբերեն, խոսում են նաև անգլերեն և իտալերեն |
|  | Պաղեստինի Պետություն | Հռչակված՝ Երուսաղեմ. Վարչական՝ Ռամալլահ | | 4,260,636 | մուսուլման՝ 98.0 - 99.0 % (մեծամասամբ՝ սուննի), քրիստոնյա <1.0 %, այլ <1.0 % | արաբերեն, եբրայերեն, նաև՝ անգլերեն |

3. ՀՀ արտաքին քաղաքականությունը և իսլամական ծայրահեղական կառույցները տարածաշրջանում. ով ո՞վ է իսլամական ծայրահեղականությունը մեր հարևանությամբ

Իսլամական արժեքային համակարգով ապրող մեծամասնությունն ունեցող երկրներում տեղի ունեցող իրադարձություններն ուսումնասիրելիս հնարավոր չէ խուսափել այն հարցից, թե ինչպես բնութագրել այն մուսուլմաններին, որոնք օգտագործում են իսլամը՝ որպես իշխանության և իրավունքի աղբյուր իրենց քաղաքական և հասարակական գործողությունների համար: Արդյոք դրանք իսլամական (կամ մուսուլման) արմատականներ (ֆունդամենտալիստներ), իսլամական ծայրահեղականներ (ռադիկալներ), թե իսլամականներ (իսլամիստներ) են: Պատասխանը սերտորեն կապված է այն հարցերին, թե ինչ ենք հասկանում այս եզրերի տակ և ինչպես ենք նկարագրում այս կամ այն հասկացությունը, որն օգտագործում ենք իսլամի հետ առնչվող երևույթները արդի գործընթացներում հասկանալու համար: Մասնագիտական գրականության մեջ տարբեր մոտեցումներ են առկա այն հարցերի վերաբերյալ, թե ինչ է պետք հասկանալ «քաղաքական իսլամ», «իսլամականություն», «իսլամական արմատականություն», «իսլամական ծայրահեղականություն» ասելով: Վերջին մի քանի տասնամյակի ընթացքում այս հասկացությունները մնում են բուռն քննարկումների առարկա:

Հասկացությունների պատմությունից

«Իսլամականություն» (իսլամիզմ) եզրն արդի ընկալմամբ ի հայտ է գալիս դեռ 1980-ականների վերջին ֆրանսիական ակադեմիական միջավայրում, այնուհետև մտնում է անգլալեզու գիտական խոսույթի մեջ, որտեղ նկատվում է «իսլամականության» և «իսլամական ֆունդամենտալիզմ» եզրերի նույնիմաստային, հավասարազոր կիրառությունը: Կարծիքներ կան, որ 2001թ.-ի սեպտեմբերի 11-ից հետո «իսլամականություն» եզրի օգտագործումը կարծես նույնիսկ գերադասելի է դարձել ամերիկյան ակադեմիական միջավայրում:

«Իսլամականություն» (islamisme) եզրը առաջին անգամ հանդիպում է ֆրանսերենում 18-րդ դարի կեսերին: Այդ ժամանակ, սակայն, այն տարբերվում էր տերմինի ժամանակակից իմաստից և բնութագրում էր մուսուլմանների դավանած կրոնը, որն այնուհետև ֆրանսերենում ձևակերպվեց որպես mahométisme (մահմեդականություն)՝ այն դավանանքը, որը դավանում և ուսուցանում էր Մուհամմադ մարգարեն:

«Մահմեդականություն» տերմինի օգտագործումը թվագրվում է 17-րդ դարի սկզբով, որը արտացոլում էր Վերածննդի շրջանի այն տրամաբանությունը, ըստ որի՝ իսլամն ընկալվում էր որպես իր հիմնադրի կրոնական համակարգ, նույնությամբ, ինչպես ընկալվում էր քրիստոնեությունը: Նաև ապավինում էր այն սխալ ենթադրությանը, որ Մուհամմադը իսլամի համար նույնն է, ինչ Քրիստոսը քրիստոնեության համար: Չնայած եզրի հիմքում ընկած սխալ տրամաբանությանը՝ դրա օգտագործումը տարածվեց ամբողջ Եվրոպայում:

18-րդ դարում բավականին ծավալուն ուսումնասիրություններ եղան իսլամի վերաբերյալ, և լուսավորության մտածողներն արդեն հիանալի գիտեին, որ մուսուլմաններն իրենց հավատն անվանում են «իսլամ», այլ ոչ թե «մահմեդականություն»: Այս շրջանում արդեն կարելի է նկատել, որ փորձեր են արվում՝ իսլամը իր իսկ արժեքային համակարգի միջոցով հասկանալու համար:

Ֆրանսիացի փիլիսոփա Վոլտերին է վերագրվում «իսլամականություն» (islamisme) տերմինի ստեղծումը: Վոլտերը հետազոտական մեծ հետաքրքրություն ուներ իսլամի հանդեպ և շատ էր գրում դրա մասին: Ուսումնասիրությունների արդյունքում նա խորապես ըմբռնել էր Մուհամմադի դերն ու նշանակությունը իսլամում, այդ իսկ պատճառով իսլամը նկարագրող տերմինի մեջ շտկում մտցրեց այն «իսլամիզմ» դարձնելով, որն այդ համատեքստում վերաբերում էր իսլամին ընդհանրապես, չունենալով այն իմաստը, որն ունի այսօր:

19-րդ դարի ընթացքում «իսլամիզմը» իսլամ իմաստով սկսում է օգտագործվել ամբողջ Եվրոպայում: Բազմաթիվ են այս տերմինի գործածությամբ գիտական գրականության օրինակները: 1900 թվականին լույս տեսած «Նոր անգլերենի բառարանում» (այժմ հայտնի է որպես «Օքսֆորդի անգլերեն բառարան») «իսլամիզմը» բնորոշվում էր որպես «մուսուլմանների կրոնական համակարգ. Մահմեդականություն»: Միաժամանակ, գրքում կարելի էր հանդիպել նաև «իսլամիստ» տերմինին, որը սահմանվում էր որպես «ուղղափառ մահմեդական»:

Չնայած այս զարգացումներին՝ պետք է նշել, որ ընդհուպ մինչև 20-րդ դարի առաջին կեսը ակադեմիական շրջանակում տարածված էին և զուգահեռաբար օգտագործվում էին «մահմեդականություն», «իսլամիզմ», «մահմեդական» և «իսլամիստ» տերմինները: Այս տերմինների օգտագործումից չեն խուսափել նույնիսկ եվրոպական գիտական միջավայրում իսլամագիտությունը որպես առանձին գիտակարգ հիմնադրողները: Իրավիճակը փոխվում է 1946 թ.-ին, երբ բրիտանացի արևելագետ Հ.Ա.Ռ. Գիբբը իր գրքի ներածության մեջ գրում է, որ «ժամանակակից մուսուլմանները չեն սիրում «մահմեդական և մուհամմադականություն» տերմինները, քանի որ, ըստ իրենց՝ դրանք կրում են Մուհամմադի երկրպագության տարրեր, ինչպես որ քրիստոնյաներն ու քրիստոնեությունը ենթադրում են Քրիստոսի երկրպագություն»: Գրքի հաջորդող տեքստում Գիբբը հավատացյալներին անվանում էր մուսուլման, իսկ հավատքը՝ իսլամ: 20-րդ դարի վերջում սկսեց անհետանալ նաև «իսլամիզմ» տարբերակը: Շատ գիտնականներ պարզապես նախընտրում էին ավելի կարճ և զուտ արաբական տերմինը՝ իսլամ:

20-րդ դարի վերջին աշխարհում ընթացող գործընթացները բացահայտեցին նոր իրողություններ, որոնցում իսլամը սկսում է նոր գաղափարական և քաղաքական մեկնաբանություններ ստանալ, ինչն իր հերթին ստիպեց գիտնականներին և հետազոտողներին այլընտրանքային հասկացություններով տարբերակել միմյանցից իսլամը՝ որպես ժամանակակից գաղափարախոսություն, և իսլամը՝ որպես «միայն հավատ»:

«Արամատականություն» (ֆունդամենտալիզմ)

«Ֆունդամենտալիզմ» տերմինը ծագել է Ամերիկայում 1920-ական թվականներին բողոքական քրիստոնյաների շրջանում: Նրանք ձգտում էին վերահաստատելու իրենց հավատը Աստվածաշնչի բառացի ընկալման և քրիստոնեական հավատի «հիմքերի» միջոցով: 20-րդ դարասկզբին այս քրիստոնյաներն իրենց անվանում էին ֆունդամենտալիստներ:

Այս նույն ժամանակահատվածում բրիտանացի պատմաբան Առնոլդ Թոյնբին իր հետազոտությունների մեջ կիրառում է «իսլամական ֆունդամենտալիստներ» եզրույթը: Դատելով տեքստից՝ կարելի է ասել, որ Թոյնբին այս եզրի տակ նկատի ունի մուսուլման ավանդապաշտներին և չի նկարագրում այն երևույթները, որոնք այսօր հայտնի են որպես «իսլամական արամատականություն»: Պետք է նշել, որ նույն ընթացքում Եգիպտոսում հիմնադրվում է «Մուսուլման եղբայրներ» կազմակերպությունը, որը մեծ դեր ունի իսլամական արամատականության ստեղծման և տարածման գործում:

«Իսլամական ֆունդամենտալիզմ» եզրը լայն տարածման նոր փուլ է թևակոխում 1979 թ. Իրանի Իսլամական հեղափոխությունից հետո՝ շնորհիվ հիմնականում անգլալեզու

լրատվամիջոցների, որոնք Իրանում տեղի ունեցող դեպքերը լուսաբանելիս նախընտրություն էին տալիս այդ տերմինին:

«Ֆունդամենտալիզմ» եզրի հաճախակի փոխկապակցված օգտագործումը իսլամի հետ այնքան է տարածվում, որ արդեն 1990 թ. «Օքսֆորդի անգլերենի համառոտ բառարանը» «ֆունդամենտալիզմ» տերմինը սահմանում էր ոչ միայն որպես «ավանդական բողոքական հավատի խստապահանջ պահպանում», այլ նաև որպես «հնագույն կամ հիմնարար ուսմունքների խստապահանջ պահպանում. ցանկացած կրոնի, **հատկապես իսլամի**»: Չնայած այս ամենին՝ ակադեմիական միջավայրում սկսում են տարածայնություններ առաջանալ «իսլամական ֆունդամենտալիզմ» եզրի սահմանման և կիրառության շուրջ:

Արևմտյան ակադեմիական խոսույթի իրար հակադրվող բևեռները խարսխվում էին Բեռնարդ Լյուիսի ու Ջոն Էսպոզիտոյի տեսակետների վրա: Առաջինը իսլամական խմբերի ակտիվացումը քաղաքական դաշտում անվանում էր «իսլամական ֆունդամենտալիզմ», իսկ Էսպոզիտոն դեմ էր այս տերմինի կիրառությանը և կարծում էր, որ դա չի բնութագրում այն գործընթացները, որոնք տեղի են ունենում մուսուլմանական ումմայում⁵: Բեռնարդ Լյուիսը պնդում էր, որ չնայած այն հանգամանքին, որ «ֆունդամենտալիզմ» եզրը առաջացել է քրիստոնեական միջավայրում, այն կիրառելի է նաև 20-րդ դարի վերջին իսլամական միջավայրում տեղի ունեցող գործընթացները նկարագրելիս: Նրա կարծիքով այդ գործընթացները հետադիմական են և այդպիսով հակամոդեռնիստական, քանի որ իսլամ դավանողները ընդունում են Ղուրանի և Մուսնալի ավանդական մեկնաբանությունները, և իսլամում չկան ազդեցիկ լիբերալ և մոդեռնիստ աստվածաբաններ, ապա այդպիսով «իսլամական ֆունդամենտալիզմ» եզրը նկարագրում է այդ գործընթացները և կիրառելի է նրանց նկատմամբ:

Հակառակ Բեռնարդ Լյուիսի՝ Ջոն Էսպոզիտոն դեմ էր իսլամի վրա հիմնված շարժումները նկարագրելիս «իսլամական ֆունդամենտալիզմ» եզրի օգտագործմանը: Այս համատեքստում նա նախընտրում էր խոսել «իսլամական վերածննդի» և «իսլամական ակտիվության», այլ ոչ թե «իսլամական ֆունդամենտալիզմի» մասին, քանի որ «ֆունդամենտալիզմ» եզրը վերաբերում է հետադիմական և սուրբ գրքերը տառացի ընկալող ուժերին: Ընդունելով այն հանգամանքը, որ իսլամական շարժումներում կան խմբեր, որոնց հանդեպ կիրառելի է «ֆունդամենտալիզմ» եզրը վերոնշյալ իմաստով, այդուամենայնիվ, շատ և ազդեցիկ են այն շարժումները, որոնց առաջնորդները առաջադեմ են կրթություն են ստացել Արևմուտքում, չեն խուսափում ժամանակակից տեխնոլոգիաներից և այլն:

Չնայած ակադեմիական միջավայրի այս բանավեճերին՝ մեղիա դաշտը ազատորեն կիրառում էր «ֆունդամենտալիզմ» եզրը իսլամում և իսլամադավան երկրներում գործընթացները նկարագրելու համար: Շնորհիվ մեղիադաշտի նման կիրառությանը և մուլտիպլիկացիայի՝ «ֆունդամենտալիզմ» եզրը սկսեց զուգորդվել իսլամի հետ, և ի վերջո ոչ մասնագետ ընթերցողի մեջ «իսլամ» ու «ֆունդամենտալիզմը» սկսեցին նույնականանալ:

Արևմտյան ակադեմիական խոսույթից «ֆունդամենտալիզմ» տերմինը մուտք գործեց նաև արաբալեզու միջավայր: Այս երևույթը թարգմանվեց «ուսուլի» եզրով և լայն տարածում գտավ: Ըստ էության՝ այս նորաբանությունը կիրառելի դարձավ շնորհիվ ազդեցիկ փիլիսոփաներ սիրիացի Սադիկ Ալ-Ազմի և եգիպտացի Հասան Հանաֆիի, որոնք, ուսումնասիրելով իսլամական

⁵«Ումմա» եզրը հաճախ թարգմանում են որպես «ազգ», «պետություն», «համայնք», սակայն այդ եզրերը չեն արտահայտում «ումմա» հասկացության ամբողջական իմաստը: Նախընտրելի է «ումման» սահմանել որպես իսլամում հասարակության կազմակերպման մոդել:

նոր շարժումների գաղափարախոսությունները, եկան այն եզրակացության, որ արաբերեն «ուսուլի» (հիմք, արմատ) եզրը լիովին նկարագրում է այդ շարժումների գաղափարախոսությունները: Չնայած այս հանգամանքին՝ իսլամական կրոնական շրջանակում ակունքներին վերադարձ բնութագրող երևույթներն ու գործընթացները շարունակվում էին արտահայտվել «սալաֆի» տերմինով, որի մասին կխոսենք ստորև:

1995 թ. «Օբսֆորդի ժամանակակից իսլամական աշխարհի հանրագիտարանում» «ֆունդամենտալիզմ» հոդվածում բերվում է վերջինիս այլընտրանքային եզրերի ցանկ, որոնց թվում են «իսլամիզմը», «ինտեգրիզմը», «նոր-նորմատիվ իսլամը», «նոր-ավանդական իսլամը», «իսլամական վերածնունդն» ու «իսլամական նեթիվիզմը»:

«Իսլամական արմատականությունը» ժամանակակից մուսուլմանական կրոնական և քաղաքական շարժումների ընդհանուր բնութագրման համար օգտագործվող տերմին է, որի գաղափարախոսությունը հիմնված է տարբեր խմբերի և շարժումների կողմից Մուհամմադ մարգարեի ժամանակաշրջանի, այսինքն՝ վաղ իսլամի կրոնական, սոցիալական և քաղաքական փորձին վերադարձի մեկնաբանության վրա:

Մուսուլմանական արժեհամակարգի համար ժամանակի ընթացքում առաջացած և մարդկային անկատարությամբ պայմանավորված թերությունները շտկելու նպատակով ակունքներին վերադառնալու տրամաբանությունը հիմնային մոդել է, որն ապահովում է հոգևոր ավանդույթի և սոցիալ-կրոնական ինքնագիտակցության պահպանումն ու զարգացումը: Իսլամի պատմության ընթացքում ակունքներին ապավինումը և արմատներին վերադարձը ճգնաժամը հաղթահարելու հիմնական միջոց է եղել:

Աղբյուրներին վերադարձը նկարագրող մոդելը ամրագրված և արտացոլված է իսլամական ավանդույթի մեջ: Այս տրամաբանությունը սուննիական ավանդույթի մեջ նշելու համար օգտագործվում է «սալաֆիա» տերմինը, որը որոշակիորեն հարաբերվում է «արմատականություն» տերմինի հետ, սակայն այս տերմինը սուննիական իսլամում օգտագործվում է ավելի լայն համատեքստում:

Իսլամական ավանդական խոսույթում «սալաֆի» կամ «ալ-սալաֆ ալ-սալիհուն» (բարեպաշտ նախնիները) հասկացության շրջանակը ներառում է մուսուլմանների առաջին երեք սերունդները՝ Մարգարեի զինակիցների, նրանց աշակերտների և վերջիններիս հետևորդների ու աշակերտների: Ըստ էության, սալաֆիները նրանք են, որոնք կրոնական հարցերը լուծելիս դիմում են Ահլ ալ-Սալաֆի, այսինքն՝ վերոնշյալ երեք սերնդի փորձին: Միննույն ժամանակ ավանդույթը սալաֆիների շրջանակի մեջ է ներառում սուննիական կրոնաիրավական դպրոցների մագհաբների հիմնադիրներին:

Իսլամական ժառանգության վերածնունդը ժամանակակից մուսուլման արմատականների կողմից մեկնաբանվում է որպես վաղ իսլամական սոցիալական ինստիտուտների և դրանց հետ կապված սոցիալական և իրավական նորմերի վերականգնում՝ բոլոր տեսակի նորամուծությունների (բիդա) ամբողջական ժխտման միջոցով: Այնուամենայնիվ, դասական իսլամական իրավունքի տեսությունը նորամուծությունները բաժանում է «լավ» (բիդա հասանա) և «մեղսավոր» (բիդա սայյա) կատեգորիաների: Առաջինը ներառում է այնպիսի նորամուծություններ, որոնք չեն հակասում իսլամի հավատի էությանը: Ժամանակակից արմատականները նույնացնում են իսլամի էությունը Ղուրանի և Մուննայի բառացի ընկալմանը, ինչը հանգեցնում է նրան, որ այս աղբյուրներում տեքստային արտահայտություն չունեցող ցանկացած նորամուծություն ընդունվում է որպես «մեղսավոր նորամուծություն»: Արմատականների տրամաբանության բնութագրական առանձնահատկությունն է

Ճշմարտության մենաշնորհումը: Ժամանակակից արմատական հոսանքներում սա առավել հստակ դրսևորվում է «անհավատության մեջ մեղադրանքի և աշխարհից հեռանալու» (թաքֆիր) գաղափարի մեջ: Ըստ այս խմբերի՝ ժամանակակից աշխարհը ընկղմված է տգիտության, անտեղյակության մեջ, և իրենք՝ որպես «փրկվածներ», առաքելություն ունեն աստվածային ճշմարտությունը աշխարհում տարածելու գործում:

Նման տրամաբանության վառ դրսևորում էր վահաբական շարժումը, որը ծագեց Արաբիայում 18-րդ դարի կեսերին Մուհամմադ իբն Աբդ ալ-Վահաբի ուսմունքի հիման վրա և հետագայում դարձավ Մաուրյան Արաբիայի առաջին պետական միավորի գաղափարախոսությունը:

1920-ականներին իսլամական քաղաքական նախագիծ առաջադրելու փորձ կատարվեց «Մուսուլման եղբայրներ» ասոցիացիայի կողմից, որը հիմնադրվել է Եգիպտոսում 1929 թ. Հասան ալ-Բաննայի կողմից:

«Մուսուլման եղբայրներ» առավել ծայրահեղական թևի գաղափարախոսը Մայիդ Կուրբն էր, որը «թաքֆիրի» (անհավատության մեջ մեղադրանքի և աշխարհից հեռանալու) տեսության ժամանակակից մշակման գործում սկզբունքային դերակատարություն ունի: Ըստ այդմ՝ այս տեսության էությունն այն էր, որ աշխարհի կողմից շարիաթի՝ որպես իրավունքի աղբյուրի մերժման պատճառով է, որ աշխարհում գերակշռում է հոգևոր տգիտությունը (ջահիլիան). ճշմարիտ Աստծուն չճանաչելը, ճշմարիտ հավատի (իսլամ) ուրացումը և Ալլահից բացի այլ աստվածներին երկրպագելը: Ելնելով այս նախադրյալից՝ Կուրբը, հակառակ իսլամական ավանդույթի, մարդկությանը բաժանում է ոչ թե մուսուլմանների և ոչ մուսուլմանների, այլ մուսուլմանների, որոնք խստորեն հետևում են շարիաթի օրենքին, և «անհավատների», այսինքն՝ մնացած բոլորի: Անհավատների թվին է դասում նաև մուսուլմանների մեծամասնությունը:

Իսլամական մտածողներից շատերը «իսլամական արմատականությունը» դիտարկում են որպես Արևմուտքի «քաղաքակրթական մարտահրավերին» իսլամական աշխարհի «պատասխանելու» փորձ և սոցիալ-մշակութային ճգնաժամի իրավիճակում դիտարկում են այն որպես իսլամական ինքնության պահպանման հիմնական մոդել: Այս տեսանկյունից իսլամականության դրսևորումը քաղաքականության մեջ՝ «քաղաքական իսլամը», իսլամական հասարակության գոյատևման համար «արևմտյան գլոբալիզմին» այլընտրանք գտնելու փորձ է, որը ստանում է թե՛ հանդուրժողական և թե՛ արմատական ու ծայրահեղական դրսևորումներ:

Իսլամականություն (Իսլամիզմ)

Ժամանակակից իսլամական կրոնական և քաղաքական շարժումները, ինչպես արմատական, այնպես էլ չափավոր, առավել հաճախ միավորվում են «իսլամականություն» (իսլամիզմ) տերմինով: Իսլամիզմի՝ որպես քաղաքական նախագծի գաղափարական արմատները սովորաբար վերագրվում են մուսուլմանական բարեփոխությունների առաջին տեսաբաններից մեկին՝ Ջամալ ադ-Դին ալ-Աֆղանիին, սակայն, ինչպես նշվեց վերևում, տերմինը գալիս է ֆրանսիական ակադեմիական միջավայրից, որը փորձեց վերլուծել և հասկանալ այն գործընթացները, որոնք տեղի էին ունենում 1970-ական թվականների վերջում իսլամական նոր ձևավորվող շարժումների շրջանում: Այս երևույթները նկարագրելու համար ֆրանսիական ակադեմիական միջավայրում սկսեց օգտագործվել «իսլամականություն» (իսլամիզմ՝ Islamisme) եզրը, որն այդ տերմինի յուրօրինակ վերականգնում կարելի է համարել: Սակայն պետք է նշել, որ նույն այդ ֆրանսիական ակադեմիական շրջանակներում միանշանակ չընդունվեց այս տերմինը: Հիմնական հակադարձողներից էր Մաքսիմ Բոքինսոնը, որը կարծում

էր, որ «իսլամիզմ» տերմինը չի տարանջատում սովորական հավատացյալին մուլեոնադից: Նա առաջարկում էր «ինտեգրիզմ»⁶ տերմինը, քանի որ այդ հասկացությունը արդեն իսկ գիտական շրջանառության մեջ առկա էր և լիովին բնութագրում էր այն գործընթացները, որոնցով անցնում էին իսլամական շարժումները: Նրա ջանքերն ապարդյուն անցան, քանի որ հետագա գիտական գրականության մեջ ամրագրվեց «իսլամիզմ» եզրը:

Անգլալեզու ակադեմիական միջավայրում «իսլամիզմ» եզրի լայն կիրառությունը ընդունված է կապել ֆրանսիացի արաբագետ Ժիլ Կեպելի անվան ու հատկապես նրա 1984 թ. ֆրանսերեն, ապա 1985 թ. անգլերեն հրատարակված «Մուսուլմանական էքստրեմիզմը Եգիպտոսում. Մարգարեն և փարավոնը» աշխատության հետ, որը բեկում մտցրեց տվյալ եզրի կիրառության հարցում: Անգլերեն թարգմանության մեջ ֆրանսերեն «*islamiste*» եզրը անգլերեն թարգմանվում է «Islamicist», որից էլ հետագայում «իսլամիստ» եզրը մտնում է գիտական լայն շրջանառության մեջ:

«Իսլամիզմ» և «իսլամիստ» եզրերը ոչ միանշանակորեն ընդունվեցին ակադեմիական միջավայրում, եղան բազմաթիվ հակընդդեմ հրապարակումներ, սակայն 1990-ականների վերջից և 2000-ականների սկզբից կարելի է ասել, որ այս եզրերը սկսում են ավելի ու ավելի հաճախակի օգտագործվել՝ իսլամի քաղաքական դրսևորումները նշելու համար, ինչն օգնում է տարբերակում մտցնելու իսլամի «ծայրահեղական» և չափավոր դրսևորումների միջև: Պետք է նշել նաև, որ այս եզրերի կիրառությունը մեղիատիրոջություն միանշանակ չէր, շատ հաճախ նկատվում է «իսլամական ֆունդամենտալիզմ», «իսլամիզմ», «ծայրահեղականություն» եզրերի կիրառության խառնաշփոթ:

Այս բանավեճին զուգահեռ 2000-ականների սկզբին ակադեմիական շրջանակներում սկսվում է մեկ այլ բանավեճ: Մասնավորապես սեպտեմբերի 11-ի ահաբեկչությունից հետո որոշ հետազոտողներ փորձեր են անում վերաիմաստավորելու և հասկանալու այն հայեցակարգերը, որոնցով առաջնորդվում են իսլամական շարժումները: Արդյունքում գալիս են այն եզրակացության, որ նոր իրավիճակում գործող իսլամական շարժումների գործողությունները որակապես տարբերվում են նախորդ շրջանից, և սկսում են ձևակերպվել նոր հայեցակարգեր: Այս նոր իրականության մեջ գործող «հին-նոր» իսլամական շարժումները տարանջատելու համար ակադեմիական միջավայրում սկսում են օգտագործվել «ետիսլամականություն» (postislamism) և «նեոֆունդամենտալիզմ» տերմինները:

Արդի իսլամական շարժումների ճանաչված մասնագետ Օլիվիեր Ռուան, որը նաև համարվում է «փոստիսլամիզմ» եզրի հեղինակը, կարծում էր, որ «իսլամիզմը», ըստ էության, իսլամական միջավայրում կառուցակցված երևույթ է, իսկ այն հանգամանքը, որ թվում է, թե ծագում է արևմտյան ակադեմիական միջավայրից, այն պատճառով է, որ Այաթոլլահ Խոմեյնիի նման մտածողները խորապես ազդված էին արևմտյան արմատական մտքով:

Սեպտեմբերի 11-ի դեպքերը, ինչպես նաև «Ալ-Կաիդայի» դեմ պայքարը Աֆղանստանում նպաստեցին նրան, որ պակիստանահնդկական անգլալեզու մեղիադաշտում կիրառվող «ջիհադիզմ» (ջիհադականություն) տերմինը լայն տարածում գտնի: Արևմտյան մեղիադաշտը ահաբեկչական գործողությունները, հատկապես անձնագոհ պայթյուններով իրականացվողները լուսաբանելիս զուգահեռաբար սկսում են կիրառել «ռազմատենչ իսլամ» (militant Islam) և «զինյալ մուսուլմաններ» (militant Muslims) եզրույթները:

⁶Ֆրանսիական հասարակաքաղաքական և փիլիսոփայական խոսույթում այս եզրով բնորոշվում են բոլոր կրոնական ծայրահեղական շարժումները:

Աստիճանաբար բռնության և ռազմատենչության տարրերը սկսում են դառնալ իսլամական շարժումների գործողությունների մեկնաբանման անբաժան մասը:

Հետազոտողների այն մասը, որը կարծում էր/է, որ պետք է տարանջատում մտցնել բռնության գործողություններով առաջնորդվող և հանդուրժողական իսլամական շարժումների միջև, առաջարկում են վերջիններին բնութագրել որպես «քաղաքական իսլամի» ներկայացուցիչներ, ինչը ինքնին խնդրահարույց է, քանի որ պատմականորեն իսլամում կրոնը տարանջատված չէ քաղաքականությունից:

Տարածաշրջան, ցանց և ցանցային համակարգեր. տարածաշրջանային իսլամական ծայրահեղական հիմնական խմբեր (պատմություն, գործունեություն)

Արդի զարգացումների, նոր տեխնոլոգիաների հասանելիության պարագայում պետք է արձանագրենք, որ այսօր տարածությունները սեղմվել են, ինչի արդյունքում փոխվել է տարածության մեջ յուրաքանչյուր կետի հասանելիության ժամանակը: Տարածությունները սեղմվել են, իսկ ժամանակը՝ կարճացել: Այս նոր իրավիճակում «տարածաշրջան» հասկացությունը նույնպես փոխվել է: Մեր տարածաշրջանն այլևս միայն Հարավային Կովկասը կամ Մերձավոր Արևելքը չէ: Այն ավելի լայն է և իր մեջ ներառում է այն արեալը, որն, ըստ Դավիթ Հովհաննիսյանի մշակած տեսության, անվանվում է «Երեք ծովերի համակարգ»: Մեր տարածաշրջանը ներառում է Կասպից, Սև և Միջերկրական ծովերի ավազանների արեալը:

Ըստ Դավիթ Հովհաննիսյանի՝ ցանցերի մասին տեսության՝ «ցանցերը լինում են երեք տիպի. ա) տեքստ և կենտրոն ունեցող ցանցեր, բ) միայն կենտրոն ունեցող ցանցեր և գ) միայն տեքստ ունեցող ցանցեր: Տեքստ և կենտրոն ունեցող ցանցն ամենահեշտ աշխատողը, բայց միաժամանակ ամենախոցելին է: Տեքստ չունեցող ցանցը ունի միայն կառավարման կենտրոն: Այդ պատճառով կենտրոնը քանդելու դեպքում այն դադարում է գոյություն ունենալուց՝ ի տարբերություն տեքստ և կենտրոն ունեցող ցանցի. երբ նման ցանցի կենտրոնը քանդվում է, տեքստը շարունակում է աշխատել, կամ երբ տեքստը սկսում է ջնջվել, կենտրոնն անընդհատ փոխում, լրացնում ու վերականգնում է իր տեքստը: Տեքստն այն է, ինչն արտահայտում է արժեքային հիմքը և ինքնությունը»: Բացարձակ ազատ է այն ցանցը, որն ունի միայն տեքստ: Մուտքը միայն տեքստի միջոցով է: Ցանցին միանալը կախված է տեքստի գրավչությունից: Իսլամական շարժումների հիմնական մասը՝ կլիմի ծայրահեղական, թե ոչ, իր տեսակով դասվում է երրորդ տիպի ցանցային կառույցների շարքին: Այսինքն՝ դրանք տեքստ ունեցող, բայց կենտրոն չունեցող ցանցեր են:

Մեր տարածաշրջանի պետությունների մի մասն ունի կազմակերպությունների և անհատների ցուցակներ, որոնց համարում է ահաբեկչական և ծայրահեղական գաղափարների կրողներ, իսկ պետությունների մյուս մասը առաջնորդվում է միջազգային կառույցների համապատասխան ցուցակներով: Հայաստանը պատկանում է վերջիններիս շարքին: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ ձեռնարկը քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների համար է, և նրանց գործընկերները հիմնականում միջազգային կառույցներն են, ապա կսահմանափակվենք ՄԱԿ-ի և ԵՄ-ի ահաբեկչական կառույցների ցանկերի՝ մեր տարածաշրջանին վերաբերող հատվածների ներկայացմամբ:

Եվրոպական միության ցուցակ

2001 թ. դեկտեմբերի 27-ին ԵՄ խորհուրդը ընդունում է 2001/931/CFSP ընդհանուր դիրքորոշումը, որով սահմանում է ահաբեկչական գործողությունների մեջ ներգրավված անհատների, խմբերի և իրավաբանական անձանց և նրանց սահմանափակող միջոցառումների ցուցակ: Ցուցակում ընդգրկված են Եվրոպական միության տարածքում և դրանից դուրս գործող

անհատներ և խմբեր: Այս ցանկը պարբերաբար, առնվազն վեց ամիսը մեկ թարմացվում է: Վերջին թարմացումը տեղի է ունեցել 2019 թ. հունվարի 8-ին: Ցանկը ներկայացնելիս առաջնորդվում ենք վերջին թարմացմամբ:

Կազմակերպություններ

Ֆաթի հեղափոխական խորհուրդն ավելի հայտնի է «Աբու Նիդալի կազմակերպություն» անունով: Հիմնադրվել է 1973 թ. պաղեստինցի ազգայնական Աբու Նիդալի կողմից Յասեր Արաֆաթի հետ նրա ունեցած անհամաձայնության արդյունքում: Աբու Նիդալը Յասեր Արաֆաթին համարում էր պաղեստինյան ազգային գաղափարի դավաճան, քանի որ վերջինս պատրաստ էր գործելու ոչ միայն ահաբեկչական, այլ նաև դիվանագիտական մեթոդներով:

1973 թ. Աբու Նիդալը Ֆաթհի դատարանի կողմից մահվան դատապարտվեց, սակայն իրաքցիների օգնությամբ թաքնվելով՝ հիմնեց նոր կազմակերպություն՝ «Ֆաթի հեղափոխական խորհուրդ»: 1980 թ. հաստատվեց Սիրիայում, որտեղից էլ սկսեց ահաբեկչական գործողություններ իրականացնել ՊԱԿ-ի և Հորդանանի դեմ սիրիացիների պատվերով:

Աբու Նիդալի կազմակերպությունը իրականացրել է բազմաթիվ ահաբեկչություններ Եվրոպայում, Ասիայում, Մերձավոր Արևելքում: Կազմակերպության խոշոր ահաբեկչական գործողություններից է Լոնդոնում Բուրայելի դեսպան Շլոմո Արգովի սպանությունը 1982 թ. հունիսին, ինչը հանգեցրեց Լիբանանյան պատերազմին, և Հռոմի ու Վիեննայի օդանավակայաններում 1985 թ. դեկտեմբերի 27-ին իրականացված միաժամանակյա ահաբեկչություններին: Կազմակերպությունը ազգային-ազատագրական պայքարի միակ միջոցն է համարում Բուրայելի ոչնչացման համար զինված պայքարը:

«Ալ Աքսայի նահատակների բրիգադը» պաղեստինյան ռազմականացված խումբ է, որն իրեն դիրքավորում է որպես Ֆաթհի ճյուղ: Ստեղծվել է 2001 թ., ահաբեկչական կազմակերպություն է համարվում Բուրայելում, ԱՄՆ-ում, Կանադայում, ԵՄ անդամ պետություններում և Ճապոնիայում: Կազմակերպության կապը Ֆաթհի հետ ոչ միանշանակ է: Երկրորդ ինթիֆադայի ժամանակ Պաղեստինի ազատագրման կազմակերպությունը հերքել է իր մասնակցությունը ահաբեկչական գործողություններին, Ֆաթհի ղեկավարությունը հայտարարել է, որ երբեք որոշում չի կայացրել այս կազմակերպության ստեղծման համար և այն չի համարում իր ռազմական թևը:

2004 թ. Պաղեստինի ինքնավարության վարչապետ Ահմեդ Քուրեյին հաստատեց, որ «Ալ Աքսայի նահատակների բրիգադը» Ֆաթհի մասն է: Դրանք գտնվում են վերջինիս ղեկավարության տակ, և Ֆաթհը ստանձնում է այդ խմբի ողջ պատասխանատվությունը: Կազմակերպությունը գործում է հիմնականում Արևմտյան ափին, իրականացրել է հարձակումներ Բուրայելում և Գազայի շրջանում:

«Ալ Աքսա հիմնադրամը» միջազգային բարեգործական հիմնադրամ է, որը ստեղծվել է 1997 թ.: Գլխամասային գրասենյակը գտնվում էր Գերմանիայում մինչ 2002 թ. հուլիսը, երբ այն փակվեց Գերմանիայի իշխանությունների կողմից: Կազմակերպությունն ունի մասնաճյուղեր Նիդերլանդներում, Դանիայում, Բելգիայում, Շվեդիայում, Պակիստանում, Հարավային Աֆրիկայում, Եմենում և այլն: Կառույցը ներկայանում է որպես քաղաքական կազմակերպություն, որը բավարարում է Արևմտյան ափում, Գազայում, Լիբանանում և Հորդանանում ապրող կարիքավոր պաղեստինցիների կրոնական, մշակութային և սոցիալական պահանջները: «Ալ Աքսա հիմնադրամը» հերքում է իր կապը տարբեր ահաբեկչական կազմակերպությունների (այդ թվում նաև Համասի) հետ:

«Ջամա' ա իսլամիյա» (Իսլամական խումբը) եգիպտական ամենամեծ ռազմական խումբն է, որը գործում է 1970-ական թվականներից: Ահաբեկչական է համարվում ԱՄՆ-ում, ՄԲ-ում և ԵՄ անդամ պետություններում խմբի նպատակը եգիպտական կառավարության տապալումն է ու դրա փոխարինումը իսլամական պետությունով: Խումբն իրականացրել է զինված հարձակումներ եգիպտական իշխանությունների, դպտի քրիստոնյաների դեմ: Խմբի կողմից իրականացված բազմաթիվ հարձակումների թվում էր 1997 թ. Լյուկսոթի ահաբեկչությունը, որը խլել է 58 օտարերկրացի զբոսաշրջիկի կյանք: «Իսլամական խումբը» պատասխանատվություն է ստանձնել 1995 թ. Եթովպիայում, Ադիս Աբեբայում Եգիպտոսի նախագահ Հոսնի Մուբարաքի սպանության փորձի համար: Խումբը գործում է հիմնականում Եգիպտոսի հարավային նահանգներում, աջակցություն ունի Կահիրեում, Ալեքսանդրիայում և այլուր: Ներկայացված է Միացյալ Թագավորությունում, Աֆղանստանում, Եմենում և Եվրոպայի տարբեր երկրներում: Համաձայն ԱՄՆ պետդեպարտամենտի՝ Իրանը, Բեն Լադենը և աֆղանցի զինվորականներն աջակցում են կազմակերպությանը:

«Մեծ Արևելքի մարտիկների իսլամական ճակատը» իսլամական ռազմական կազմակերպություն է, որը հետևում է թուրք հայտնի հեղինակ, բանաստեղծ և իսլամի գաղափարակիր Նեջիփ Ֆազիլ Կիզակուրեկի առաջ քաշած «Մեծ Արևելք» գաղափարախոսությանը: Խմբի նպատակն է սուննի իսլամական դաշնություն ստեղծել Մերձավոր Արևելքում և վերստեղծել խալիֆայությունը: Կազմակերպությունը հիմնվել է 1970 թ. Սալիհ Իզզեթ Էրդիշի կողմից, որն ավելի հայտնի է Սալիհ Միրզաբեյոլլի անունով: Կազմակերպության նպատակն է տապալել Թուրքիայի աշխարհիկ իշխանությունը և սահմանադրական կարգը և փոխարինել այն իսլամական օրենքով և իրավունքով, սկզբում՝ Թուրքիայում, ապա արդեն ամբողջ աշխարհում: Կազմակերպությունը Թուրքիայի կողմից ներգրավված է Թուրքիայում գործող 12 ակտիվ ահաբեկչական կազմակերպությունների ցանկում 2007 թ-ից: 2001 թ-ից Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետության կողմից որակվել է անօրինական կազմակերպություն: Ներգրավված է նաև ԱՄՆ ահաբեկչական կազմակերպությունների ցուցակում:

«Համաս» (Իսլամական դիմադրության) շարժումը հիմնվել է 1987 թ. պաղեստինյան առաջին ինթիֆադայից հետո՝ եգիպտական «Մուսուլման եղբայրներ» և «Պաղեստինյան իսլամական ջիհադ» Գազայի հատվածում գործող ահաբեկչական կազմակերպությունների հիման վրա: Կազմակերպության պաշտոնական էջում նշված է, որ «Համասը» ազգային պաղեստինյան շարժում է, որը համագործակցում է պաղեստինցիների և ամբողջ աշխարհի իսլամական տարբեր մարմինների և կառույցների հետ Իսրայելի շրջափակման դեմ պայքարելու, Պաղեստինի հողերը և Երուսաղեմը ազատագրելու, իսլամական և քրիստոնեական սուրբ վայրերը ազատագրելու, պաղեստինցի փախստականների՝ հայրենիք վերադառնալու իրավունքը իրականացնելու և ինքնիշխան Պաղեստին պետություն հիմնադրելու համար:

Կազմակերպությունը գործում է Արևմտյան ափում, Գազայում և Իսրայելում: Համաձայն ԱՄՆ պետդեպարտամենտի տվյալների՝ որոշակիորեն ֆինանսավորվում է Իրանից, բայց հիմնականում աշխարհասփյուռ պաղեստինցիների և արաբական մյուս երկրների բարերարների կողմից, մասնակի նաև Արևմտյան Եվրոպայում և Հյուսիսային Ամերիկայում անցկացվող դրամահավաքներից: Ահաբեկչական է որակվում նաև կազմակերպության ռազմական թևը՝ «Իզզ ադ-Դին ալ-Կասսամ» բրիգադը:

«Հիզբալլահի» ռազմական թևը: 1982 թ. ի պատասխան Իսրայելի՝ Լիբանան ներխուժմանը ձևավորվում է «Հիզբալլահ» կազմակերպությունը, որի ռազմական թևի ուժերը գնահատվում են միջին չափի բանակին հավասարազոր և համարվում են ամենազորեղ ոչ պետական

դերակատարն աշխարհում. անգամ որոշ գնահատականներով ավելի ուժեղ, քան Լիբանանի բանակը: Գործում է Բեյրութի հարավային արվարձաններում, Բեքաայի հովտում և Լիբանանի հարավում: Ունի ցանցեր Եվրոպայում, Աֆրիկայում, Հս. Ամերիկայում, Հվ. Ամերիկայում և Ասիայում:

«**Քրդական աշխատավորական կուսակցությունը**» հիմնվել է 1974 թ., որի նպատակն է քրդական անկախ ժողովրդավարական պետության ստեղծումը Մերձավոր Արևելքում: Հիմնադիրը Աբդուլլահ Օջալանն է: Կազմակերպության հիմնական թիրախն են թուրքական կառավարության անվտանգության ուժերը Թուրքիայում, տեղացի թուրքական պաշտոնյաները և գյուղացիները, որոնք դեմ են կազմակերպության գործունեությանը: Գործում է Թուրքիայում, Եվրոպայում և մերձավորարևելյան տարածաշրջանում:

«**Պաղեստինյան իսլամական ջիհադ**» կազմակերպությունը ձևավորվել է 1970-ական թվականներին Գազայի հատվածում: Պայքարում է իսլամական Պաղեստին պետություն ստեղծելու և սրբազան պատերազմի միջոցով Իսրայելը ոչնչացնելու համար: Գործում է Իսրայելում, Արևմտյան ափում, Գազայի հատվածում, բայց խմբի ղեկավարները բնակվում են Մերձավոր Արևելքի այլ հատվածներում, այդ թվում Սիրիայում և Լիբանանում:

«**Պաղեստինի ազատագրման ազգային ճակատ**» կազմակերպությունը մարքսիստ-լենինիստական խումբ է, որ հիմնադրվել է 1967 թ. Ջորջ Հաբաշի կողմից որպես Պաղեստինի ազատագրության կազմակերպության անդամ, երբ առանձնացավ Արաբական ազգային շարժումից: Կազմակերպությունը Պաղեստինի պայքարը համարում է իրավական պայքար անօրեն գրավման դեմ և դեմ է Իսրայելի հետ բանակցություններին: Գործում է Սիրիայում, Լիբանանում, Իսրայելում, Արևմտյան ափում և Գազայի հատվածում:

«**Պաղեստինի ազատագրման ազգային ճակատի Գլխավոր շտաբ**» առանձնացել է 1968 թ. «Պաղեստինի ազատագրման ազգային ճակատ» հիմնական կազմակերպությունից՝ պնդելով, որ ցանկանում է առավելապես կենտրոնանալ զինված պայքարի և ավելի քիչ՝ քաղաքականության վրա: Ղեկավարվում էր Ահմադ Ջաբրիի՝ Սիրիական բանակի նախկին կապիտանի կողմից: Գործում է Լիբանանում, հիմնական թիրախը Իսրայելն է:

«**Հեղափոխական ժողովրդական ազատագրման կուսակցություն/ճակատը**» ձևավորվել է 1978 թ. Թուրքիայում, մարքսիստ-լենինիստական ձախակողմյան կուսակցություն է: 1980-ականներից ներգրավված է Թուրքիայի հանրապետության դեմ արշավներում: Գործում է Թուրքիայում, մասնավորապես Ստամբուլում: Թիրախը գործող իշխանություններն են, որ համագործակցում են կապիտալիստների հետ: Վերջին չհաջողված գործողությունը 2017 թ. Թուրքիայի նախագահ Էրդոգանի դեմ մահափորձն էր նրա Հունաստան այցի ընթացքում:

«**Քրդստանի ազատագրման բազեներ**» կազմակերպությունը քրդական ազգայնական զինված խմբավորում է Թուրքիայում, որը պայքարում է հարավարևելյան Թուրքիայում անկախ քրդական պետության ստեղծման համար: Ձևավորվել է 2004 թ.՝ անջատվելով «Քրդստանի բանվորական կուսակցությունից», և որդեգրել բռնի, զինված պայքարը թուրքական պետության դեմ: Գործողություններ է իրականացնում հիմնականում Թուրքիայի կենտրոնական և արևմտյան շրջաններում: 2016 թ. Ստամբուլի և Անկարայի պայթյունների պատասխանատվությունը կազմակերպությունը վերցրել է իր վրա: Վերջին շրջանում կատարված գործողությունները 2017 թ. Իզմիրի և Մարդինի հարձակումներն են ոստիկանական ուժերի վրա:

ՄԱԿ-ի՝ ահաբեկչական կազմակերպությունների ցուցակ

«Աբդալլահ Ազգամ Բրիգադներ» կազմակերպությունը ներգրավվել է ցուցակում 2014 թ.՝ համաձայն ՄԱԿ-ի ԱԽ 2161 բանաձևի, որպես Ալ-Կաիդայի հետ կապ ունեցող կազմակերպություն: Մասնավորապես առնչություններ ունի «Ալ-Նուսրա» կազմակերպության գործողությունների կամ գործունեության ֆինանսավորման, պլանավորման, նախապատրաստման կամ իրականացման հետ: Խուճբը ձևավորվել է 2009 թ., կազմված է երկու մասից՝ Լիբանանում գտնվող Զիյադ ալ-Ջարրի և Արաբական թերակղզում տեղակայված Յուսուֆ ալ-Ույարիի ջոկատներից:

«Աֆղանական աջակցության կոմիտեն» ներգրավվել է 2002 թ. ՄԱԿ-ի ԱԽ 1333 բանաձևի 8-րդ կետի համաձայն՝ որպես Ալ-Կաիդայի, Ուսամա բեն Լադենի կամ Թալիբանի հետ կապ ունեցող կազմակերպություն՝ Ալ-Կաիդայի գործողությունների կամ գործունեության ֆինանսավորման, պլանավորման, դյուրինացման, նախապատրաստման կամ իրականացման մեջ մասնակցության, ինչպես նաև նրա հետ կապի, նրա անվան տակ, նրա անունից կամ ի աջակցության նրա գործողությունների կամ գործունեությանը այլ ձևաչափով աջակցելու համար: Կազմակերպությունը ստեղծվել է Ուսամա բեն Լադենի կողմից Աֆղանստանում, ֆինանսական ղեկավարը Աբու Բաքր ալ-Ջազարին է, որը նաև ղեկավարել է Ուսամա բեն Լադենի ֆինանսավորման գործունեությունը, կազմակերպել տեղական արաբական ոչ կառավարական կազմակերպություններից դրամահավաքներ՝ հայտարարելով, թե այդ միջոցները այրիների և որբերի համար են:

«Ալ-Հարամեյն և Ալ-Աքսա մզկիթի բարեգործական հիմնադրամ» ներգրավվել է 2004 թ. ՄԱԿ-ի ԱԽ 1526 բանաձևի 8-րդ կետի համաձայն՝ որպես Ալ-Կաիդայի, Ուսամա բեն Լադենի կամ Թալիբանի հետ կապ ունեցող կազմակերպություն, որը ֆինանսական աջակցություն է ցույց տվել Բոսնիայում տեղակայված «Ալ-Ֆուրկան» կազմակերպությանը, որը նույնպես ահաբեկչական է համարվում:

«Ալ-Հարամեյն իսլամական հիմնադրամը» 1980-ականներին հիմնադրվել է Պակիստանում, ապա 1990-ականներին տեղափոխվել Մաուդյան Արաբիա: Այսօր ամբողջ աշխարհով ունի բազմաթիվ մասնաճյուղեր, որոնք բոլորը մայր կառույցի հետ միասին հայտնվել են ՄԱԿ-ի ցուցակում 2002 թվականից սկսած: Կազմակերպությունների գործունեությունը փոխկապակցված է «Ալ-Կաիդայի» և Ուսամա բեն Լադենի ցանցերի գործունեության հետ:

«Լևանտի ժողովրդի Ալ-Նուսրա ճակատ» կամ «Ալ-Նուսրա ճակատը» ձևավորվել է 2012 թվականին սիրիական ճգնաժամի ընթացքում՝ նպատակ ունենալով պայքարելու Բաշար Ալ-Ասադի իշխանության դեմ և երկրում հաստատել իսլամական իրավունքի վրա հիմնված պետություն: 2013 թ. պաշտոնապես դառնում է «Ալ-Կաիդայի» սիրիական մասնաճյուղը, իսկ 2015 թ. այլ ծայրահեղական խմբերի հետ ձևավորում են «Նվաճման բանակ» (Ջեյշ ալ-ֆաթահ) խումբը, որը բավականին լուրջ հաջողություններ է գրանցում սիրիական հակամարտության ընթացքում: Սակայն 2016 թ. կազմակերպությունը փոխում է իր անվանումը և դառնում «Լևանտի նվաճման ճակատ»: 2017 թ., լուրջ բախումներ ունենալով այլ զինյալ խմբերի հետ, կառույցը միաձուլվում է մի քանի այլ խմբերի հետ և վերանվանվում «Լևանտի ազատագրման կազմակերպություն» (*Հայաթ Թահրիր ալ-Շամ*): Հայտնի է, որ կազմակերպության ղեկավարը՝ Էմիր Աբու Մուհամմադ Ալ-Ջուլանին, սերտ կապերի մեջ է «Ալ-Կաիդայի» ղեկավար Այման ալ-Ջավահիրիի հետ և գտնվում է նրա գաղափարական ազդեցության տակ:

«Ալ-Կաիդա» կազմակերպությունը ՄԱԿ-ի ցուցակում հայտնվում է 2001 թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչություններից անմիջապես հետո: «Ալ-Կաիդան» միջազգային ահաբեկչական ցանց

է: Մերում է «Մաքթաբ ալ-Խիդամատ» (ամբողջական անունը՝ «Արաբ մուջահեդներին ծառայությունների մատուցման գրասենյակ») կառույցից, որը ստեղծվել էր Ուսամա բեն Լադենի հոգևոր առաջնորդ Շեյխ Աբդուլլահ Ազգամի կողմից որպես Աֆղանստանում մարտիկներին ֆինանսավորող կազմակերպություն: «Ալ-Կաիդան» համարվում է նրա դուստր կազմակերպությունը, որը հիմնադրվել է Բեն Լադենի և նրա զինակիցների կողմից: Ստեղծման օրվանից մինչև 1991 թ. կազմակերպությունը տեղակայված էր Փեշավարում: 1991-1996 թթ. կազմակերպությունը իր ղեկավարությամբ և մարտիկներով տեղափոխվում է Մուդան, իսկ 1996 թ. կազմակերպության անդամները վերադառնում են Աֆղանստան, որտեղ սերտ համագործակցում են «Թալիբան» շարժման հետ: 1998 թ. կարևոր է դառնում «Ալ-Կաիդայի» և «Եգիպտական իսլամական ջիհադի» միաձուլումը, որից հետո վերջինիս ղեկավար Այման Ազ-Չավահիրին դառնում է Բեն Լադենից հետո կազմակերպության երկրորդ կարևորագույն մարդը, իսկ Բեն Լադենի մահից հետո նա է «Ալ-Կաիդայի» առաջնորդը և ծայրահեղ իսլամական գաղափարախոսության ազդեցիկ քարոզիչներից մեկը:

«Ալ-Կաիդան» պատասխանատվություն է վերցրել մի շարք լայնածավալ ահաբեկչական գործողությունների համար Եվրոպայում, Հյուսիսային Աֆրիկայում, Մերձավոր Արևելքում և Հարավարևելյան Ասիայում: Կազմակերպությունն ունի բազմաթիվ դուստր կազմակերպություններ, որոնց սփռվածության աշխարհագրությունը ներառում է գրեթե ողջ երկրագունդը: Բոլոր այդ կառույցներն արգելված են և ընդգրկված են ՄԱԿ-ի ցուցակում::

4. Իսլամ. բացատրական բառարան-տեղեկագիրք

Ներկայացվող բացատրական բառարան-տեղեկագիրքը չի ընդգրկում իսլամի հասկացությունների ողջ շրջանակը: Բառարանում ներառված եզրույթների ընտրությունը կատարվել է ելնելով այն դրույթից, որ այն պետք է ընդգրկի իսլամի կարևորագույն, առանցքային հասկացությունները, ինչպես նաև նրանք, որ գտնվում են հայաստանյան հասարակական-քաղաքական հետաքրքրությունների շրջանակում: Բառարանի առաջին հատվածը իսլամի պատմության համառոտ ակնարկ է, որին հետևում է բուն բառարանային հատվածը:

Իսլամ

Աբրահամական կրոններից երրորդն է (հուդայականությունից և քրիստոնեությունից հետո): «Իսլամ» արաբերեն նշանակում է հանձնում՝ Ալլահին հանձնվելու, հնազանդվելու, խոնարհվելու, բացարձակորեն ենթարկվելու իմաստով: Ղուրանում այս եզրույթը հանդիպում է ութ անգամ՝ արտահայտելով հավատ (*իման*) և կրոն (*դին*) իմաստները: Իսլամի հիմնական սկզբունքները ձևակերպված են որպես հավատի հիմքեր (*արքան ալ-իման*) և կրոնի հիմքեր (*արքան ադ-դին*):

«Իսլամ» անվանման ներքո միավորվում են բազմաթիվ մուսուլմանական ուղղություններ և ճյուղեր, որոնցից շատերն իրարամերժ են և միմյանց հետ կատաղի պայքարի երկար պատմություն ունեն: Ներկայումս մուսուլմանների թիվն աշխարհում գնահատվում է, համաձայն տարբեր աղբյուրների, 1,5 մլրդ-ից մինչև 1,8 մլրդ, որոնց ճնշող մեծամասնությունը կազմում են *սուննիները*՝ մոտ 70-75 %: Սուննիներն, իրենց հերթին, բաժանվում են 4 հիմնական խմբերի՝ *մազհաբներին*: Մյուս մասը՝ 25-30 %-ը, *շիաներ* են, որոնք նույնպես բաժանվում են մի շարք ուղղությունների:

Իսլամը ստեղծվել և ձևավորվել է 7-րդ դարի առաջին կեսին Արաբական թերակղզու Հիջազ կոչվող շրջանում, որտեղ գտնվում են *Մեքքան* և *Մադինան*: Հիմնադիրն է *Մուհամմադ մարգարեն* (570-632):

Մարգարեի մահից հետո մուսուլմանական համայնքում՝ *ումմայում*, վեճեր ծագեցին այն հարցի վերաբերյալ, թե ինչ մեթոդով պետք է լուծվի համայնքի ղեկավարի խնդիրը. եթե ղեկավարը պետք է ընտրվի, ապա ո՞ր շրջանակից, իսկ եթե ոչ, ապա ո՞վ է նրա ժառանգորդը: Ժառանգորդի հարցի պատասխանն ակնհայտ էր, քանի որ կար Մուհամմադի հորեղբորորդի, փեսա և ամենահեղինակավոր զինակիցներից մեկը՝ *Ալի իբն Աբի Տալիբը*, որի շուրջը սկսեց ձևավորվել նրա կողմնակիցների շրջանակը (շիաթ Ալի), իսկ ընտրության հարցը հետագայում հիմք հանդիսացավ ումմայից առանձնացած առաջին ուղղության՝ *խարիջիականության* առաջացման համար:

Առաջին չորս *խալիֆները*, որոնց սուննիական մուսուլմանական ավանդությունը անվանում է «առաքինի խալիֆներ» (ալ-խուլաֆա առ-ռաշիդուն), ընտրվեցին, սակայն չորրորդ խալիֆի՝ Ալիի ընտրվելու գործընթացը հանդիպեց լուրջ խնդիրների, քանի որ մարգարեի մի շարք զինակիցներ հրաժարվեցին նրան հավատարմության երդում տալուց: Ալիի հակառակորդների պայքարը գլխավորեց Միրիայի կառավարիչ, Օմայան ցեղի ներկայացուցիչ Մուավիա իբն Աբու Մուֆյանը, որը և հիմնեց Օմայան խալիֆների հարստությունը, որ զգալի թվով հավատացյալների կողմից այդպես էլ չճանաչվեց որպես օրինական: 750 թ. Օմայաններին կատաղի պայքարի արդյունքում փոխարինեցին Աբբասյանները, որոնք էլ մնացին

խալիֆայության հոգևոր առաջնորդներ մինչև խալիֆայության կործանումը 1258 թ. մոնղոլական արշավանքների հետևանքով:

8-10-րդ դարերում *ալիմների* և *ֆակիհների* շնորհիվ ճշտվեցին *ֆիկհի* և *շարիաթի* աղբյուրները և գործիքակազմը: Նույն ժամանակաշրջանում ձևավորվեցին երկու հիմնական ուղղություններ. ռաջիոնալիստական, որը ձևավորվեց *մութազիլիականների*, ապա նաև *աշարիականների* գործունեության արդյունքում, ստեղծվեց *քալամը*, և առաջացավ սուֆիականությունը՝ մուսուլմանական միստիկական ճանապարհը դեպի Բարձրյալ:

Բոլոր մուսուլմանների հիմնական սրբավայրն է *Քաաբան*:

7-8 րդ դարերի արշավանքների արդյունքում իսլամը դուրս եկավ Արաբական թերակղզու սահմաններից և տարածվեց *խալիֆայության* կազմի մեջ մտած մի շարք տարածքներում, որոնց բնակչությունը, ըստ աղապատացման աստիճանի, կարելի է բաժանել երեք խմբի.

- ա) իսլամացած և արաբացած, օրինակ՝ եգիպտացիները,
- բ) իսլամացած, բայց չարաբացած, օրինակ՝ իրանցիները,
- գ) չիսլամացած և չարաբացած, օրինակ՝ հայերը:

16-դարի սկզբին խալիֆի տիտղոսը և սուննիական համայնքի հոգևոր առաջնորդի դերը ստանձնեց Օսմանյան կայսրության սուլթանը, որի տապալումից և աշխարհիկ Թուրքական Հանրապետության ստեղծումից հետո խալիֆայությունը երկրորդ անգամ վերացվեց: Միջնադարում (8-12-րդ դարերում) ումման, չնայած մի շարք պատերազմների և կենտրոնախույս միտումների հզորացմանը, սրընթաց զարգացում է ապրում, զարգանում են տնտեսությունն ու առևտուրը, հարստանում և մեծանում են քաղաքները: Նույն ժամանակաշրջանում առաջացան և բուռն զարգացում ապրեցին իսլամական մշակույթը, ճարտարապետությունը, արվեստը, արաբամուսուլմանական փիլիսոփայությունը, գիտությունը: Նապոլեոն Բոնապարտի 1798 թ. արշավանքը Եգիպտոս նշանավորեց մուսուլմանական երկրների մուտքը նոր դարաշրջան: 19-րդ դարի երկրորդ կեսից գաղութատիրության դեմ մղված պայքարը նոր միտումներ առաջացրեց կրոնական իրավիճակի իմաստավորման մեջ: Մի կողմից ձևավորվեց մուսուլմանական *մոդեռնիզմը*, մյուս կողմից՝ *պանիսլամիզմը*:

19-րդ դարում սկսված միգրացիոն գործընթացներն աննախադեպ ծավալներ ձեռք բերեցին հատկապես 20-րդ դարի երկրորդ կեսից սկսած, ինչի հետևանքով իսլամը դուրս եկավ Միջին Արևելքից և ներկայումս ներկայացված է ավելի քան 125 երկրում:

Իսլամական համագործակցության կազմակերպության անդամ են 57 երկիր: Ամենամեծ բնակչությամբ մուսուլմանական երկիրը Ինդոնեզիան է՝ 271 մլն մարդ, որոնց 87 %-ը մուսուլման են:

Իսլամի հիմնական ուղղությունները

Ալավիներ, նաև՝ **նուսայրիներ**. շիայականությունից 9-րդ դարում առանձնացած այս ուղղության մասին շատ բան հայտնի չէ, քանի որ դարեր շարունակ ճնշվելով և հետապնդվելով՝ ապրել և գործել են խիստ գաղտնիության և ամբողջական մեկուսացման պայմաններում: Համարվում է, որ հիմնադիրը իմամականների 11-րդ իմամ Հասան ալ-Սաֆարիի զինակից շիայական *ֆակիհ* Մուհամմադ իբն Նուսայրն է (մահ. 883 թ.), ուստի ալավիներին հաճախ անվանում են նաև նուսայրիներ:

Կա վարկած, որ ալավիները Կիլիկիայի հայկական թագավորության բնակիչների ժառանգներն են, որոնց վրա մեծ ազդեցություն է ունեցել *իսմայիլականությունը*:

Համաձայն այն բավականին կցկտուր տեղեկությունների, որոնք մտել են գիտական շրջանառության մեջ, ալավիների կրոնը բավականին էկլեկտիկ բնույթ ունի: Նրանք աստվածացնում են *Ալի իբն Աբի Տալիբին*, պաշտում են Մարիամ Աստվածածնին, արևը, լուսինը, աստղերը, արշալույսը և մայրամուտը:

Հավատի հիմքում ընկած է պատկերացում աստվածային երրորդության մասին. Ալին աստվածային իմաստն է (ալ-մաանա), Մուհամմադը անունն է (ալ-իսմ), այսինքն՝ այդ իմաստի արտահայտումը, Մալման ալ-Ֆարիսին դարպասն է (ալ-բաբ), այսինքն՝ իմաստի արտահայտման բացահայտումը կամ մատուցումը: Այս բառերի հապավումից է կազմված սրբազան ԱՄԱՍ բառը: Պաշտամունքի է արժանանում նաև Մուհամմադի դուստր Ֆատիման, որը նաև Ալիի կինն էր: Ալավիները ընդունում են աստվածաշնչյան բոլոր մարգարեներին, քանի որ, ըստ նրանց հավատի, բոլոր մարգարեները այս կամ այն չափով Ալիի մարմնավորումներն են, հատկապես կարևորում են Իսային (Հիսուսին):

Ալավիական ծեսերը նույնպես տարբեր աղբյուրներից եկած, ինչպես նաև առանձնահատուկ արարողություններից են բաղկացած: Հայտնի է, որ կա մկրտության արարողություն:

Իսմայիլականության ազդեցությունը արտահայտվում է նաև գիտելիքը ներքին, գաղտնի (*բասիին*) և երևացող, հասանելի (*զահիր*) հատվածների բաժանելու մեջ: Միայն ընտրյալները (*խասա*) կարող են հասնել *բասիին* ներքին իմաստներին, համայնքի մյուս մասը բավարարվում է ակնհայտ, երևացող, հասանելի մասով:

Սուրբ գիրքը կոչվում է «*Քիթաբ ալ-Մաշմու՛*» և բաղկացած է 16 մասից:

Ներկայումս ալավիները բնակվում են Սիրիայում, Թուրքիայում, Լիբանանում, Իսրայելում: Սիրիայում ալավիները 1960-ական թվականներին զբաղեցնում են իշխող դիրք, նրանցից են նշանակվում պաշտոնյաներ բոլոր կարևոր դիրքերում: Թուրքիայում ալավիները բաժանվում են երեք իրարից զգալիորեն տարբերվող խմբերի՝ արաբ ալավիներ, զազա ալավիներ և թուրք ալիներ: Թուրք ալիների վերաբերյալ կա վարկած, որ նրանց դավանաբանությունը սկզբունքորեն տարբերվում է ալավիական դավանաբանությունից, սակայն այն բավարար չափով հիմնավորված չէ: Այս երեք խմբերն էլ իրարից բավականաչափ տարբեր են, ինչը բացատրվում է այն տարբեր մշակութային, լեզվական, սոցիալական և տնտեսական պայմաններով, որոնք ազդել են ալավիականության զարգացման վրա:

Ահմադիականություն. պաշտոնական անվանումն է Ահմադիական իսլամական ջամաաթ: Ստեղծվել է 19-րդ դարի վերջում Բրիտանական Հնդկաստանում: Հիմնադիրը և դավանանքի ձևակերպողը Միրզա Ղուլամ Ահմադն է (1835-1908), որը հայտարարել էր, որ ինքը հիջրայի 14-րդ դարի *Մուջաադդիդն* է (բարենորոգիչ, բարեփոխիչ), և իր բարեփոխումները պետք է հանգեցնեն իսլամի վերջնական հաղթանակին: Իր համայնքի կողմից ճանաչվել է որպես *նաբի՝ մարգարե* և *մահդի*:

Ահմադիականության հետևորդները համոզված են, որ իսլամն է այն կրոնը, որը Ալլահի կամքով կդառնա միակը մարդկության համար, և որ Միրզա Ղուլամն ուղարկվել է այնպես, ինչպես Հիսուսն է ուղարկվել մարդկության համար: Հիսուսը, համաձայն Միրզա Ղուլամ Ահմադի ուսմունքի, չի համբարձվել, այլ խաչից հանվելուց հետո ուշքի է եկել և շարունակել է իր քարոզը: Ի վերջո նա հայտնվել է Կաշմիրում, որտեղ և մահացել է: Նրա գերեզմանը ահմադիականների համար սրբավայր է դարձել:

Հիսուսի քարոզը շարունակում է *Մուջաադդիդը*, որի առաքելությունն է դադարեցնել պատերազմները, բռնությունները, վերջ դնել անարդարությանը, որը տիրում է աշխարհում,

վերացնել կրոնական և ռասայական մոլեռանդությունը և այլն: Այս նպատակներին հասնելու համար իսլամը պետք է մաքրվի իր համար օտար երևույթներից, վերականգնվեն կրոնի նախնական իմաստն ու մաքրությունը:

Միրզա Ղուլամ Ահմադի մահից հետո համայնքը ղեկավարվում է խալիֆների կողմից: Ներկայումս այն գործում է 200-ից ավելի երկրներում, ունի կազմակերպչական բազմաթիվ կառույցներ, իսկ կենտրոնը Լոնդոնում է:

Ահմադիականներն իրենց խալիֆին համարում են բոլոր ուղղահավաստների էմիր, իսկ համայնքը՝ խալիֆայություն: Մերժում են բռնությունը և ահաբեկչությունը: Ջիհադը հնարավոր են համարում միայն ինքնապաշտպանության համար: Հիմնական կարգախոսներից մեկն է՝ «Մեր բոլորի նկատմամբ, ատելություն՝ ոչ ոքի»:

Մուննինները ահմադիականներին չեն համարում հավատացյալ մուսուլմաններ, ինչի հետևանքով ահմադիականները ճնշումների և հետապնդումների են ենթարկվել:

Զայդիականություն. շիայական հիմնական ուղղությունից՝ 5-րդ իմամ Մուհամմադ ալ-Բակիրից (մահ. 732 թ.) առանձնացած ճյուղ: Իր անվանումը ստացել է Մուհամմադ ալ-Բակիրի եղբայր Զայդ իբն Ալիից, որի շուրջը համախմբվել էին իմամի պասիվ քաղաքականությունից դժգոհ շիաները: Զայդ իբն Ալին 739 թ. ապստամբություն բարձրացրեց Օմայանների դեմ, որը 10 ամիս հետո դաժանորեն ճնշվեց. Զայդի մարմինը Քուֆայում խաչվեց, իսկ գլուխն ուղարկվեց Դամասկոս՝ խալիֆին:

Առաջնորդի սպանությունից հետո գայդինները շարունակեցին զինված պայքարը՝ ընտրելով իրենց շրջանակից Ալի իբն Աբի Տալիբից սերած հաջորդ իմամին: Նրանց պայքարը երբեք չդադարեց ժամանակ առ ժամանակ ընդունելով ապստամբությունների ձև: Մի քանի անգամ կարողացել են պետություններ հիմնել, օրինակ՝ Իդրիսյանների պետությունը Հյուսիսային Աֆրիկայում (789-926): 901 թ. գայդինները ստեղծեցին իրենց պետությունը Եմենում, որը, ժամանակ առ ժամանակ կորցնելով իր անկախությունը, այնուամենայնիվ գոյատևեց մինչև 1962 թ. հեղափոխության հաղթանակը:

Այսօր գայդինների թիվը աշխարհում մոտ 7 մլն է: Մեծամասնություն են կազմում Եմենում:

Զայդինները, ի տարբերություն մյուս շիայական ուղղությունների, մերժում են իմամի աստվածային էությունը: Նրանք համարում են, որ իմամ կարող է լինել Ալի իբն Աբի Տալիբից սերող ցանկացած անձնավորություն, որը դրսևորում է իր պատրաստակամությունը՝ զենքը ձեռքին պայքարելու իշխանությունը ապօրինաբար զավթած բռնապետների դեմ: Զայդինները համարում են, որ միաժամանակ կարող են լինել մի քանի իմամներ: Նրանք չեն ընդունում *տասներկուերորդականների* ուսմունքը «թաքնված իմամի» մասին, մերժում են *թակիյան*: Մյուս կողմից, գայդինները ընդունում էին առաջին խալիֆների իշխանության օրինականությունը, ինչը նույնպես հաստուկ չէ մյուս շիայական ուղղություններին: Այս տարբերությունները հանգեցրել են նրան, որ գայդիականությունը դրսևորում է սուննիականության նկատմամբ բավականին հանդուրժողական վերաբերմունք:

Ներկայումս, բացի Եմենից, գայդիական փոքրաթիվ համայնքներ կան նաև Պակիստանում, Մաուրյան Արաբիայում, Իրանում և Իրաքում: Եմենում շարունակվող քաղաքացիական պատերազմի հետևանքով բազմաթիվ գայդիականներ հայտնվել են նաև Եվրոպայում, Կանադայում և Ավստրալիայում:

Իսմայիլականություն. շիայական հիմնական ուղղությունից՝ տասներկուերորդականներից 8-րդ դարի կեսերին առանձնացած ճյուղ, որը ներկայումս

ամենամեծ և ներկայացված շիայական ուղղությունները մեկն է: 750 թ. *Աբբասյանների* իշխանության գալուց հետո շիայական որոշ շրջանակներում կարծիք ձևավորվեց, որ նրանք օգտագործվել են Աբբասյանների կողմից Օմայանների դեմ պայքարում և խաբվել իրենց սպասումների մեջ, ուստի ձևավորվել էր պատրաստակամություն՝ շարունակելու պայքարը, սակայն արդեն նոր իշխողների դեմ: Այս տրամադրություններին կտրականապես դեմ էր 6-րդ իմամը՝ *Չաֆար աւ-Սադիկը*, որը, հիշեցնելով իր համայնքին *Հուսեյնի* և *Չայդի* ճակատագիրը, փորձում էր գերծ պահել զինված պայքարից: Կա վարկած, որ զինված պայքարի կողմնակիցների առաջնորդը իմամի ավագ որդին էր՝ Իսմայիլը: Աղբյուրների մեծամասնությունը նշում է, որ Իսմայիլը մահացել է իր հորից առաջ, և այդ պատճառով Չաֆարին որպես իմամ հաջորդել է նրա մյուս որդին՝ *Մուսա ալ-Քազիմը*: Սակայն Իսմայիլի կողմնակիցների մի մասը չհավատաց, որ նա մահացել է, և հոչակեց նրան որպես յոթերորդ և վերջին իմամ, որը վերադառնալու է որպես *Մահդի*: Այս խումբը հետագայում կոչվեց *կարմատներ* կամ յոթերորդականներ: Նրանցից առանձնացավ մի այլ խումբ, որը որպես իմամ ճանաչեց Իսմայիլի որդիներից մեկին՝ Մուհամմադին: Մուհամմադին ժառանգած իմամների անունները գաղտնի էին պահվում, և այս պատճառով իսմայիլական երկու խմբերի միջև տարբերությունը արտաքին դիտորդների համար երկար ժամանակ ակնհայտ չէր: Ի վերջո երկրորդ խումբը կարողացավ 10-րդ դարում Հյուսիսային Աֆրիկայում հիմնել Ֆաթիմյան խալիֆայություն:

Դարերի ընթացքում իմամականներից առանձնացած հավատացյալները, որոնց անվանեցին յոթերորդականներ, դավանաբանական և ժառանգական մի շարք խնդիրների հետևանքով տեղի ունեցած ճգնաժամերի արդյունքում շարունակեցին ճյուղավորվել: Այսպես, 11-րդ դարում նրանցից առանձնացան *դրուզները*, ապա նրանք բաժանվեցին նիզարիների/նիզարիականների և մուսթալիականների: Նիզարիականները 11-րդ դարի վերջում պետություն ստեղծեցին, որի կենտրոնը Ալամութն էր, և որը հայտնի է որպես *ասասիների* պետություն: Մուսթալիականները Ֆատիմյան խալիֆայության անկումից հետո իրենց գործունեության կենտրոնը նախ տեղափոխեցին Եմեն, ապա՝ Հնդկաստան: Նրանք իմամության ժառանգության խնդրի վերաբերյալ տարբեր տեսակետներ ունենալու արդյունքում նույնպես բաժանվեցին մի քանի ճյուղերի, որոնց միջև սկզբունքային դավանաբանական տարաձայնություններ չկան:

Այսպիսով, շիաների այն խումբը, որն այսօր ևս հայտնի է որպես իսմայիլականներ, իմամության գիծը բխեցնում է Իսմայիլից և նրա որդի Մուհամմադից սերած շառավիղներից: Այսօր նրանք ճանաչում են ուղիղ գծով ժառանգած 49-րդ իմամ Շահ Քարիմ ալ-Հուսայնի Ադա խան Չորրորդին: *Ադա Խան* պատվանունը շնորհվել է իսմայիլական իմամներին Իրանի շահ Ֆաթի Ալիի կողմից 1817 թ.:

Իսմայիլական համայնքի միջնադարյան կառուցվածքը (ավելի ճիշտ՝ իդեալական պատկերացումը այդ կառուցվածքի մասին) բխում էր տիեզերքի և պատմության վերաբերյալ նրանց պատկերացումներից: Աշխարհը կազմված էր 12 «կղզիներից» (*ալ-ջազաիր*)՝ տարվա ամիսների թվով, որոնցից յուրաքանչյուրում իսմայիլական քարոզը իրականացնելու համար նշանակվում էր «կղզու քարոզիչների քարոզիչ» կամ *նակիր*: Նրա օգնականներն էին 30 *դահներ*՝ քարոզիչներ կամ *նակիրներ*՝ ամսվա օրերի թվով: Յուրաքանչյուր նակիր ուներ 24՝ օրվա ժամերի թվով դաի-օգնական, որոնցից 12-ը ցերեկային էին, այսինքն՝ երևացող, բացեիբաց գործող, իսկ մյուս 12-ը՝ գիշերային, այսինքն՝ գաղտնի գործակալներ: Գլխավոր դահին, որին ենթարկվում էին մնացած բոլոր քարոզիչները և գործակալները, միակ կապն էր այս կազմակերպության և իմամի

միջև: Իմամի մերձավորն էր ալ-Բաբը (արաբ․՝ դարպաս)⁷, որի առաքելությունը հայտնի էր միայն իմամին: Այս կառուցվածքի պարզեցված տարբերակը գործում էր նաև նիագարիների մոտ և մուսթալիների համայնքներում: 19-20-րդ դարերում իսմայիլական իմամները վերակազմակերպեցին համայնքների կառուցվածքը՝ համապատասխանեցնելով այն ժամանակի պահանջներին:

Իսմայիլականները, ի տարբերություն մյուս բոլոր շիայական ճյուղերի, որոնք հավատում են, որ վերջին իմամը (յուրաքանչյուր խմբի տեսակետից այն տարբեր է) «թաքուցման» մեջ է և գալու է որպես Մահդի ժամանակների վերջում, ընդունում են, որ իմամը միշտ իր համայնքի հետ է, և նրա ներկայությունը ակնհայտ է (*մուբին*):

Մարդկության պատմության մասին իսմայիլականների պատկերացումները հիմնվում են շրջապատյալի սկզբունքի վրա, որն, իր հերթին, բխում է աստվածային էության դրսևորման յոթ փուլերից: «Փոքր» աշխարհի զարգացումը նույնպես բաղկացած է յոթ դարաշրջաններից, որոնցից յուրաքանչյուրի համար ուղարկվել է երկու ուսուցիչ՝ *նատիկ* (խոսող) և *սամիթ* (լուռ): Նատիկը հայտնում էր մարդկությանը պարզ և հասկանալի կարգը և օրենքը՝ կրոնի *զահիր*, այսինքն՝ ակնհայտ բաղադրյալը: *Սամիթը* միայն ընտրյալներին բացատրում էր *բատին*՝ ներքին, միայն հատուկ անձնավորություններին հասանելի տվյալ դարաշրջանի էզոտերիկ գիտելիքը:

Ներկայումս իսմայիլականների թիվը հասնում է 20 մլն-ի: Նրանց գործունեությունը ակտիվորեն ծավալվում է սոցիալական, մշակութային, խաղաղարարական, կրթական, գիտական ոլորտներում: Իսմայիլականներն աչքի են ընկնում մյուս բոլոր կրոնների նկատմամբ իրենց հանդուրժողականությամբ:

Խարիջիականություն. իսլամի պատմության մեջ կրոնական, գաղափարական և քաղաքական պատճառներով հիմնական ումմայից առաջինը առանձնացած մուսուլմանների խմբի անվանում: Այն առաջացել է արաբերեն «խարաջա» (դուրս գալ, լքել) բայից: 657 թ. տեղի ունեցած Միֆֆինի ճակատամարտից հետո 12 000 մուսուլման լքեց Ալի իբն Աբի Տալիբի ճամբարը՝ մեղադրելով նրան, ինչպես նաև նրա հակառակորդ Մուավիա իբն Աբու Մուֆյանին և հաշտարար դատավոր Ամր իբն ալ-Ասին Ալլահի կամքը չընդունելու և հետևաբար հավատացյալ լինելուց հրաժարվելու մեջ: Ըստ նրանց՝ հավատն արտահայտվում է գործով, ուստի Ղուրանի և սուննայի դրույթներին չհետևող անձնավորությունը պետք է մեղադրվի հավատից հրաժարվելու մեղքի մեջ և դատապարտվի մահվան: Խարիջիների տեսակետից հիմնական սկզբունքն է «Լաթահքիմաիլալի-լ-լահ»-ը (Միայն Ալլահինն է դատաստանը), որի հիման վրա էլ նրանք մահապատժի դատապարտեցին Ալի իբն Աբի Տալիբին, Մուավիային և Ամր իբն ալ-Ասին: 661 թ. Ալին սպանվեց, իսկ Մուավիան վիրավորվեց այս վճռի կատարմամբ:

Խարիջիականությունը չափազանց բազմազան է, քանի որ իր զարգացման ընթացքում բաժանվել է տարբեր ճյուղերի: Դավանաբանական վիճաբանությունների ընթացքում նրանց մշակած մոտեցումները զգալի դեր խաղացին սուննիական իսլամի կրոնագաղափարական զարգացման գործում:

Ումմայի ղեկավարման հարցում խարիջիներն առաջ քաշեցին այն տեսակետը, որ խալիֆն ունի միայն գործադիր իշխանություն, իսկ մյուս բոլոր խնդիրներն իրենց լուծումները պետք է ստանան շուրայի (ընտրովի խորհուրդ) քննարկումների արդյունքում: Խարիջիները նաև համարում էին, որ խալիֆ կարող է դառնալ ցանկացած հավատացյալ, եթե նա ընտրվում է հավատացյալների համայնքի կողմից, այսինքն՝ պարտադիր չէ նրա պատկանելությունը Բանու

⁷«Ալ-Բաբ» եզրույթը ծագել է շիաների կողմից հաճախ վկայակոչվող մի հադիսից: Մարգարեն ասել է. «Ես եմ գիտելիքի (*ilm*) քաղաքը և Ալին (այդ քաղաքի) դարպասը»:

Կուրայ՝ ցեղին կամ Ալիի և Ֆատիմայի ընտանիքին: Նրանք հավատացյալի պարտքն էին համարում զենքը ձեռքին պայքարել համայնքի անարդար և անհավատ ղեկավարի դեմ: Հետագայում առաջ քաշվեց նաև այն գաղափարը, որ մուսուլմանական յուրաքանչյուր համայնք կարող է ընտրել իր խալիֆին: Խարիջիներն ընդունում էին միայն առաջին երկու խալիֆներին՝ Աբու Բաքրին և Օմարին, իսկ մյուսներին համարում էին բռնապետներ:

Խարիջիականությունն իր սոցիալական գաղափարներում հիմնվում էր մուսուլմանական համայնքի բոլոր անդամների հավասարության սկզբունքի վրա, ինչը վերաբերում էր նաև ունեցվածքային հարցերին: Այս սկզբունքի կիրառումն արտահայտվում էր ումմայում ձևավորված հարուստ կալվածատերերի դեմ մղվող կատաղի պայքարի ձևով: Խարիջիականությունը տարածվեց գրեթե ամբողջ խալիֆայության տարածքով: 10-րդ դ., մուսուլմանական աղբյուրների համաձայն, մոտ 20 տեսակի խարիջիական համայնքներ կային, որոնցից առավել հայտնի էին ազրաքյանները, սուֆրիականները, նաջդիականները և իբադիականները:

Սուննիականություն. առաջացել է արաբերեն «սուննա»՝ *կյանքի օրինակ* նշանակող բառից: Ամբողջական ձևակերպումն է սուննաթու ռասուլ Ալլահ Ալլահի առաքյալի օրինակ: Ձևավորվել է Մուհամմադ մարգարեի մահից (632) հետո, երբ *ուլմայի* հետագա ուղու և վերջինիս կառավարման խնդիրը շտապ լուծման կարիք ուներ: Ումմայի ղեկավար ընտրվեց *Աբու Բաքրը*, որը և ստանձնեց Խալիֆաթու ռասուլ Ալլահ (Ալլահի առաքյալի հետնորդ) տիտղոսը և պաշտոնը: Աբու Բաքրի ընտրությամբ որպես խալիֆ ամրագրվեց հավատացյալների մեծամասնության տեսակետը, որ մարգարեի մահից հետո ումման իր կենսագործունեության բոլոր ոլորտներում պետք է ղեկավարվի Ալլահի խոսքով, որը *Ղուրանն* է, և մարգարեի սուննայով, որը ձևակերպվել է *հադիսների* տեսքով: Խալիֆ կարող է դառնալ *Կուրայ՝ ցեղին* պատկանող հավատացյալ ումմայի համաձայնության դեպքում: Խալիֆի գլխավոր պատասխանատվությունն էր ումմայի ղեկավարումը՝ համաձայն Ալլահի տրված օրենքի, որն իր ձևակերպումը ստացավ *շարիաթի* տեսքով: Սուննիները, ի տարբերություն *շիաների*, չէին համարում, որ ումմայի ղեկավարը պետք է օժտված լինի գերբնական որակներով և աստվածային ոգուց ներշնչանք ստանալու ունակությամբ (*վիլայա*): Քանի որ սուննիականությունն իր զարգացման առաջին դարերի ընթացքում չձևավորեց որևէ ինստիտուտ, որ իրավունք ունենար միասնական դոգմա ձևակերպելու, ապա այս ուղղության շրջանակներում ձևավորվեցին մի շարք իրավահավասար կրոնաիրավական դպրոցներ՝ *մազհաբներ*, որոնցից 10-րդ դարում պահպանվեցին չորս հիմնականները: Այս չորս մազհաբներն են *մալիքիականը*, *հանաֆիականը*, *շաֆիականը* և *հանբալիականը*, որոնք ներկայումս նույնպես չափազանց կարևոր դեր են կատարում աշխարհում գոյացած նոր իրողությունների և գործընթացների վերաբերյալ սուննիական շարիաթի մոտեցումները ճշգրտելու և համապատասխանեցնելու առումով: Բնականաբար այս մազհաբների մոտեցումները շատ հարցերի վերաբերյալ հակասում են իրար, ինչն էլ հանգեցնում է կոնֆլիկտների և լարվածության:

Սուննիները ընդունում են առաջին չորս խալիֆների (Աբու Բաքր, Օմար, Օսման և Ալի), որոնց անվանում են Առաքինի խալիֆներ (ալ-Խուլաֆա առ-Ռաշիդուն), իշխանության օրինականությունը՝ ի տարբերություն *իբադիականների*, որոնք ընդունում են միայն առաջին երկուսին, և շիաների, որոնք ընդունում են միայն Ալիին:

Մի քանի դար տևած վերլուծական աշխատանքի արդյունքում սուննիները արժանահավատ ճանաչեցին հադիսների 6 ժողովածու, որոնք կազմվել էին *ալ-Բուխարիի*,

Մուսլիմի և չորս այլ հեղինակների կողմից: Նշված երկու հեղինակների կազմած հաղիսների ժողովածուները ամենահաճախ օգտագործվողներն են:

Մուննիականության շրջանակներում ձևավորվեց *քալամը*, որը բնորոշվում է որպես ռացիոնալիստական աստվածաբանություն: Այս ուղղության ստեղծման և զարգացման գործում մեծ ներդրում են ունեցել *մութագիլիականությունը*, *աշարիականությունը* և *մատուրիդիականությունը*:

18-րդ դարի ընթացքում Արաբական թերակղզում՝ Նեջդում, հանաֆիական մազհաբի ծիրի մեջ իր գործունեությունն է ծավալում *Մուհամմադ իբն Աբդ ալ-Վահաբը*, որի մշակած կրոնազաղափարական դրույթները՝ *վահաբականությունը*, Սաուդների ընտանիքը հստորեն օգտագործեց այս տարածաշրջանում միասնական պետություն ստեղծելու նպատակով:

19-րդ դարի 80-ական թվականներից հակազաղութատիրական պայքարի հրամայականների և նոր գաղափարական ուղղությունների ազդեցությունն իրենց վրա կրելով՝ ակտիվ գործունեություն են ծավալում կրոնական բարեփոխիչներ Ջամալ ադ-Դին ալ-Աֆղանին, Մուհամադ Աբդուն, Ռաշիդ Ռիդան և մի շարք այլ գործիչներ, որոնց նպատակն էր իսլամը որպես այդպիսին դարձնել ավելի ճկուն, ժամանակի ոգուն համապատասխանող և աշխարհում տեղի ունեցող իրադարձություններին, գիտության նվաճումներին, աշխարհընկալման փոփոխություններին ավելի արագ ադապտացվող, ինչի արդյունքում հնարավոր կդառնար հաղթահարել մուսուլմանական ժողովուրդների հետամնացությունը: Նրանք նաև նպատակ ունեին հաղթահարելու այն հակասությունները և վեճերը, որոնք հանգեցրել էին իսլամի ճյուղավորմանը և մասնատմանը, և վերամիավորելու բոլոր մուսուլմանական ժողովուրդները: Նշված երկու միտումները հայտնի են *մուսուլմանական մոդեռնիզմ* և *պանիսլամիզմ* անվանումներով:

Մուննիականության շրջանակներում ներկայումս տեղի ունեցող գործընթացները զգալիորեն պայմանավորված են 1947 թ. Եգիպտոսում ստեղծված «Մուսուլման եղբայրներ» կազմակերպության և նրա հիմնադիր *Հասսալ ալ-Բաննայի* գաղափարներով: Մուննիական արմատականությունը հատկապես ակտիվանում է «սառը պատերազմի» ավարտից հետո և ներկայումս գնահատվում է որպես համաշխարհային նշանակություն ունեցող աշխարհաքաղաքական գործոն, որն ավելի կարևոր է դարձել միգրացիոն գործընթացների և ցանցայնացման հետևանքով:

Ներկայումս մուսուլմանների ընդհանուր թվի 70-75 %-ը սուննիներ են: Նրանք մեծամասնություն են կազմում մուսուլմանական բնակչություն ունեցող բոլոր երկրներում, բացի Իրանից, Բահրեյնից, Եմենից, Լիբանանից և Ադրբեջանից:

Տասներկուերորդականներ (իսնաաշարիներ կամ իմամիականներ). Մուհամմադ մարգարեի մահից (632) հետո հավատացյալների համայնքում առանձին խումբ ձևավորվեց, որը մարգարեին փոխարինողի դերում տեսնում էր *Ալի իբն Աբի Տալիբին*: Այս խումբը անվանում էին շիաթ Ալի (Ալի կողմնակիցներ, Ալիի խումբ): Նրանց կարծիքով Ալին Ալլահի վալին է (մտերիմ, բարեկամ, սիրելի), ուստի նա օժտված է աստվածային ներշնչանք ստանալու հատկությունով, որն անհրաժեշտ է ումման ճիշտ ճանապարհով տանելու և արդարությամբ (*ադլ*) դեկավարելու համար: Խալիֆ Օսմանի սպանությունից և դրան հետևած քաղաքացիական պատերազմների ընթացքում աստիճանաբար ձևավորվում է տասներկուերորդականների դավանաբանական ուսմունքը, որը վերջնականապես առանձնանում է *սուննիականությունից* 680 թ. *իմամ Հուսեյնի* սպանությունից հետո: Տասներկուերորդականների հավատի հինգ հիմքերն են.

1) *Թաուհիդ*՝ միաստվածություն:

2) Աղլ՝ աստվածային արդարություն: Տասներկուերորդականները հավատում են, որ Ալլահի արդարությունը կարող է իրականացվել միայն նրա վալիից սերած իմամների միջոցով, քանի որ նրանք աստվածային ներշնչանքով միայն արդար որոշումներ են ընդունում, և նրանց դատն է արդար:

3) Մարգարեներ և մարգարեություն: Նրանք հավատում են, որ Ալլահն իր մարգարեներին է ուղարկում մարդկանց աստվածային գիտելիքը փոխանցելու համար, և վերջին մարգարեն Մուհամմադն էր:

4) Իմամություն: Տասներկուերորդականները հավատում են, որ ումման, համաձայն Ալլահի կամքի, պետք է ղեկավարեն Ալիից և *Ֆարհինայից* սերած իմամները, որոնց շրթան ընդհատվում է 874 թ., երբ 12-րդ իմամը հեռանում է մարդկանցից և մինչև 940 թ. ղեկավարում է իր համայնքը *սաֆիրների* (վստահյալների) միջոցով (ալ-դայբա աւ-սադիրա փոքր թաքուցում): Փոքր թաքուցման ավարտից հետո սկսվում է «ալ-դայբա ալ-քուբրա»-ի (մեծ թաքուցում) շրջանը, որն ավարտվելու է 12-րդ իմամի որպես Մահդիի (մեսիա) գալով: Իմամները Ալլահի ներշնչման շնորհիվ ունակ չեն մեղք գործելու կամ սխալներ կատարելու:

5) Ահեղ դատաստան և հատուցում: Տասներկուերորդականները հավատում են, որ Ահեղ դատաստանի օրը բոլոր մարդիկ հատուցում են ստանալու իրենց արած բարի և չար գործերի համար:

Նրանք չեն ընդունում առաջին երեք խալիֆներին և նրանցից ու Մուհամմադի մյուս զինակիցներից հաղորդվող հադիսների մեծամասնությունը: Տասներկուերորդականների տեսակետից Ալլահի կողմից անիծված է Օմայանների ողջ հարստությունը և հատկապես խալիֆ Յազիդը, որի հրամանով սպանվել է իմամ Հուսեյնը:

Տասներկուերորդականների կրոնաիրավական ուսմունքը ձևավորվել է 6-րդ իմամ *Ջաֆար աւ-Մադիկի* ժամանակաշրջանում, այդ պատճառով հաճախ կոչվում է ջաֆարիական մազհաբ: Որպես կրոնաիրավական ուսմունքի աղբյուր են ճանաչվում *Ղուրանը*, *ախաբարը*, *իջման* և *ակլլը*: Որպես կրոնաիրավական խնդիրների միջոց՝ պահպանում են *իջթիհադը*՝ ինքնուրույն դատողության վրա հիմնված լուծում, ինչը այս մազհաբի աղապատացիոն հնարավորությունները լրջորեն ընդլայնում է:

Նրանք հավատում են, որ Ղուրանի հանգատողերը ունեն երկու իմաստ՝ ակնհայտ (զահիր) և ներքին (բատին), ներքինը հասանելի է միայն ընտրյալներին: Այդ ընտրյալները պատկանում են «*Ահլ ալ-բայթին*» (Մարգարեի ընտանիքի անդամներ), որոնց մեջ են, համաձայն հադիսի, Ալին, Ֆատիման, Հասանը, Հուսեյնը և նրանց շառավիղները:

Բազմաթիվ մեծ և փոքր տարբերություններ կան նրանց և սուննիների միջև թե՛ դավանաբանական և ծիսական հարցերում, թե՛ գաղափարական, քաղաքական և սոցիալական ոլորտներում:

Հիմնական սրբավայրերն են Մեքքան, Մադինան, Նաջաֆը, Քերբելան:

Ներկայումս տասներկուերորդականները մեծամասնություն են կազմում Իրանում, Ադրբեջանում, Բահրեյնում, Իրաքում: Մեծ համայնքներ կան բազմաթիվ երկրներում, մասնավորապես Եմենում, Եգիպտոսում, Աֆղանստանում, Լիբանանում, Պակիստանում, Մաուդյան Արաբիայում:

Հիմնական հասկացություններ

Ա

Աբբասյաններ. 750 թ. արաբական խալիֆայության խալիֆներ: Մերում են Մուհամմադ մարգարեի հորեղբոր՝ Աբբասի (մահ. 653) ժառանգներից: Երկարատև պայքարի արդյունքում Աբբասյանները կարողացան տապալել Օմայանների իշխանությունը և, ստանձնելով խալիֆայության կառավարման դեկր, պահպանեցին այն մինչև 1258 թ., երբ մոնղոլական արշավանքի հետևանքով գրավվեց և գրեթե ոչնչացվեց խալիֆայության մայրաքաղաք Բաղդադը:

Աբբասյանների հաղթանակը հիմնականում ապահովեցին խորասանցիները և *Ալիականների* կողմնակիցները՝ *շիաները*: Աբբասյանների արյունակցական կապը Մուհամմադ մարգարեի հետ և նրանց՝ Հաշիմյանների ցեղին պատկանելը շատ ավելի օրինական էին դարձնում նրանց խալիֆությունը հավատացյալների աչքերում՝ ի տարբերություն Օմայանների, որոնք *ուսմայի* մեծամասնության կողմից համարվում էին իշխանությունը բռնազավթողներ:

Աբբասյանների կառավարման առաջին երեք դարերը համարվում են խալիֆայության հզորության, մշակութային, գիտական և տնտեսական վերելքի ժամանակաշրջան: Մակայն արդեն 10-րդ դ. Աբբասյանները աստիճանաբար սկսում են զիջել իշխանությունը նախ մեծ ազդեցություն ձեռք բերած թյուրք վարձկան պալատական պահակախմբի հրամանատարներին, ապա իրանական ծագում ունեցող շիա *Քուիների* (Քուվայիներ) հարստությանը:

Աբբասյանների կառավարման ժամանակաշրջանում միացյալ արաբական խալիֆայությունից առանձնացան մի շարք տարածքներ, որտեղ ստեղծվեցին անկախ պետություններ: Առաջինը արաբական Իսպանիան էր, ուր ապաստան գտավ Օմայան հարստության վերջին ներկայացուցիչը՝ Աբդ առ-Ռահմանը, որը և կարողացավ 756 թ. Կորդովայում հիմնել ալ-Անդալուսի խալիֆայությունը:

Հայաստանը նույնպես Աշոտ Երկաթի գլխավորած ազատագրական պայքարի շնորհիվ 921 թ. կարողացավ ձեռք բերել անկախություն:

Աբդ. արաբ.՝ ստրուկ, ճորտ: Մարդիկ արարվել են Ալլահի կողմից որպես իր կամքին ենթարկվող ստրուկներ, որոնց հիմնական պարտականությունն է խոնարհվել աստվածային կամքի առջև, ենթարկվել՝ երկրպագելով նրան և փառաբանելով Ալլահի գորությունը և մեծությունը: Իսլամում բացակայում է քրիստոնեական պատկերացումն այն մասին, որ մարդը ձեռք է բերել ստրուկի ստորին կարգավիճակն իր մեղքերի պատճառով: Երկրային հարաբերություններում ստրուկի իրավական կարգավիճակը մուսուլմանական տարբեր կրոնական և կրոնաիրավական ուղղություններում (տե՛ս *մազհաբ*) տարբեր է: Ընդհանուրն այն է, որ մուսուլման ստրուկի կարգավիճակը բարձր է անհավատի կարգավիճակից:

Աղլ. արաբ.՝ արդարություն: Իսլամի գրեթե բոլոր ուղղություններում առանցքային գաղափարներից մեկն է, քանի որ այն որպես այդպիսին ձևակերպված է Մուրբ Դուրանի մեջ: Արդարությունը Ալլահի ատրիբուտներից մեկն է, սակայն աստվածային արդարությունը, ըստ իսլամի, անըմբռնելի է իր արարածների համար, ուստի նրանք Ալլահից պետք է խնդրեն ոչ թե արդարություն, այլ գթասրտություն և ներողամտություն: Արդարությունը մարդու բարոյական գնահատման կատեգորիա է: Արդար մարդը պետք է ձգտի կանխելու չարիքի (*ջաուր*) դրսևորումները, ինչը հարում է իսլամի ևս մի կարևոր սկզբունքի՝ «Նահի ան ալ-մունկար վա ամր բի-լ-մառուֆ» (Մերժել պախարակելին և խրախուսել գովելին): Շիա աստվածաբանները դիտարկում են *աղլը* որպես հավատացյալի հիմնական կրոնական պարտականություններից մեկը:

Աղլ. ջաֆարիական մագհաբում բանականության հիման վրա ընտրված լուծում:

Ալլահ. իսլամում՝ աստված: Ալլահը միակ աստվածությունն է (տե՛ս *թաուհիդ*), նա է արարիչը և ամեն ինչի սկիզբն ու վերջը, նա է միակ աղբյուրը գոյության և միակ պատճառը: Հավերժ է և հավիտենական, ժամանակն ու տարածությունը Ալլահն է արարել: Չի ծնել և չի ծնվել, բացարձակ է և բացառիկ: Ամեն ինչ, որ եղել է, լինում է և լինելու է, եղել է, լինում է և լինելու է Ալլահի կամքով: Ունի հարյուր անուն, որոնցից հարյուրերորդը գաղտնի է, հայտնի չէ ոչ ոքի: Մյուս 99 անունները արաբամուսուլմանական ավանդությունը անվանում է «Ալլահի գեղեցիկ անուններ»: Այդ անունները թվարկում են Ալլահի հատկանիշները (ատրիբուտները), օրինակ՝ Աքբար՝ մեծագույն, Ռահման՝ զթացող, Կադիր՝ հզոր, Ալիմ՝ իմացող, Բասիր՝ տեսնող, Հաքամ՝ դատավոր և այլն: Իսլամի կրոնական հինգ պարտադիր հիմքերից առաջինը շահադան է, վկայությունը, որ «*Լա իլահի իլլա-լ-Լահ ուա Մուհամմադու ռասուլ ալ-Լահ*» (Չկա աստվածություն բացի Ալլահից, և Մուհամմադն է Ալլահի մարգարեն):

Ահեդ դաստաստանի օրը Ալլահն է դատելու բոլոր արարածներին և վճիռներ կայացնելու նրանց ճակատագրի վերաբերյալ, հավատացյալ առաքինիները վայելելու են *դրախտը*, իսկ մեղավորները՝ *դժոխքը*:

Ալիականներ. Մուհամմադ մարգարեի հորեղբորորդի և փեսա Ալի իբն Աբի Տալիբի շառավիղներ: Ալի իբն Աբի Տալիբի և *Ֆատիմայի* ամուսնությունից սերած ժառանգները շիայական ուղղության իմամական ճյուղն են կազմում: Ալիի մյուս կանանցից ծնվածները իմամական ճյուղի հետ կազմում են Ալիականների տոհմը, որը մտնում է Ալիի հորից՝ Աբու Տալիբից սերած *տալիբիների* կամ տալիբականների տոհմի մեջ: (Չփոթել *տալիբների* հետ):

Ալիականների կողմնակիցները դարեր շարունակ պայքարել են խալիֆայության իշխանությունների դեմ՝ համարելով, որ միայն Ալիի ժառանգների գլխավորությամբ ումման կարող է Ալլահի նախանշած ճանապարհով զարգանալ, ինչը կհանգեցնի խաղաղության և արդարության հաստատմանն աշխարհում: Հավատում են *մահդիի* գալուստին, որը Ալիի ժառանգներից է, ընդ որում տարբեր շիայական ուղղություններ այս հարցի վերաբերյալ ունեն իրենց տեսակետը: Զինված պայքարի արդյունքում մի քանի անգամ հիմնել են պետություններ Հյուսիսային Աֆրիկայում, Եմենում, Իրանում:

Ադա Խան. իսմայիլական նիզարիականների կրոնական համայնքի ղեկավարի ժառանգական տիտղոս, որն Իրանի շահ Ֆաթի Ալին շնորհել էր Քերմանի կառավարիչ Աբու-լ-Հասանին (1800-1881), որն իր փեսան էր և Մուհամմադ մարգարեի դուստր Ֆատիմայից սերած շառավիղը: Ներկայումս համայնքը ղեկավարող Ադա Խան Չորրորդը դարձել է 49-րդ ժամանակի իմամ, այսինքն՝ նիզարիական համայնքի ղեկավար, 1957 թ.: Հայտնի է իր լուսավորչական գործունեությամբ և բարերարությամբ:

Ալիդա. արաբ.՝ հավատաբանություն, *իմանի* բացատրման և բացահայտման ձև: Ղուրանում տրված են հավատի և կրոնի հիմնական սկզբունքները, սակայն բացակայում է դրանց ամբողջական և միասնական ձևակերպումը, ուստի այն ձևավորվել է մուսուլմանական գիտնականների բանավեճերի արդյունքում: Հետևանքն այն էր, որ տարբեր հեղինակություններ ձևակերպել են իրենց ակիդաները, որոնք ձեռք են բերել բազմաթիվ հետևորդներ: Օրինակ՝ սուննիական ուղղության պատկանող հեղինակություններ ալ-Աշարին և Մուհամմադ իբն Աբդ ալ-Վահհաբը ձևակերպել են իրենց ակիդաները, որոնք ունեն լուրջ տարբերություններ: Ալիդան փաստացի իմանի վեց հիմքերի ընդլայնված ձևակերպումն է:

Ալ-Ազհաբ. սուննիական իսլամի կարևորագույն կրոնական, գիտական և ուսումնական կենտրոն, համալսարան: Գտնվում է Կահիրեում: Հիմնադրվել է 970 թ. Ֆաթիմյանների կողմից

որպես ալ-Ազհար մզկիթի մեդրեսե և աստիճանաբար դարձել շիայականության *խամայիլական* ուղղության հոգևոր կենտրոն: 1171 թ. *Սալահ ադ-Չինը* գրավեց Եգիպտոսը և տապալեց Ֆաթիմյան խալիֆայությունը, ինչից հետո ալ-Ազհարը վերածվեց բացառապես սուննիական համալսարանի: Այստեղ դարեր շարունակ սովորել և դասավանդել են սուննիական իսլամի ամենավաղ ներկայացուցիչները: Ալ-Ազհարի շեյխերը շարունակում են մեծ ազդեցություն ունենալ սուննիական ճյուղին պատկանող հավատացյալների վրա, նրանց արձակած *ֆեթվաները* նախագծում են կրոնի և հավատի դրույթների զարգացումը և ջանում են նպաստել սուննիականության ադապտացմանը ժամանակակից քաղաքակրթական համակարգին:

Աշարիականություն. *քալամի* հիմնական ուղղություններից մեկը սկզբնական շրջանում զարգացել է մեծ մասամբ սուննիական *շաֆիական* մազհաբին պատկանող մուսուլմանական գիտնականների կողմից *մութազիլիականության* դրույթների զարգացման արդյունքում: Անվանումը ստացել է իր հիմնադրի՝ ալ-Աշարիի (941) անունից: 11-րդ դ. դառնում է քալամի հիմնական ուղղություն: Աշարիականությունը ջանում էր հաշտեցնել ավանդապաշտների և ռացիոնալիստ մութազիլիաների տեսակետները մի շարք կարևոր հարցերում. այն է՝ կամքի ազատություն և նախախնամություն, Ալլահի ատրիբուտների ընկալման մարդակերպություն և այլաբանություն, հավատացյալի մեղքի գնահատման չափանիշներ և այլն: Աշարիականության ամենակարևոր ներկայացուցիչներն են ալ-Բակկիլանին (1013), ալ-Բադադին (1037), ալ-Ջուվայնին (1085) և այլք: Օրինակ՝ մութազիլիաների և ավանդապահների կարևոր հակասություններից այն էր, որ առաջինները որպես Ալլահի էության կարևորագույն սկզբունք առանձնացնում էին *աղլը*, իսկ ավանդապաշտները՝ նրա բացարձակությունը: Ալ-Աշարին այս հակասությունը լուծելու համար ներմուծում է *«քասր»* (յուրացում) հասկացությունը. «Քասրի հիմնական իմաստն այն էր, որ երևույթը ծագում է յուրացնողից շնորհիվ արարված ուժի»: Այսինքն՝ արարածն ունի հնարավորություններ, և մարդը, ընտրելով դրանցից մեկը, կատարում է քասր, յուրացնում է կամ իրականացնում է Ալլահի ստեղծած հնարավորությունը: Այսպիսով՝ և՛ Ալլահն է բացարձակ, և՛ աստվածային արդարությունն է իրականացվում մարդու կամքի շնորհիվ: Ալ-Բակկիլանին շարունակում է ալ-Աշարիի միտքը՝ ընդգծելով, որ մարդն ունի ընտրության հնարավորություն և դրա իրականացման մտադրություն, ինչը նաև նրան դարձնում է պատասխանատու իր կատարած գործողության համար: Ղուրանի արարված/չարարված լինելու հարցում, ի տարբերություն մութազիլիաների, որոնք համարում էին, որ այն արարված է (այլապես խախտվում է միաստվածության սկզբունքը), աշարիականները կարծում էին, որ հավիտենական է, այսինքն՝ արարված չէ Սուրբ գրքի իմաստը, սակայն վերջինիս արտահայտման ձևն արարված է:

Այս բանավեճերում աշարիականությունը մշակեց իր փաստարկման համակարգը և գործիքակազմը, որը հիմնվում էր տրամաբանության և բանականության, այլ ոչ թե հեղինակության վկայակոչման վրա:

Աշարիականության հիմնական հատկանիշներն են հեղինակությունների և բռնապետության մերժում, ռացիոնալ մոտեցում, գոյաբանական և իմացաբանական խնդիրների կարևորում, որոնք էլ նպաստեցին ոչ միայն այս ուղղության զարգացմանը, այլև ընդհանուր առմամբ, քալամի, որտեղ մինչ օրս էլ պահպանել են իրենց դերը և մուսուլմանական արմատականության հիմնական հակառակորդներից են:

Ալ-Անդալուս. արաբական կամ մուսուլմանական Իսպանիա (711-1492): Այս տեղանունը, ենթադրաբար, ծագել է «վանդալ» ցեղանունից (վանդալ-անդալ-Անդալուս): Զբաղեցնում էր գրեթե ամբողջ Պիրենեյան թերակղզու տարածքը: Ռեկոնկիստայի արդյունքում 1492 թ. տապալվեց վերջին մուսուլմանական էմիրությունը՝ Գրանադան: Արաբական Իսպանիայում

մշակույթների միահյուսման հետևանքով ձևավորվեցին ուրույն և շատ հարուստ ճարտարապետական, երաժշտական, փիլիսոփայական, գրական դպրոցներ, որոնց շրջանակներում ծնված ստեղծագործությունները մինչ օրս մնում են անզերազանցելի:

Ներկայիս Իսպանիայի նահանգներից մեկի անունն է Անդալուսիա:

Աշուրա. *Հիջրայի* 61 թ. մուհարրամ ամսի 10-րդ օրը, երբ Քերբելայի մոտ սպանվեց շիայական իմամ Հուսեյնն իր ընտանիքի և կողմնակիցների հետ: Ի հիշատակ այդ մարտիրոսության՝ ամեն տարի այդ օրը սկսվում են սգո արարողություններ (*թա՛ղիա*), որոնք տևում են 10 օր: Հավատացյալները հավաքվում են մզկիթներում, մեդրեսներում կամ հատուկ հուսայնիե կոչվող սրահներում, որտեղ ընթերցվում են Հուսեյնի և նրա զինակիցների տանջանքների մասին պատմող պատմություններ: Փողոցներում և հրապարակներում երթեր են տեղի ունենում, որոնց մասնակիցները դաշույններով և շղթաներով հարվածում են իրենց, որպեսզի զգան այն ցավը, որ զգացել են մարտիրոսները: Այս միստերիան ոչ միայն ողբի արտահայտման արարողություն է, այլ նաև ներողամտության հայցում է, քանի որ իմամ Հուսեյնին խոստացված օգնությունը չցուցաբերվեց Քուֆայի շիաների կողմից: Կանայք այդ օրը նույնպես սգում են, և նրանց թափած արցունքները հավաքվում են հատուկ սրվակների մեջ, քանի որ համարվում է, որ այդ օրվա արցունքները բուժիչ հատկություններ ունեն:

Մունիների տեսակետից այդ օրը նույնպես սրբազան է, քանի որ Ալլահը մուհարրամի 10-ին ստեղծել է Ադամին, *Մուսան* փրկվել է Եգիպտոսից և ավարտվել է ջրհեղեղը:

Ադաթ. սովորույթ, սովորություն: Սովորույթային իրավունք, որը մասամբ ներգրավվել է *շարիաթի* համակարգի մեջ:

Ադաւ. իսլամում՝ առաջին մարդ արարածը, որը նաև մարգարե է համարվում: Արարվել է չթրծված չոր կավից, որը հրեշտակները Ալլահի հրամանով բերել են Մեքքայից և Եմենից: Կյանք է առել Ալլահի շնչից, ուստի համարվում է աստվածային ոգու կրող: Այս բարձրագույն որակը փոխանցվել է նաև ողջ մարդկությանը՝ ի տարբերություն մյուս արարածների:

Ազան. կանչ, որով մուսուլմաններին տեղեկացնում են աղոթքի անցնելու մասին: Հնչեցվել է *մուազհինի* կողմից *մինարեից*. Ներկայումս համապատասխան ժամերին՝ օրը հինգ անգամ, ազանը հնչում է ձայնագրությամբ:

Ալի իբն Աբի Տալիբ (599-661). իսլամի ծագման և ամրապնդման ժամանակաշրջանի կարևորագույն անձնավորություններից մեկը, որի կյանքը, գործունեությունը և կերպարը հսկայական ազդեցություն ունեցան մուսուլմանական համայնքի հետագա պատմության վրա: Չորրորդ խալիֆն է (656-661), Մուհամմադ մարգարեի հորեղբայր Աբու Տալիբի որդին և մարգարեի սիրելի դստեր՝ Ֆատիմայի ամուսինը: Համարվում է առաջին մուսուլմանը, որը կռապաշտ չի եղել, այլ անմիջապես դավանել է իսլամ: Բոլոր շիայական ուղղությունների համար առաջին *իմամն* է, իսկ *դուլաթներին* պատկանողները Ալիին աստվածացնում են:

Հոր սնանկանալու պատճառով Մուհամմադ մարգարեն հորեղբոր բեռը թեթևացնելու համար Ալիին տարավ իր տուն և վերցրեց իր խնամքի տակ: Ալին դեռ երեխա էր, երբ իսլամ ընդունեց, և այդ օրվանից նա աչքի էր ընկնում իր հավատով, աստվածավախությամբ, նվիրվածությամբ և ասկետական ապրելակերպով: Մուհամմադի Մադինա տեղափոխվելու ժամանակ, իր կյանքը վտանգի տակ դնելով, մնաց մարգարեի տանը, որպեսզի թշնամիները համոզված լինեն, որ մարգարեն տեղից չի շարժվել:

Հայտնի է որպես դյուցազն, բոլոր մենամարտերում հաղթող է դուրս եկել: Նաև հմուտ հռետոր էր և բանաստեղծ:

Մարգարեի մահից հետո, երբ Ալին Մուհամմադի դին պատրաստում էր հուղարկավորման համար, խալիֆի ընտրության ընթացքում մարգարեի մի քանի զինակիցներ առաջարկեցին Ալիի թեկնածությունը: Նույնը կրկնվեց նաև խալիֆ Օմարի մահից հետո, սակայն միայն Օսմանի սպանությունից հետո նա դարձավ խալիֆ: Նորընտիր խալիֆի իշխանության դեմ ապստամբեցին մարգարեի կինը՝ Այշան, և նրա երկու հեղինակավոր զինակիցները՝ ազ-Զուբայրը և Տալհան, որոնց հավաքած բանակը պարտության մատնվեց: Ալիին հավատարմության երդում չտվեց նաև Սիրիայի կառավարիչ, Օմայան տոհմի ներկայացուցիչ Մուավիան, որը Մուհամմադ մարգարեի ամենահամար հակառակորդ Աբու Մուֆյանի որդին էր և մեղադրում էր Ալիին Օմայան տոհմի մյուս ներկայացուցչի՝ խալիֆ Օսմանի սպանության մեջ: Պատերազմը երկու հակառակորդների միջև ավարտվեց *Միֆֆինի ճակատամարտով*, որի արդյունքներն անորոշ մնացին, քանի որ երբ հակառակորդի շարքերում Մուհամմադ մարգարեի զինակիցները նիզակների վրա Ղուրանի էջեր բարձրացրին՝ առաջարկելով խաղաղ միջոցներով խնդիրը լուծել, Ալին ստիպված եղավ դադարեցնել իր հաղթական բանակի առաջընթացը: Ճակատամարտում հաղթանակից հրաժարվելը Ալիի բանակի մի մասը՝ *խարիջիականները*, գնահատեց որպես Ալլահի կամքի անտեսում և հեռացավ նրա բանակի դիրքերից: Նրանք անհավատության մեջ մեղադրեցին Ալիին, Մուավիային և վերջինիս կողմնակից Եգիպտոսի կառավարիչ Ամր իբն ալ-Ասին: Ալին սպանվեց խարիջիների ձեռքով 661 թ.: Գերեզմանի տեղը երկար ժամանակ գաղտնի է պահվել, միայն արքայան խալիֆ Հարուն առ-Ռաշիդի հրամանով Նեջեֆ կոչվող վայրում կառուցվել է դամբարան, որի շուրջը հետագայում քաղաք է ձևավորվել: Դամբարանը շիաների կարևոր սրբավայրերից մեկն է:

Նրա կողմնակիցները (շիաթ Ալի), համոզված լինելով, որ Ալիին և Ֆատիմայից ծնված նրա զավակներին՝ Հասանին և Հուսեյնին, նրա միջոցով տրված է միայն *իմամին* հատուկ *վալիի* հատկությունները, խալիֆ հռչակեցին *Հասանին*:

Շիաների դավանաբանական համակարգում Ալին, իմամ և Ալլահի վալի լինելով, Ալլահի ներշնչմամբ է գործում, ուստի անսխալական է և անմեղ: Նրան տրվել է Ղուրանի այաթների ներքին (բատին) իմաստը, որը հաղորդվում է նրա շառավիղներին:

Ալի իլահի/մուհամմադիյուն. նաև Ահլ ալ-հակ: *Ղուլաթների* թվին պատկանող միստիկական գնոստիկ ուղղություն, որը առաջացել է 14-րդ դ.: Հիմնական գաղափարներից է այն, որ Աստված, որի անունը Ալի է (բայց ոչ Ալի իբն Աբի Տալիբ, այլ Բարձրյալ իմաստով), մարդկանց հայտնվում է բոլոր դարաշրջաններում տարբեր մարմնավորումներով, որոնց ընդհանուր թիվը 7-ն է: Ալի իբն Աբի Տալիբի մարմնավորումը մարդկության պահապանն է և ճշմարիտ ուղին նշողը, վայրենությունից քաղաքակրթություն բերողը: Ալլահի մարմնավորումները մարդկանց զսպում են անօրինությունից և պղծությունից, որը անխուսափելիորեն տիրելու է նրանց մինչև վերջին մարմնավորման ժամանակաշրջանը, երբ նրանք կանգնելու են Ալլահի դատաստանի առաջ: Մուհամմադը, նրանց պատկերացումների համաձայն, ոչ թե մարգարե էր, այլ Ալի իբն Աբի Տալիբի մարմնավորմամբ Աստծո նախակարապետը: Այս մարմնավորման հիմնական առաքելությունն է Ղուրանի տարածումը մարդկանց մեջ, սակայն Ղուրանի իմաստը հայտնի է միայն մի քանի ընտրյալ դերվիշների: Համայնքը չունի հատուկ աղոթքի վայրեր, նրանք չեն ընդունում շարիաթի դրույթները և պարտավորությունները, օրինակ՝ հինգ անգամ աղոթելը, հաջը, սաումը: Համայնքի անդամների պարտքն է հոգևոր ուսուցիչների ղեկավարությամբ ձգտել հոգևոր կատարելության: Նրանք չեն ընդունում նաև շիայական իմամներին, սակայն համայնքը ղեկավարվում է և համակարգվում հոգևոր ուսուցիչների 11 ընտանիքների կողմից: Այս կրոնական ուսմունքի վրա մեծ ազդեցություն են ունեցել սուֆիական գաղափարները: Ներկայումս նրանց թիվը հասնում է մոտ 3 միլիոնի:

Այիվ. նան՝ ուլեմ, արաբ.՝ գիտնական: Մուսուլմանական ավանդության գիտակ և պահապան: Ալլահի պարզևած գիտելիքի՝ *հլմի* գիտակ: Ալիմները մասնագիտացած են Ղուրան, հադիսներ և շարիաթ ուսումնասիրող գիտություններում:

Ահդ ազ-գիմնա. հովանավորության պայմանագիր: Կնքվում էր մուսուլմանների և իսլամի պատմության սկզբնական շրջանում *Ահլ ալ-քիթաբի*, այսինքն՝ հրեաների և քրիստոնյաների համայնքների միջև: Այս պայմանագրի համաձայն՝ Ահլ ալ-Քիթաբի համայնքներն անցնում էին *ուլմայի* հովանու և պաշտպանության տակ: Նրանք ազատ էին իրենց կրոնին հետևելու, աղոթքներն ու բոլոր մյուս կրոնական ծիսակատարություններն իրականացնելու: Ներհամայնքային խնդիրները կարգավորվում էին համաձայն տվյալ կրոնի դրույթների: Եկեղեցիները, սինագոգները, վանքերը, աղոթավայրերը, ուխտավայրերը, եկեղեցապատկան կալվածքները ազատվում էին հարկերից: Փոխարենը նրանք պետք է վճարեին գլխահարկ՝ *ջիզյա*: Եթե որևէ խնդիր էր առաջանում *գիմնի* և մուսուլմանի միջև, ապա այն ենթակա էր շարիաթի դատարանին, որտեղ մուսուլմանները արտոնություններ ունեին, մասնավորապես վկայության հարցերում: Տարբեր *մազհաբներ* այս խնդրին տարբեր մոտեցումներ ունեին:

Ահլ ալ-քիթաբ. արաբ.՝ Գրքի մարդիկ: Այսպես են Ղուրանում անվանվում այն ժողովուրդները, ում Ալլահը մինչև Ղուրանը տվել էր Սուրբ գրքեր. հրեաները և քրիստոնյաները:

Այաթ. արաբ.՝ նշան, նշանակ, Ալլահի խոսքը, որ տրվել է որպես մարգարեության նշան: Ղուրանում նվազագույն տեքստային միավորը, հանգատող: Այաթների թիվը, տարբեր խմբագրություններում կիրառվող հաշվարկային համակարգերի համաձայն, 6204-ից մինչև 6236 է: Այաթների թիվը *սուրաներում* (ծավալով ամենափոքրերում) մինչև 286 է (Ղուրանի 2-րդ «Կով» սուրայում): Հանգատողները իմաստային առումով ամբողջական և ավարտուն են, ուստի հիմնականում կապված չեն նախորդող և հաջորդող այաթների հետ: Այդ պատճառով հաճախ են դեպքերը, երբ մի ժամանակաշրջանում արտասանված այաթը տեղ է գտել մեկ այլ ժամանակաշրջանում արտասանված սուրայի տեքստում: Երբ մարգարեից պահանջել են, որ նա մյուս մարգարեների նման իր առաքելությունը ապացուցի հրաշքներով, նա պատասխանել է, որ ամենամեծ հրաշքը, որը տրվել է, այաթներն են՝ Ալլահի խոսքը, որն ուղղված է իր ժողովուրդին:

Այաթոլլահ. արաբ.՝ Ալլահի նշան: Իսլամի տասներկուերորդական շիաների ճյուղում *ալ-դայբա ալ-քուբրայի* ժամանակաշրջանից (940/942) *իմամի* բացակայության պայմաններում հավատացյալների համայնքի կրոնաիրավական ղեկավարությունը իրականացնելու համար *մուջթահիդների* շրջանակից ընտրվում է այաթոլլահ, որն իր վարքով, գիտելիքներով և հավատով օրինակելի էր մյուսների համար: Նրա արձակած *ֆեթվաները* անվիճարկելի էին: Ներկայումս այաթոլլահների թիվը Իրանում, Իրաքում և Լիբանանում բավականին մեծ է: Իրանի Իսլամական հեղափոխության առաջնորդ այաթոլլահ Խոմեյնին իր վրա վերցրեց այաթոլլահներ նշանակելու և այդ կարգից զրկելու պարտականությունը, ինչից հետո վերջիններիս թիվը նվազեց:

Այաթոլլահ ալ-Ուզմա. Մեծ այաթոլլահ: Այս հոգևոր տիտղոսը տրվում է միայն ամենահեղինակավոր այաթոլլահներին, որոնց իրավունք է վերապահվում ֆեթվաներ արձակելու կարևորագույն կրոնական և իրավական հարցերի վերաբերյալ՝ բացառությամբ տասներկուերորդականների կրոնի և հավատի հիմքերի:

Այիշա (մահ. 678). Մուհամմադ մարգարեի կինը և առաջին խալիֆ *Աբու Բաքրի* դուստրը: 620 թ. մարգարեն խնդրեց Աբու Բաքրին կնության տալ իր դստերը: Մուսուլմանական աղբյուրների մեծամասնությունը հաղորդում է, որ Այիշան այդ ժամանակ 6 տարեկան էր, այդ պատճառով նա մնաց հոր տանը մինչև հասունանալը: 9 տարեկանում (այլ աղբյուրների

համաձայն՝ 10 տարեկանում, իսկ ներկայումս մուսուլմանական հեղինակները փաստարկներ են բերում, որ նա 15 տարեկան էր, սակայն նրանց հիմնավորումները շատ թերի են) նա տեղափոխվում է մարգարեի տուն և դառնում նրա սիրելի կինը: Եզակի կանանցից էր, որոնք գրագետ էին: Այիշայի անվան հետ են կապված «Նուր» սուրայի 11-21 այաթները, որտեղ Ալլահը, ինչպես հավատում են մուսուլմանները, արդարացնում է Այիշային, որին կասկածել էին մարգարեին հավատարիմ չլինելու մեջ, և ցուցումներ է տալիս, թե ինչպես պետք է բացահայտվեն և պատժվեն շնացողները, և ինչ պատիժ է հասնում զրպարտողներին, որոնք անհիմն մեղադրել են որևէ մեկին շնության մեջ: Մարգարեի մահից հետո շարունակել է ապրել նրա տանը, սակայն խալիֆ Օսմանի սպանությունից հետո մասնակցել է *Այի իբն Աբի Տալիբի* դեմ բարձրացրած ապստամբությանը, որն ավարտվեց Ուդտի օրը կոչվող ճակատամարտում ապստամբների պարտությամբ: Հայտնի էր որպես Մուհամմադ մարգարեի *հաղիսների* գիտակ, նրա անունից բազմաթիվ հաղիսներ են հաղորդվում:

Անսար. արաբ.՝ օգնականներ: *Մադինայի* մուսուլմաններին Մուհամմադ մարգարեի կողմից տրված անունն է, այն բանի համար, որ նրանք իրեն հրավիրել էին տեղափոխվելու Մեքքայից Մադինա, և օգնեցին իսլամի ամրապնդման և ումմայի կայացման գործում: Անսարներ անվանումը տրվել էր նրանց *մուհաջիրներից*՝ Մեքքայից տեղափոխվողներից տարբերելու համար:

Ասասիններ. շիայականության իսմայիլական ճյուղից 10-րդ դարի սկզբին առանձնացած նիզարիականների ուղղություն: Անվանման ծագման երկու վարկածներից առաջինը, որն իր սկիզբն առնում է միջնադարյան մի շարք աղբյուրների հաղորդած տեղեկություններից, կապում է այն հաշիշի (ցածր ծագում ունեցող, խուժան) իմաստի հետ: Երկրորդը կապված է այն առասպելի հետ, որ ասասինների հիմնադիր *Հասան իբն աս-Սաբահը* հաշիշ էր տալիս իր ֆիդայիներին, որից հետո նրանք արթնանում էին դրախտանման մի վայրում, որտեղ ստանում էին բոլոր երևակայելի հաճույքները: Այնուհետև նրանց ասվում էր, որ եթե նորից ուզում են այդ դրախտում հայտնվել, ապա պետք է գոհեն իրենց կյանքը շեյխի առաջադրանքը կատարելու համար: Ամենայն հավանականությամբ Հասան իբն աս-Սաբահը ուսումնասիրել էր ռազմականացված քրիստոնեական միաբանությունների փորձը, կառուցվածքը, ապրելակերպը, Բարձրյալին ծառայելու վերջիններիս որդեգրած վարկածը: Հասանը, Արևմտյան Իրանում մի քանի ամրոցներ գրավելով և հմտորեն կիրառելով նիզարիական քարոզչությունը և անհաբեկչությունը, կարողացավ իրեն ենթարկել բավականին մեծ տարածքներ, որտեղ իր հրամանով չէին գործում շարիաթի օրենքները: Իր առօրյա կյանքում չափազանց զուսպ լինելով՝ նա արգելել էր շքեղության որևէ դրսևորում: Համայնքում բոլորը նույն ասկետական ապրելու կերպն ունեին: Այդ միջոցները, որոնք հավաքվում էին համայնքի ղեկավարի ձեռքում, ծախսվում էին ամրոցների ուժեղացման, տարբեր տիպի կիրառական գիտությունների, ինչպես նաև ալքիմիայի զարգացման համար: Այս նպատակով հրավիրվում կամ բռնի կերպով բերվում էին գիտնականներ, բժիշկներ, ինժեներներ: Ասասիններից սարսափում էին այդ ժամանակաշրջանի բոլոր տիրակալները: Համաձայն առասպելի՝ գլխավոր ամրոց Ալամութում փակցված էր բրոնզե տախտակ, որի վրա գրված էին գոհված ֆիդայիների և նրանց ձեռքով սպանված թագավորների, վեզիրների, իշխանների անունները: Համայնքի անդամները ենթարկվում էին կարգապահության խիստ կանոնների, կառուցվածքը հիերարխիկ էր. ներքին օղակը ֆիդայիներն էին, իսկ բուրգի վերևում էր Շեյխ ալ-Ջաբալը (Լեռան ձեռունին): Ասասինների ստեղծած համակարգը շարունակում էր հզորանալ նաև Հասան իբն աս-Սաբահի մահից հետո, սակայն Ֆաթիմյան խալիֆայության անկումից հետո այն նույնպես թուլացավ: Ասասինների վերջին ամրոցը գրավվեց և ոչնչացվեց Եզիպտոսի սուլթան Բեյբարսի կողմից 1273 թ.: Դավանաբանական տեսակետից սկզբնական շրջանում հետևողականորեն պահպանվում և քարոզվում էր

խամայիլականությունը: Մակայն 13-րդ դարի սկզբից, համաձայն որոշ տեղեկությունների, այստեղ ևս փորձեր են կատարվում կենդանի Աստծո հայտնության, որոնք սակայն հաջողությամբ չեն պսակվում: Ասասինական կազմակերպության կառուցվածքը, ինչպես նաև մարդասպան ֆիդայիների պատրաստման մեթոդաբանությունը մեծ ազդեցություն գործեցին հետագայում ստեղծված նման կազմակերպությունների վրա: Այսօր էլ մահապարտ մարդասպանները լայնորեն օգտագործվում են ծայրահեղական սուննիական կազմակերպությունների կողմից:

Ասհաբ կամ **սահաբա**. այդպես էին կոչվում Մուհամմադ մարգարեի զինակիցները: Սկզբնական շրջանում միայն այն հավատացյալները, որոնք մասնակցել էին մարգարեի հետ ռազմական գործողությունների: Հետագայում ասհաբներին բաժանեցին երեք խմբի՝ *մուհաջիրներ*, *անսարներ* և *մուսուլմաններ*, որոնք իսլամ էին ընդունել՝ լսելով մարգարեի քարոզը այլ վայրերում:

Արաֆաթ. Մեքքայից 22 կմ հեռավորության վրա գտնվող 60 մ բարձրությամբ լեռ իր նույնանուն հովիտով: Համաձայն մուսուլմանական ավանդության՝ դրախտից վտարվելուց հետո Ադամն այս վայրում է հանդիպել Հավային (աստվածաշնչյան Եվա): Հաջի գլխավոր արարողություններից մեկի՝ *մսուկիֆի* (կանգառ) անցկացման վայր: Հավատացյալներն այստեղ են կանգ առնում Ալլահի առջև և աղոթում:

Արքան ալ-դին կամ ուսուլ ալ-դին՝ կրոնի հիմքեր. կրոնի հիմքերը կամ, այլ կերպ ասած, հավատացյալի պարտադիր պարտականությունները սուննիական իսլամում հինգն են՝ *շահադա*, *սալաթ*, *զաքյաթ*, *հաջ* և *սաու*: Շիայականության տարբեր ուղղություններում դրանք տարբեր են:

Արքան ալ-իման կամ ուսուլ ալ-իման. հավատի հիմքեր. սուննիական իսլամում դրանք վեցն են՝ *թաուհիդ*, հավատ հրեշտակների նկատմամբ, հավատ Ղուրանի և Ալլահի այլ Սուրբ գրքերի (Տորա, Սադմոս, Ավետարան) նկատմամբ, հավատ Ալլահի առաքյալների նկատմամբ, հավատ Նախախնամության նկատմամբ, հավատ անդրշիրիմյան կյանքի և Ահեդ Դատաստանի նկատմամբ: *Տասներկու երոթղականների* հավատի հիմքերում կան որոշ սկզբունքային տարբերություններ: Նույնը վերաբերում է նաև շիայական մյուս ուղղություններին:

Բ

Բատինիականություն. արաբ.՝ *բատին* (ներքին) բառից: Բատինիականություն անվանվել էն հիմնականում շիայականությունը և սուֆիական որոշ տարիկաթների մեջ ձևավորված տեսությունը, որ Ղուրանի *այաթները*, բացի ակնհայտ, պարզ «երևացող» իմաստներից, ունեն նաև թաքնված «ներքին» իմաստներ, որոնց մեջ թափանցելու ունակությունը տրված է միայն հատուկ (*խասս*) անձնավորություններին:

Բեքթաշիական տարիկաթ. համարվում է 12 սուֆիական տարիկաթներից մեկը: Ստեղծվել է 13-րդ դարում Փոքր Ասիայում: Անվանումը ստացել է իր հիմնադրի՝ Հաջի Բեքթաշի (մահ. 1271 թ.) անունից: Հետագայում լայն տարածում է ստացել Օսմանյան կայսրության տարածքում: Բեքթաշիական տարիկաթը, իր ուսմունքի մեջ միավորելով շիայական, սուննիական, շամանական և քրիստոնեական տարրեր, ինչպես նաև ի սկզբանե իր շարքերի մեջ ունենալով մեծ թվով *դազիներ*, կրոնագաղափարական կարևոր հենարան դարձավ ենիչերիների կազմավորման համար: Դա նպաստեց նրան, որ տարիկաթը մշտապես օգտվի սուլթանների հովանավորությունից, ինչը լուրջ գործոն էր բեքթաշիականության տարածման, հզորացման և հարստացման համար: Բայիմ Սուլթանի (մահ. 1516 թ.) գլխավորությամբ տարիկաթը վերածվեց հստակ հիերարխիկ կառուցվածքով, խիստ կարգապահությամբ ճյուղավորված *թեքքեների*,

գավիթյաների և մեղրեսենների համակարգով, յուրօրինակ և միայն այս տարիկաթին հատուկ ծեսերով և խորհրդանիշներով կազմակերպության: Տարիկաթը, իր դավանաբանական հիմքում լինելով չափազանց էկլեկտիկ, հայտնի էր իր կրոնական հանդուրժողականությամբ: Հոգևոր ծագումնաբանական շղթան բեքթաշիների տարբեր խմբերի մոտ տարբեր է: Մի մասի մոտ այն բաղկացած է Ալլահ, Ալի, Մուհամմադ, մյուս խմբի մոտ՝ Ալի, Մուհամմադ, Աբու Բաքր, մեկ այլ խմբի մոտ՝ Ալի, Հաջի Բեքթաշ, Ֆազալլահ Ասթարաբադի (մահապատժի է ենթարկվել 1401 թ.) եռյակներից: Քանի որ ուսմունքը գաղտնի բնույթ ունի, այս հարցում ամբողջական հստակություն չկա: Շարիաթի նորմերի պահպանումը պարտադիր էր միայն այն բեքթաշիների համար, որոնք դեռ չէին բարձրացել հիերարխիկ այն աստիճանին, որը թույլ էր տալիս ստանալ գիտելիքներ բեքթաշիական գաղտնի միստիկական ճանապարհի մասին: Հնգանգամյա աղոթքը մերժվում էր: Տարիկաթի անդամները տարին մեկ անգամ գնում էին խոստովանության իրենց համայնքի ղեկավարի մոտ, որից հետո մեղքերի թողություն էին ստանում: Պահքը տևում է 10 օր, երբ արգելված է ջուր խմելը, իսկ ծարավը հագեցվում է մրգերի և բանջարեղենի օգնությամբ: Ալին Ալլահի մարմնավորումն է, իսկ *ալ-հսրա ու-լ-միհրաջը* (Մուհամմադ մարգարեի երկնային ճամփորդություն) վկայում է Ալիի՝ Մուհամմադի մտերիմ լինելը: Հատուկ պաշտամունքի են արժանացնում 6-րդ իմամ *Ջաֆար աս-Սադիկին*: Կանայք և տղամարդիկ միասին են աղոթում: *Ջիքրը կատարվում է* բարձրաձայն: Հատուկ հագուստ են կրում: 19-րդ դարի սկզբին սուլթան Մեհմեդ Երկրորդը արգելեց բեքթաշիական տարիկաթի գործունեությունը, բռնագրավեց ամբողջ ունեցվածքը, որի մեծ մասը հանձնեց բեքթաշիների թշնամիներին՝ *Նակշբանդիական տարիկաթին*: 19-րդ դարի երկրորդ կեսից տարիկաթը նորից երևան է գալիս, սակայն Մուստաֆա Աթաթուրքի հրամանով 1925 թ. Թուրքական Հանրապետությունում բոլոր տարիկաթներն արգելվում են: Ներկայումս բեքթաշիները գործում են մի շարք երկրներում, հիմնականում Թուրքիայում: Հայոց ցեղասպանության տարիներին բազմաթիվ հայեր իրենց կյանքը փրկելու համար իսլամ են ընդունել՝ մտնելով այդ տարիկաթի մեջ:

Բուիներ. Հյուսիսային Իրանից ծագող ընտանիք, որը, հաստատվելով Համադանում, Ռեյում, Իսֆահանում, Քերմանում և մի շարք այլ քաղաքներում և շրջաններում, 945 թ. գրավեց Բաղդադը և զրկեց *Աբբասյան* խալիֆներին աշխարհիկ իշխանությունից: Աբբասյանները պահպանեցին հոգևոր առաջնությունը որպես խալիֆներ, սակայն երկրի կառավարումը ստանձնեցին Բուիները: Ադուդ ադ-Դաուլայի (949-983) ժամանակաշրջանը համարվում է Բուիների պետության հզորության և զարգացման գագաթնակետը: Ադուդ ադ-Դաուլան նույնիսկ ընդունեց հին իրանական բարձրագույն շահնշահի տիտղոսը: Իրենց կրոնական պատկանելությամբ շիաներ լինելով՝ Բուիները խալիֆայությունում իրականացնում էին կրոնական հանդուրժողականության քաղաքականություն: Սակայն Աբբասյան խալիֆայության հարևաններ Բյուզանդիայի, Ֆատիմյան Եգիպտոսի և Միջին Ասիայից հարձակվող թյուրք քոչվորների հետ պատերազմները սպառեցին Բուիների ուժերը, և 1055 թ. սելջուկների կողմից Իրաքի և Իրանի գրավումը վերջ դրեց այս հարստության իշխանությանը:

Բուրակ. արաբ.՝ կայծակնային: Առասպելական կենդանի՝ ձիու մարմնով և մարդու գլխով, որը մի ակնթարթում Մուհամմադ մարգարեին Մեքքայից հասցրեց Երուսաղեմ, որպեսզի նա կատարի իր երկնային ճամփորդությունը (*ալ-Իսրա ու-լ-միհրաջ*) և հանդիպի Ալլահին: Իրանական մանրանկարչության մեջ Բուրակը ներկայացվում է սիրամարգի թևերով և պոչով:

Բուրկա՝ նան փարաջա, նան չադրա. կնոջ հագուստ, որը ամբողջովին ծածկում է նրան: Դեմքը փակվում է ցանցե քողով: Չշփոթել *նիքաբի* և *հիջաբի* հետ: Սուննիական մազհաբները տարաձայնություններ ունեն բուրկայի կրելու պարտադիր լինելու վերաբերյալ:

Դ

Դափ. քարոզիչ, մեծ դեր էին կատարում իսմայիլականության տարածման մեջ: Հետագայում դափների միջոցով իրենց ուսմունքների տարածումը և նոր հավատացյալների թվի ավելացումը լայնորեն կիրառվեցին մուսուլմանական գրեթե բոլոր ուղղությունների կողմից: Ներկայումս հատկապես արմատական սուննիական խմբավորումների դափների ակտիվ գործունեությունը թույլ է տալիս տարածել նրանց գաղափարները հավատացյալների շրջանակներում: Հայտնի են այնպիսի կազմակերպություններ, ինչպիսիք են Ջամաաթ աթ-Թաբլիդը և Անսար ալ-իսլամը, որոնց անդամների հիմնական գործունեությունը դափների միջոցով արմատական, երբեմն ծայրահեղական գաղափարների տարածումն է:

Դար ալ-իսլամ. Իսլամի տարածք կամ Իսլամի աշխարհ: Այս եզրույթով միավորվում են բոլոր այն տարածքները, որտեղ գործում է *շարիաթը*: Սուննի հավատացյալների պատկերացումների համաձայն՝ ամբողջ աշխարհը ի վերջո պետք է դառնա «դար ալ-իսլամ» ջիհադի (բոլոր իմաստներով) միջոցով:

Դար ալ-հարբ. Պատերազմի տարածք կամ Պատերազմի աշխարհ: Այն բոլոր տարածքներն են, որտեղ չեն գործում շարիաթի օրենքները: Ներկայումս աշխարհի նման բաժանումը քննադատության է արժանացել մուսուլմանական մի շարք գիտնականների կողմից, քանի որ նման բան չկա հիշատակված Ղուրանում և սուննայում: Այս բաժանումը ձևակերպել է հանաֆիական մազհաբի հիմնադիր Աբու Հանիֆան:

Դար սու-սուլհ. Ժամանակավոր խաղաղության տարածք կամ Ժամանակավոր խաղաղության աշխարհ: Այս «աշխարհի» մեջ էին մտնում այն երկրները, որոնց հետ զինադադարի կամ խաղաղության պայմանագրեր էին կնքվել: Դրանց թվին էր պատկանում, օրինակ, Հայաստանը:

Դերվիշ. շրջող սուֆիներ մի շարք *սուֆիական տարիկաթներում*: Ասկետական կյանք էին վարում, աչքի էին ընկնում իրենց աստվածավախությամբ, առաքինությամբ, որոշ դերվիշներ սրբերի համբավ ունեին, և մահից հետո նրանց գերեզմանները ուխտատեղի էին դառնում:

Դժոխք նան նար (կրակ). Ղուրանում և հադիսներում բազմիցս հիշատակվում է որպես մեղավորների անդրշիրիմյան կյանքում պատիժ կրելու վայր: Ինչպես և *դրախտը*, դժոխքը նկարագրվում է անապատի բնակիչների պատկերացումներին համապատասխան: Այնտեղ կրակ է, գարշահոտ, ջուր և ստվեր չկա, մեղավորները տարբեր մեղքերի համար տարբեր պատիժներ են կրում. օրինակ՝ ագահների կոկորդը լցնում են հալեցրած ոսկի և արծաթ: Մեղսագործների մաշկը այրվում է և փոխարինվում տանջանք պատճառող հատուկ «դժոխային» մաշկով: Նրանք շղթայված են, հագուստը վառվող խեժից է: Այնտեղ հատուկ ծառեր են աճում գուլքում անունով (հայերեն բարբառային՝ զիկում), որոնց վրա պտուղների փոխարեն *շայթանների* գլուխներ են: Ունի յոթ դարպասներ, որոնցից յուրաքանչյուրով անցնում են տարբեր տեսակի մեղքեր գործածները: Ամենադաժան պատիժը դժոխքում ստանալու են անհավատները:

Դիա. արյան գին, վիրա, հատուցում սպանության կամ մարմնական վնասվածք հասցնելու համար: Լինելով սովորության իրավունքի հիմնական միջոցը նման տեսակի իրավական խնդիրների լուծման և արյան վրեժը լուծելու համար, դիան ընդունվեց նաև մուսուլմանական կրոնաիրավական համակարգի կողմից: Ամբողջական դիան հավասար է 100 ուղտի կամ դրան համարժեք գումարի, ընդ որում՝ կարող է վճարվել տարբեր ապրանքներով: *Ֆիկհը* մշակել է հատուցումների հստակ և բավականին բարդ համակարգ, օրինակ՝ տեսողության կորստի համար վճարվում է ամբողջական դիայի կեսը, կոտրվածքի համար՝ տասներորդ մասը և այլն: Կանանց հասցված վնասի համար դիան ավելի փոքր է, քան

տղամարդկանց համար: Մինչև դիպի վերաբերյալ համաձայնություն ձեռք բերելը մեղավորը համարվում է ծիսական իմաստով պիղծ և չի կարող մասնակցել աղոթքին և այլ կրոնական ծեսերին:

Ղին. արաբ.՝ կրոն: Ղուրանում այս եզրույթը նշվում է 100-ից ավելի անգամ տարբեր իմաստներով (կրոն, հատուցում, դատաստան, հնազանդություն, անհատի հավատ): Հաճախ է հանդիպում «Ալլահի կրոն» ձևակերպումը՝ բոլոր վերը նշված իմաստներով: Հիմնականում «ղին» եզրը Ղուրանում և հադիսներում նշանակում է ծիսական և իրավական համակարգ, որը կազմակերպում է կրոնական համայնքի և առանձին հավատացյալի հավատն առ Ալլահ և Բարձրյալին ամբողջովին նվիրվելը և հնազանդվելը: Հադիսներից մեկում մարգարեն ասում է, որ դինը բաղկացած է երեք կարևոր մասերից՝ հավատ (*իման*), հնազանդություն Ալլահին (*իսլամ*) և կատարելության ձգտում հավատում (*իհսան*):

Ղվին կամ Դաբիլ (արաբ.), 642 թ. արաբական զորքը գրավեց հայկական Դվին քաղաքը, և բնակիչները կատաղի դիմադրություն ցույց տվեցին, և նրանցից 12 հազարը սպանվեց, իսկ 35 հազարը գերի վերցվեց և ստրկացվեց: Հայոց սպարապետ Թեոդորոս Ռշտունին հարձակվեց արաբների վրա և կարողացավ, նրանց պարտության մատնելով, ազատել գերիներին: Արաբական խալիֆայության հետ խաղաղ պայմանագիր կնքելուց հետո Դվինը դարձավ *նստիկանի* նստավայր: Դվինում իրականացվող պեղումները բազմաթիվ հետաքրքիր փաստեր հայտնաբերեցին հայերի և արաբների հարաբերությունների վերաբերյալ այն ժամանակաշրջանում (8-10 դդ.), երբ Հայաստանը մտնում էր խալիֆայության կազմի մեջ:

Դրախտ. արաբ.՝ ջաննա (այգի), կիրառվում է նաև «ջաննաթ»՝ «այգիներ» ձևը: Ինչպես և դժոխքը, դրախտը Ղուրանում և հադիսներում նկարագրվում է անապատային բնակիչների պատկերացումներին լիովին համապատասխան: Անդրշիրիմյան աշխարհում աստվածավախ և առաքինի հավատացյալներին սպասում են ստվերոտ ծառերով և հյութեղ պտուղներով այգիներ, քաղցրահամ ջրեր, գինու, մեղրի և կաթի գետեր: Գինուց չեն արբենում: Սևաչա գեղեցկուհիները հավերժ կույսեր են: Դրախտի բնակիչները շքեղ հագուստներ են կրում և ճաշակում են, ինչ կամենան: Դրախտում չես լսի պռոտախոսություններ և դատարկաբանություններ, այլ միայն՝ «Խաղաղություն, խաղաղություն»: Դրախտն ունի իր վայրերը արտոնյալների համար, օրինակ՝ Քաուսար լիճը, որը Մուհամմադ մարգարեի դրախտավայրն է: *Բատինիական* ճյուղերում գիտելիքին տիրապետողների համար դրախտը իմացության և ճանաչման վայր է:

Դրուզներ. իսլամի իսմայիլական ուղղությունից 11-րդ դարում առանձնացած ճյուղ, որն այնքան է հեռացել բուն մուսուլմանական սկզբունքներից և արմատներից, որ մուսուլմանական մյուս ուղղությունները դրուզներին մուսուլման չեն համարում, ինչի հետևանքով վերջիններս անընդհատ հետապնդվել են: Դրուզական կրոնական ուսմունքի ձևակերպումը հիմնականում նույն 11-րդ դարում կատարել են Ֆաթիմյան Եգիպտոսի խալիֆ ալ-Հաքիմի (996-1021) մտերիմ խորհրդականները՝ ադ-Դարազին (դրուզական ճյուղի էպոնիմ) և Համզան: Քանի որ նրանք համարում են, որ ադ-Դարազին հրաժարվել էր իրենց կրոնից և դավաճանել համայնքը, ապա իրենք իրենց անվանում են «մուվահիդուններ» (միաստվածականներ): Նրանք համարում են, որ նախորդ իսլամական ուղղությունները միայն հող են նախապատրաստել իրական թաուհիդի ձևավորման համար, իսկ դրուզների ուսմունքում այն ձևավորվել է որպես կատարյալ և վերջնական: Դրուզների դավանանքը պատկանում է բատինիական ուղղությունների շարքին, ուստի նրա մասին շատ բան հայտնի չէ: Դրուզները աստվածացնում են ալ-Հաքիմին, հավատում են հոգիների վերաբնակեցմանը: Նրանք հավատում են որ 11-րդ դարի կեսերին փակվել են «փրկության դռները», և ով հասցրել էր ընդունել իրենց կրոնը, նա կփրկվի, իսկ մյուսները դատապարտված են: Այստեղից նրանց հավատն առ այն, որ դրուզ դառնալն անհնար է,

մահացած հավատացյալների հոգիները վերաբնակվում են դրուզական ընտանիքներում ծնված մարմինների մեջ: Համայնքի անդամները բաժանվում են երկու մասի՝ ուկկալներ (խելոքներ, բանականներ) և ջուհիալներ (անիմացներ, տգետներ): Ուկկալների վերին աստիճանը կոչվում է աջավիդներ (կատարյալներ): Հավանաբար դրուզների դավանաբանական ուսմունքի վրա մեծ է եղել նաև պավլիկյանների ազդեցությունը: Ներկայումս դրուզների համայնքները բնակվում են Լիբանանում, Իսրայելում, Սիրիայում, Հորդանանում: Լիբանանում դրուզական համայնքն ունի նաև զգալի քաղաքական դերակատարություն: Համարվում է, որ աշխարհում բնակվող դրուզների ընդհանուր թիվը 1,5 միլիոնից 3,2 միլիոն է:

Զ

Զահիդ. ասկետ, հավատացյալ, որը հրաժարվում է երկրային գայթակղություններից՝ նվիրվելով իր հոգու փրկությանը և Ալլահի գովաբանմանը: Զահիդականություն է անվանվում նաև սուֆիականության ձևավորման առաջին շրջանը: Զահիդներն իրենց օրն անցկացնում էին աղոթելով և աստվածահաճո գործեր կատարելով:

Զահիբ. արաբ.՝ ակներև, երևացող: Վերաբերում է Ղուրանի այաթների իմաստների ըմբռնմանը առանց ներքին իմաստներ որոնելու:

Զահիրիականություն. 8-9-րդ դարերում ձևավորված ուղղություն, որը մերժում էր բատինիականությունը և հավատում էր, որ Ալլահը Մուհամմադ մարգարեի միջոցով իր *ունմային* տվել է այն գիտելիքը, կանոններն ու նորմերը, որոնք արտահայտված են Ղուրանի մեջ: Այդ իսկ պատճառով լրացուցիչ ներքին իմաստներ փնտրելը Ալլահի խոսքում անթույլատրելի է, քանի որ անհրաժեշտ բոլոր բացատրությունները և պարզաբանումները պարունակվում են Մուհամմադ մարգարեի հաղիսներում: Այս մոտեցումը ձևավորվել էր Դաուդ իբն Ալի ալ-Իսֆահանիի (որի պատվանունը ազ-Զահիրի էր (մահ. 883 թ.)) հիմնած զահիրիական *մազհաբի* շրջանակներում:

Զամզամ. արաբ.՝ առատ: *Քասաբայից* 21 մ հեռավորությամբ գտնվող սրբազան աղբյուր և ջրհոր, որի առաջացումը այս անապատային վայրում կապված է մի շարք առասպելների հետ: Դրանք բացատրում են Զամզամի հայտնվելը Ալլահի կամքով, որն իրականացվել է *Ջիբրիլի* կամ երկնային քարի կամ Ադամի միջոցով: Զամզամը կապված է նաև *Իբրահիմի* և նրա որդի *Իսմայիլի* անունների հետ: Ըստ ավանդության՝ Զամզամի տեղը մոռացվել էր, և այն նորից հայտնաբերում է Մուհամմադ մարգարեի պապ Աբդ ալ-Մուտտալիբը: Հաջի ժամանակ ուխտագնացները խմում են Զամզամի ջրից: Ներկայումս իրականացվում է նաև այդ ջրի շշալցում և վաճառք:

Զավիհա. արաբ.՝ անկյուն, ունի նաև խուց, մենության վայր իմաստները: 12-րդ դարից սկսած՝ այդպես են ավանվում սուֆիական կեցավայրերը, որտեղ բնակվում են *շեյխերը* իրենց *մուրիդների* հետ:

Զաքաթ. արաբ.՝ մաքրում: Կրոնական հարկ, որը բոլոր չափահաս հավատացյալները վճարում են ումմային, որպեսզի այն կարողանա հոգ տանել հիվանդների, որբերի, չքավորների համար, կառուցի և նորոգի մզկիթներ, օժանդակի ուխտավորներին և այլն: Հաճախ զաքաթը թարգմանում են որպես ողորմություն կամ բարեգործություն՝ շվոթելով այն սաղակալի հետ:

Ջիմնի. արաբ.՝ հովանավորյալ: Այդպես էին անվանում *Սհլ ալ-քիթաբի*, այսինքն՝ հրեաների և քրիստոնյաների այն համայնքների անդամներին, որոնց հետ կնքվել էր *սհդ ազ-զիմնա*:

Ձիյարա. արաբ.՝ այցելություն: Մարգարեների, իմամների, սուրբ շեյխերի գերեզմաններին այցելություն, ուխտագնացություն, որի ժամանակ հավատացյալներն աղոթում են, Ղուրանի սուրաներ են կարդում, նվիրատվություններ կատարում և ողորմություն բաժանում: Շիաներն այդպես են անվանում նաև տվյալ գերեզմանում հանգչող իմամին կամ շեյխին ուղղված գովաբանական տեքստը, որն ընթերցվում է այդ վայրում: Այն չի կարող պարունակել խնդրանք, այլ միայն ողջունի և գնահատման բառեր: Համարվում է, որ զիյարա կատարողները շնորհ են ստանում, իսկ մարգարեները, իմամները և սրբերը միջնորդ կդառնան նրանց համար *Ահեղ դատաստանի* օրը:

Ձինդիկ. սովորաբար թարգմանվում է որպես հերետիկոս, այդպես էին անվանում մուսուլմանները զրադաշտականներին և մանիքեականներին: 13-րդ դարից զինդիկ էին անվանում նաև բոլոր այն գիտնականներին և մտածողներին, որոնց գաղափարները, քննադատների տեսանկյունից, հեռացել էին իսլամի սկզբունքներից: Ձինդիկներին հետապնդում էին, շարիաթի դատարանով նրանց դատապարտում էին մահապատժի:

Ձիքր. Ալլահի ծիսական հիշատակում կամ գովաբանում: Կատարվում է բարձրաձայն կամ լուռ, ուղեկցվում է հատուկ ծիսական շարժումներով, պարերով, մարմնի ռիթմիկ տատանումներով: Կիրառվում է հատկապես *սուֆիականության* տարիկաթներում: Միտված է հավատացյալի անձնական կապը Ալլահի հետ հաստատելուն և հզորացնելուն, հաճախ բերում է նրան էքստատիկ վիճակի, որը կարող է ձայներ և տեսիլներ պարզնել նրան:

Ձուհդ. ասկետություն, *զահիդների* ապրելակերպ:

Թ

Թասազիա. արաբ.՝ ողբ, կական: *Տասներկուերորդականների*՝ 680 թ. Մուհարամ ամսվա 10-ին 3-րդ իմամ *Հուսեյնի* սպանությանը նվիրված կրոնական ներկայացում՝ միստերիա, որը տեղի է ունենում Մուհարամ ամսվա առաջին տասը օրերին: Սկսվում է հոգևորականի քարոզով, ապա շարունակվում է տղամարդկանց երթով, որի ժամանակ մասնակիցները բռունցքներով և քարերով հարվածում են իրենց կրծքին ներկաների գոռոցների, ողբի և լացի ուղեկցությամբ: Հուզական լարման բարձր աստիճանի հասած հավատացյալներին ներկայացվում է Քրեբելայում կատարված իմամի և նրա ընտանիքի անդամների և ուղեկիցների սպանության պատմությունը դերասանների կատարմամբ:

Թակիյա. 8-րդ դարում *Ձաֆար աւ-Սադիկի* կողմից օրինականացված թույլտվությունը շիաներին՝ թշմանական միջավայրում թաքցնել իրենց հավատը: Թակիյան մինչև օրս լայնորեն կիրառվում է իսլամի տարբեր ճյուղերին պատկանող հավատացյալների կողմից: Մուննիներից հանաֆիական մազհաբը թույլ է տալիս բարձր աստիճանի վտանգի պայմաններում դիմել թակիյայի: Չայդիականությունն այն արգելում է:

Թակլիդ. ավանդական կրոնական գիտելիք, սովորաբար հեղինակավոր կրոնաիրավական ոլորտի գիտնականների կողմից ձևակերպված *ֆիկհի* հարցերում: Հեղինակավոր *ֆակիհի* կարծիքին վստահություն ունենալը և այդ կարծիքով կամ եզրակացությամբ ղեկավարվելը՝ առանց ձգտելու սեփական եզրակացություն կամ կարծիք ունենալու:

Թանասուխ. հոգու վերաբնակեցում: Հավատն առ այն, որ հոգին մարդու մահից հետո շարունակում է իր կյանքը՝ տեղափոխվելով այլ մարմնի մեջ: Հատուկ է մի շարք սուֆիական տարիկաթների և շիայական ուղությունների: Այս եզրույթի մյուս իմաստն այն է, որ աստվածային ոգին տարբեր աստիճանների ներկայություն ունի ընտրյալների մարմիններում:

Թափանցելով նրանց մեջ՝ հաղորդում է տարբեր տեսակի գերբնական ունակություններ և գիտելիքներ: Այդպես է բացատրվում, օրինակ, *Իմամների* վալիական էությունը:

Թաուհիդ. արաբ.՝ միաստվածություն: Իսլամի հիմնական սկզբունքն ու առանցքային գաղափարը: Մուհամմադ մարգարեի քարոզը ուղղված էր Մեքքայի կռապաշտ բազմաստվածականներին, ուստի հասկանալի է, որ նրա քարոզում, հատկապես մեքքայական շրջանում, միաստվածության գաղափարը առանձնահուկ կերպով շեշտվում է: Ալլահն է ամեն ինչի պատճառը և աղբյուրը, հավիտենական է, և ինքն է արարել մարդուն, տիեզերքը, բուսական և կենդանական աշխարհները, «սովորեցրել է մարդուն այն, ինչը նա չգիտեր» (Ղուրան, 96:5): Ալլահը «չի ծնվել և չի ծնել» (Ղուրան, 112:3):

Թասավուֆ. տե՛ս Մուֆիականություն:

Թավիլ. արաբ.՝ վերադարձ ակունքին: Ղուրանի ռացիոնալիստական կամ այլաբանական մեկնաբանություն, որը հակադրվում էր *թաֆսիիրին*: Հիմնավորվել է թավիլի կիրառումը մութագիլիականների կողմից, որոնք համարում էին, որ Ղուրանում կան պարզ և աղոտ իմաստներով *այաթներ*: Աղոտ իմաստներով այաթների համար անհրաժեշտ է կիրառել թավիլ, որի օգնությամբ հնարավոր է բացատրել դրանք: Թավիլը չէր ընդունվում զահիրիականների կողմից:

Ի

Իբադիականություն. *Խարիջիականության* չորս հիմնական ճյուղերից ամենաչափավորը: Աբդալլահ իբն Իբադի (7-րդ դարի երկրորդ կես) հետևորդներն են, այստեղից էլ՝ նրանց անվանումը: Ի տարբերություն խարիջիական մյուս ուղղությունների՝ ընդունում էին առաջին երկու խալիֆաներին: Համարում էին, որ *իմամին* և *խալիֆին* պետք է ընտրել: Հնարավոր էին համարում միաժամանակ մի քանի խալիֆաների առկայությունը տարբեր իրարից հեռու գտնվող իբադիական համայնքներում: Խալիֆին, որը չէր համապատասխանում իր բարձր կոչմանը, կարող էր իշխանությունից զրկել շեյխերի խորհուրդը: 9-րդ դարից սկսած՝ իբադիականության վրա մեծ ազդեցություն են ունեցել մութագիլիական ռացիոնալիստական մոտեցումները: Իբադիական քարոզչությունը հաջողությամբ պսակվեց խալիֆայության տարբեր շրջաններում: 8-րդ դարի 40-ական թվականներին իբադիականները ապստամբություն բարձրացրին կենտրոնական և հարավային Արաբիայում, նույնիսկ կարողացան ժամանակավորապես իրենց հսկողության տակ վերցնել Մեքքան և Մադինան: Ներկայումս իբադիականները կազմում են Օմանի բնակչության կեսից ավելին: Այս երկրի սուլթանների ընտանիքը նույնպես պատկանում է իբադիական ուղղությանը:

Իբլիս. Ղուրանում այն հրեշտակի անունն է, որը չենթարկվեց Ալլահի հրամանին խոնարհվել *Ադամի* առջև՝ հիմնավորելով, որ Ալլահն իրեն ստեղծել է կրակից, իսկ Ադամին՝ կավից: Ալլահը որոշեց նրան դժոխք ուղարկել՝ դատապարտելով հավիտենական տանջանքների, սակայն Իբլիսը խնդրեց հետաձգել իր պատիժը մինչև Ահեդ դատաստան՝ խոստանալով վնասել Ալլահին իր բոլոր գործերում: Իբլիսը գայթակղեց Ադամին, նա է Սաբայի թագուհու և մի շարք ժողովուրդների և ցեղերի անհավատ մնալու և Ալլահի մարգարեների բերած գիտելիքներից հրաժարվելու պատճառը: Նա խանգարում է մարդկանց աղոթելու, *զաքաթի* միջոցներն է գողանում, անընդհատ գայթակղությունների է ենթարկում նրանց, անհավատության և զինդիկության պատճառն է: Իբլիսը Ալլահի գործիքն է մարդկանց հավատի և հնազանդության ամրության ստուգման համար: Իբլիսը ապրում է երկրի վրա և ղեկավարում է բոլոր չար ուժերը:

Իդ ալ-ադհա նաև՝ *Կուրբան բայրաւ*. մուսուլմանական տոն, որով ավարտվում է *հաջր*: Այդ օրը Մինա հովտում, ի հիշատակ Իբրահիմի (աստվածաշնչյան Աբրահամի) զոհաբերության, մուսուլման հավատացյալները մատաղ են մատուցում:

Իդ ալ-ֆիտր. մուսուլմանական տոն, որը հետևում է ռամադան ամսվա *սաումի* ավարտին:

Իլմ. արաբ.՝ գիտելիք: Կրոնական համակարգում նշանակում է «աստվածային գիտելիք», որն Ալլահը Մուհամմադ մարգարեի միջոցով շնորհել է մարդկությանը: Այն իլմը, որը տրվել է մարդուն, պարունակվում է Ղուրանում, սակայն ամբողջական իլմը միայն Ալլահին է հայտնի: Աստվածային իլմի երեք հիմնական ճանապարհ է ձևավորվել իսլամում. ավանդական, որի սկզբունքներն են *թակլիդը*, *զահիրիականությունը* և *շարիաթի* օրենքների աներկբա կատարումը, *մութազիլիական*, որը հնարավոր էր համարում Ալլահի իլմի ռացիոնալիստական ըմբռնումն ու բացատրությունը, և *սուֆիական*, որը համարում էր, որ Ալլահի իլմը հնարավոր է միայն նրա հետ միասնական կապ և միաձուլում ձեռք բերելով:

Իխուան ալ-մուսլիմին. արաբ.՝ «Մուսուլման եղբայրներ»: 1927 թ. Եգիպտոսի Իսմաիլիա քաղաքում ստեղծված արմատական սուննիական կազմակերպություն: Հիմնադիրը *Հասան ալ-Բաննան էր*: Հիմնական գաղափարն այն էր, որ իսլամում, դեռևս մարգարեի ժամանակաշրջանից սկսած, եղել է այն ամենը, ինչը քարոզվում է արևմտյան գաղութարարների կողմից որպես առաջընթացի ճանապարհ. հավասարություն, ազատություն, եղբայրություն, ընտրություններ, օրենքների համակարգ, դատական իշխանություն, որը ենթակա չէ գործադիրին և այլն: Ամենակարևորն այն է, որ այդ ամենը *ուսմային* տրվել է Ալլահի կողմից իր մարգարեի միջոցով, այսինքն՝ անհերքելի աստվածային *իլմն* է: Ուստի առաջնային խնդիր է ազատվել գաղութարարներից և վերականգնել ուսմայի միասնականությունը: Հասան ալ-Բաննան այդ նպատակներին ձգտում էր հասնելու գաղութարարների դեմ պայքարի միջոցով, ինչպես նաև քարոզչությամբ, սոցիալական, կրթական ծրագրերի իրականացմամբ, որոնք պետք է ի ցույց դնեին «Մուսուլմանական եղբայրներ» հզորությունը և ուսմայի միասնականության նշանակությունը: Նշված ծրագրերն ուղղված էին Եգիպտոսի չքավորների վիճակը թեթևացնելուն, նրանց երեխաների համար կրթություն, իսկ ընտանիքների անդամների համար՝ բժշկական օգնություն, սնունդ և այլ անհրաժեշտ բաներ ապահովելուն: Սկզբնական շրջանում կազմակերպությունը ահաբեկչություն չէր կիրառում: Մակայն հետագայում՝ հատկապես Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, «Մուսուլման եղբայրները» ահաբեկչությունը որդեգրում են որպես պայքարի ամենաազդեցիկ և գործուն միջոց: Հարկ է նշել, որ նրանք համագործակցում էին «Ազատ սպաների» հետ հեղափոխության սկզբնական շրջանում, սակայն հաղթանակից հետո սկսեցին գործել իրենց նախկին դաշնակիցների դեմ: Այդ շրջանում հիմնական գաղափարախոսն է դառնում *Մայիդ Կուրբը* (1906-1966), որը հայտարարեց, որ ուսմայի վերականգնման համար անհրաժեշտ է ազատվել *քաֆիր* իշխանավորներից, մուսուլմանական երկրներում հաստատել իսլամական կառավարում, այդ նպատակին հասնելու համար պետք է ազատվել քաֆիրներից և նորից *զահիրիայից հիջրա* կատարել դեպի իսլամ: Կազմակերպությունը ահաբեկչական բազմաթիվ գործողություններ իրականացրեց: Իշխանությունները հետապնդումների էին ենթարկվում կազմակերպության անդամներին և դաժան հաշվեհարդար տեսնում ահաբեկիչների նկատմամբ: Մայիդ Կուրբի մահապատժի իրականացումից և 1960-ին կազմակերպության բազմաթիվ ստորաբաժանումների կործանումից հետո կազմակերպության բազմաթիվ անդամներ լքեցին երկիրը, շարունակեցին իրենց գործունեությունը նոր բնակության վայրերում, ինչի հետևանքով «Մուսուլման եղբայրները» վերածվեցին համաշխարհային ցանցային համակարգի, որը մեծ ազդեցություն ունի աշխարհի բոլոր տարածաշրջաններում: «Մուսուլման եղբայրները» ակտիվորեն մասնակցեցին աֆղանական պատերազմին: Նրանց ցանցին պատկանող կազմակերպությունները և

անհատները տարբեր գործառույթներ ունեն՝ ահաբեկչական, քարոզչական, նյութատեխնիկական բազայի ապահովման և այլն: «Մուսուլման եղբայրներն» իրենց լուրջ դերակատարությունն ունեցան նաև այսպես կոչված «արաբական գարնան» իրադարձություններին, նույնիսկ կարողացան իշխանության գալ Եգիպտոսում, սակայն գեներալ ա-Միսիի իշխանությունն իր ձեռքը վերցնելուց հետո նրանց գործունեությունն այս երկրում արգելվեց: Թուրքիայի տարածքից տարբեր անուններ կրող «Մուսուլման եղբայրների» ցանցին պատկանող զինված կազմավորումները շարունակում են ապակայունացնել այս երկիրը:

Իխուան. արաբ.՝ եղբայրներ: Մուֆիական *տարիկաթներից* շատերում այսպես են իրար անվանում միաբանությունների անդամները: Այդպես են իրար անվանում նաև քաղաքական և կրոնական կազմակերպությունների տարբեր անդամները:

Իխվան ա-սաֆա. արաբ.՝ «Մաքրության եղբայրներ»: 10-րդ դարի վերջին քառորդին Բասրայում, Բաղդադում, Սալամիայում գործող *խամայիլականությանը* հարող գիտնականների խումբ, որը ստեղծեց առաջին միջնադարյան հանրագիտարանը՝ 52 հատորանոց «Մուսուլման եղբայրների ուղերձներ» աշխատությունը, որը համալիր կերպով ներկայացնում էր այդ ժամանակաշրջանի ամբողջական գիտելիքի իսլամայիլական մեկնաբանությունը:

Իմամ. արաբ.՝ առջևը կանգնած, առջևից ընթացող: Իսլամի պատմության վաղ շրջանում այդպես էր կոչվում հավատացյալների միասնական աղոթքի կազմակերպիչը և կանոնակարգողը: Շիայականության մեջ այս եզրույթը ստանում է նոր, չափազանց կարևոր իմաստ՝ ումմայի առաջնորդ, որը պատկանում է «*սեիլ ալ-Բայթին*», սերում է Ալիից և Ֆատիմայից, ուստի Ալլահի *վալիին* է: Նա գիտի Ղուրանի *այաթների* ներքին իմաստները, նրան հաղորդվել են կրոնի և հավատի գաղտնիքները: Ալլահի ներշնչանքով գործելը իմամին դարձնում է անսխալական:

Իմամականներ. տե՛ս *Տասներկուերորդականներ.*

Իման. արաբ.՝ հավատ: Ղուրանում 40-ից ավելի անգամ է հանդիպում: Հավատը հիմնվում է *արքան ալ-իմանի* (հավատի հիմքեր) վրա: Մուսուլմանական կրոնաիրավական ոլորտի գիտնականները տարբերակում են երեք տեսակի հավատ. ավանդությունից բխող, գիտելիքից բխող, ներքին համոզումից բխող: Միջնադարում «իման» եզրը իր մեկնաբանություններն է ստացել իսլամի բոլոր ուղղություններում, դարձել է բազմաթիվ վիճաբանությունների առարկա:

Իջթիհադ. իրավունք, որը տրվում է լիազորված *ֆակիհին*՝ ինքնուրույն որոշումներ ընդունելու կրոնաիրավական ոլորտին վերաբերող հարցերում՝ հիմնվելով Ղուրանի, սուննայի, ինչպես նաև ղեկավարվելով *ֆիկհի* հիմնական մեթոդներով: Իջթիհադի իրավունք ունեցող ֆակիհին անվանում են *մուջթահիդ*: Հիմնական մագհաբների ձևավորումից հետո սուննիական իսլամում ընդունվեց այն մոտեցումը, որ այսուհետ իջթիհադը անսպասակ է, ուստի 10-րդ դարում հայտարարվեց, որ «իջթիհադի դռները փակվել են»: Շիայական իսլամում իջթիհադը շարունակում են կիրառել:

Իսլամական բանկ. այդպես են կոչվում այն բանկերը, որոնք գործում են համաձայն շարիաթի նորմերի: Ղուրանում և հադիսներում հստակ ցուցումներ կան, որ քանի որ փողը ապրանք չէ, ապա այն չի կարելի վաճառել, ուստի պարտքի դիմաց տոկոս վերցնելը (վաշխառությունը) արգելված է: Իսլամական բանկերի գործունեությունը կարելի է բնութագրել որպես ծրագրային ներդրումային գործունեություն, երբ բանկը ներդրումային ծրագրի օգտակարությունը, իրատեսականությունը և համապատասխանությունն է շարիաթի նորմերին (օրինակ՝ չի կարելի այդ ծրագրերը կապել հարամ, այսինքն՝ արգելված ապրանքների հետ)

գնահատողի և այդ ծրագրի համար միջոցներ ձևավորողի, ինչպես նաև եկամուտներ բաշխողի դերում: Այդպիսով բանկը ոչ թե տոկոս է վերցնում իր տրամադրած միջոցների դիմաց, այլդառնում է այդ ծրագրի իրականացման գործընկեր (ըստ մուսուլմանական գիտնականների): Իսլամական բանկերը նաև մերժում են բոլոր տեսակի ֆյուչերսային գործարքները, քանի որ միայն Ալլահն է ժամանակի տերը, ուստի չի կարելի գնել կամ վաճառել դեռ չաճեցրած բերքը, դա Ալլահի կամքին հակառակ է: Իսլամական բանկերի միասնական կապիտալը գնահատվում է մոտավորապես 1-1,5 % ընդհանուր համաշխարհային բանկային կապիտալից:

Իսլամական պետություն. նման հասկացություն միջնադարում գոյություն չի ունեցել: Այն ստեղծվել է 19-րդ դարում և բնութագրում է շարիաթի նորմերով կառավարվող պետությունները: 1979 թ. Իսլամական հեղափոխության արդյունքում ստեղծվեց Իրանի Իսլամական Հանրապետությունը, որը համապատասխանում է տասներկուերորդականների կրոնաիրավական համակարգում ձևավորված նորմերին: Սուննիական բնակչության մեծամասնությամբ Սաուդյան Արաբիան, Պակիստանը և մի քանի այլ պետություններ նույնպես համարվում են իսլամական պետություններ: Առավել արդիական է այն դարձել 21-րդ դարի սկզբից, երբ փորձեր կատարվեցին այդպիսի պետություն ստեղծել Աֆղանստանի, Եգիպտոսի, Սիրիայի և Իրաքի տարածքներում:

Իսլամականացում. այս եզրույթը բնութագրում է կրոնագաղափարական և քաղաքական այն ուղղությունները և շարժումները, որոնց նպատակն է ումմայի միավորումը, շարիաթի կանոններին համապատասխանող իսլամական կառավարմամբ և օրենքներով համակարգի կամ համակարգերի ստեղծումը:

Իսնաաշարիներ (տե՛ս **Տասներկուերորդականներ**):

Իսնաաշ. արաբ.՝ հիմք: *Հադիսները* և *խաբարները* հաղորդողների շղթաներ, որոնցով վավերացվում էր հաղորդվող տեղեկությունների ճշմարտացի լինելը: Իսլամի պատմության առաջին դարերում հաճախ էին հանդիպում կեղծ հադիսներ ստեղծելու փորձեր, քանի որ նոր կրոնաիրավական նորմերի հաստատման կարիք կար: Ուստի ստեղծվում է իսնադները ուսումնասիրող հատուկ գիտություն, որը հադիսագիտության ճյուղերից մեկն էր: Այս գիտությունը, ուսումնասիրելով հարյուրհազարավոր հադիսների իսնադների շղթաների յուրաքանչյուր օղակ, ըստ վերջիններիս որակի, դասակարգում է հադիսները՝ բաժանելով դրանք մի շարք խմբերի՝ ամենաարժանահավատներից մինչև «թույլ»:

Իֆտար. սաունի ժամանակ արևամուտից հետո սննդի ընդունումը, ամենօրյա պահքից դուրս գալը: Մուհամմադ մարգարեն ասում էր, որ իֆտարը պետք է սկսել արմավենու պտուղով, իսկ եթե չունեն, ապա ջրով, որովհետև «ջուրը մաքրում է»:

Իֆրիտ. դժոխքում ապրող Իբլիսին ենթարկվող *ջիններ*, որոնք առանձնանում են իրենց ուժով:

Լ

Լա Իլլահ իլլա-լ-լահ վա Մուհամմադու ռասուլ Ալլահ. արաբ.՝ «Չկա աստվածություն բացի Ալլահից, և Մուհամմադն է Ալլահի մարգարեն»: Այս ձևակերպումը կոչվում է *շահադա:*

Լեյլաթ ալ-Գադար. արաբ.՝ հզորության գիշեր, փոխաբերական իմաստը՝ նախախնամության գիշեր: Հիշատակվում է Ղուրանում և սուննայում: Մուսուլմանները հավատում են, որ այդ գիշեր է Մուհամմադ մարգարեին Ալլահը *Ջիբրիլ հրեշտակապետի* միջոցով արժանացրել առաջին հայտնության և շնորհել Ղուրանի առաջին հինգ *այաթները*: Մարգարեն ասել է, որ այդ գիշերվա աղոթքը հատուկ ուժ ունի:

Խ

Խաբար. արար.՝ լուր, տեղեկություն: Նախախլամական և վաղխլամական շրջանում այսպես էին անվանվում պատումները, որոնց մեջ պարունակվում էր նախնյաց փորձը: Խաբարներում պարունակվող տեղեկությունների իսկությունը հաստատելու համար նրանք հաղորդվում էին *խնադով* (հաղորդողների շղթա): Բանավոր տեղեկության հաղորդման համակարգի, գիտելիքի հավաքման, պահպանման և հաղորդման միակ միջոցը: Տասներկուերորդականները խաբար էին անվանում Մուհամմադի հաղիսները և *խմամների* ու «աիլ ալ-բայթի» մասին պատմող բանավոր պատումները

Խատիբ. քարոզիչ, հիմնականում՝ ուրբաթօրյա աղոթքի ժամանակ քարոզով հանդես եկող մուլլա/իմամ:

Խալիֆ (տարբերակ՝ խալիֆա). արար.՝ հետևորդ, փոխարինող: 632 թ. Մուհամմադ մարգարեի մահից հետո *ումմայի* ղեկավար ընտրվեց Աբու Բաքրը, որը սուննիների տեսակետից առաջինն էր «առաքինի խալիֆներից»: Շիաների տեսակետից Աբու Բաքրի ընտրությունը օրինական չէր, ուստի նրանք չեն ճանաչում խալիֆներից ոչ մեկին:

Խալիֆայություն. այդպես անվանվեց ումմայի հիմքի վրա ստեղծված արաբական պետությունը, որը ձևավորվեց 7-8-րդ դարերի նվաճողական պատերազմների արդյունքում: Ներկայիս արմատական սուննիական կազմակերպությունների և խմբավորումների պատկերացումներով իսլամի հաղթարշավի և մուսուլմանական հզորության խորհրդանիշ է և նպատակ: 21-րդ դարի սկզբին ձևավորվեցին ծայրահեղական սուննիական ուժեր, որոնք, ձգտելով հասնելու խալիֆայության վերականգնման նպատակին, բռնի ուժով իրենց վերահսկողության տակ վերցրին տարածքներ Իրաքում և Սիրիայում, որտեղ հռչակեցին իսլամական խալիֆայության ստեղծման մասին:

Խարաջ. հողահարկ, որը վճարում էին *զիմմիները* հողագործության համար պիտանի մշակելի հողակտորներից: Վճարվում էր կա՛մ մշակվող հողից, կա՛մ բերքից:

Խուլա. սուննիների կրոնաիրավական համակարգում պատերազմի ընթացքում ձեռք բերված ավարի (բացի հողից) կամ այլ գործողությունների արդյունքում (օրինական, պատահականորեն հայտնաբերված գանձ) ստացված միջոցների (թանկագին մետաղներ, դրամական միջոցներ, զենք, զրահ, անասունների հոտեր և այլն) 1/5 մասը, որը, ըստ Ղուրանի, «պատկանում է Ալլահին, նրա մարգարեին, ձեր կարիքավոր ազգականներին, որբերին, աղքատներին, ճամփորդներին (Ղուրան, 8:41): Շիաների մոտ պարտադիր վճարվող պետական հարկ:

Խուտբա. քարոզ, հիմնականում՝ ուրբաթօրյա ընդհանուր աղոթքի քարոզ: Շատ հաճախ խուտբան օգտագործվում է հավատացյալներին գործողությունների դրդելու, նրանց որևէ կերպ ուղղորդելու համար: Կարևոր նշանակություն ունի հատկապես արմատականների քարոզչական զինանոցում:

Կ

Կադարիականություն. արար.՝ «կադար-նախախնամություն» բառից: Մարդու կամքի ազատության տեսության կողմնակիցներ, նախախնամության ազդեցությունը սահմանափակողներ:

Կադի, պարսկերեն տարբերակը՝ քադի. շարիաթի դատարանի դատավոր:

Կաղիբիականություն. սուֆիական տարիկաթ, որը հիմնել է Իրաքում Աբդ ա-Կադիր ալ-Ջիլանին: 12 հիմնական սուֆիական տարիկաթներից մեկն է: Ամենատարածված տարիկաթներից է: Մերժում է ասկետիզմը, պահպանում է շարիաթը, արգելում է առօրեական կյանքից և հասարակությունից հրաժարվելը: Խորհրդանիշն է կանաչ վարդը՝ երեք շարք ծաղկաթերթերով. 5 ծաղկաթերթով շարքը կրոնի հիմքերի խորհրանիշն է, 6 ծաղկաթերթով՝ հավատի հիմքերի, 7 ծաղկաթերթով՝ կաղիբիական տարիկաթի զիքրի բառերի քանակի: Տարիկաթի հիմնադրի դամբարանը Բաղդադում է և համարվում է սրբավայր: Չիքրը կատարվում է բարձրաձայն, այդ պատճառով Հյուսիսային Կովկասում կաղիբիականներին անվանում են նաև «զիքրիականներ»:

Կարմատներ. իսմայիլականությունից առանձնացած շարժում, որը 899 թ. հրաժարվեց Ֆատիմյան խալիֆայության հիմնադիր Ուբայդալլահին իմամ ճանաչելուց և հռչակեց, որ իրենք պատրաստվելու են իսկական իմամի գալստյանը: Շարժման ղեկավարն էր Համդան Կարմատը (կարմրաչյա, հավանաբար՝ ալբինոս լինելու պատճառով): Կարմատների զինված ապստամբությունը, որի հիմնական շարժիչ ուժը կազմում էին ծանր սոցիալական վիճակում հայտնված գյուղացիները և արհեստավորները, 9-րդ դարի վերջին և 10-րդ դարի սկզբին ցնցեց Աբբասյան խալիֆայությունը: 899 թ. Բահրեյնում կարմատները հիմնեցին իրենց խալիֆայությունը, որտեղից բազմիցս ասպատակային արշավանքներով հարձակվում էին Իրաք և Արաբական թերակղզի: 930 թ. նրանք գրավեցին Մեքքան և այնտեղից տարան հիմնական սրբությունը՝ «սև քարը»: Երկու տասնյակ տարի հետո Աբբասյանները, մեծ փրկագին վճարելով, կարողացան այն հետ բերել: Կարմատներն իրենց խալիֆայությունում փորձեցին ստրուկների աշխատանքի հիման վրա կառուցված «բարգավաճման» համայնք ստեղծել: Այս փորձը բնականաբար չհաջողվեց, և կարմատական պետությունը 11-րդ դարում դադարեց գոյություն ունենալուց, իսկ շարժումը աստիճանաբար փոշիացավ:

Կիբլա. աղոթքի ուղղություն. հավատացյալներն աղոթքի ժամանակ դեմքով պետք է կանգնած լինեն այդ ուղղությամբ: Սկզբնական շրջանում՝ դեպի Երուսաղեմ, հիջրայի երկրորդ տարվանից՝ դեպի Մեքքա: Գերեզմանում մահացած հավատացյալի գլուխը նույնպես Մեքքայի ուղղությամբ է տեղադրվում:

Կիյամա. մեռելների հարություն: Հավատն առ այն, որ այդ օրը բոլոր մեռելները հարություն են առնելու, իսլամի հավատի 6 հիմքերից մեկն է:

Կիյաս. արաբ.՝ չափում: Կիյասը մուսուլմանական կրոնաիրավական համակարգի (*ֆիկհ*) մեթոդներից մեկն է, որը կիրառվում է այն դեպքերում, երբ Ղուրանում և սուննայում բացակայում է առաջացած հարցի կամ խնդրի պատասխանը: Հիմնվելով այդ երկու հիմնական աղբյուրների վրա և «չափելով», այսինքն՝ համանմանություն (անալոգիա) գտնելով այստեղ ներկայացված դեպքերի հետ, կիյասի այդ հիմքով լուծում է առաջարկում:

Կուլ. Իրանի Կում նահանգի կենտրոնը: Գտնվում է Թեհրանից 150 կմ հարավ: Շիայական սուրբ քաղաք, 16-րդ դարում Իրանում Մեֆյանների հաստատումից հետո վերածվում է շիայական ամենակարևոր կրոնական, գիտական և ուսումնական կենտրոնի: Կումում կան բազմաթիվ մեղրեսեններ, որտեղ սովորում են իրանցի և արտասահմանցի բազմաթիվ ուսանողներ: Այստեղ է տեղադրված նաև իմամ Մուսայի դուստր Ֆատիմայի դամբարանը, որը կարևոր ուխտագնացության վայր է *տասներկուերորդականների* համար: Այաթոլլահ Մարաշին հիմնել է իր անվամբ կոչված գրադարան, որը եզակի նշանակություն ունեցող բազմաթիվ ձեռագրերի և հսկայական քանակությամբ գրքերի հավաքածու ունի: Կումում են բնակվում և աշխատում բազմաթիվ հոգևորականներ, այդ թվում՝ Մեծ այաթոլլահներ (Այաթոլլահ Ուզմա):

Կուրքան քայրամ. տե՛ս Բդ ալ-արհա:

Հ

Հաղիս. արաբ.՝ նոր տեղեկություն, պատմություն, կարելի է մեկնաբանել նաև որպես նոր փորձ: Հաղիսներից է կազմվում Մուհամմադ մարգարեի *սուննան*: Մուհամմադ մարգարեի գործերի, արարքների, խոսքերի, նաև լռության վավերագրումներ ծավալով փոքր պատումներում, որոնց իրական և ճշմարիտ լինելը հավաստվում է *խսնաղի* (հաղորդողների շղթա) միջոցով: Համաձայն հաղիսներից մեկի՝ Մուհամմադ մարգարեն արգելել է գրի առնել հաղիսները պատճառաբանելով, որ ինքը մահկանացու է, հարկավոր է պահպանել միայն Ալլահի խոսքը, այսինքն՝ Ղուրանը: Սակայն հաղիսների մեջ պարունակվող նյութի կենսական նշանակությունը իսլամի կրոնաիրավական համակարգի ձևավորման համար, ինչպես նաև այն ադապտացիոն հնարավորությունները, որոնք տրվում էին հաղիսների կիրառման շնորհիվ, ստիպում են խալիֆ Օմար 2-ին (717-720) օրինականացնել հաղիսները գրի առնելու գործընթացը, ինչպես նաև վերջիններիս կիրառումը որպես *ֆիկհի* երկրորդ կարևորագույն աղբյուր: Բազմաթիվ կեղծարարներ հորինել են հաղիսներ, ինչն անհրաժեշտ է դարձրել խիստ հիմքերի վրա դրված և լավ մշակված հաղիսագիտական առարկաների համալիրի ստեղծումը:

Հալալ. արաբ.՝ թույլատրված: Ղուրանում կիրառվում է որպես հակադրություն հարամին (արգելված): Այս երկու ծայրահեղ ձևակերպումներն ավելի մանրամասն են մեկնաբանվում ֆիկհում, որը հինգ տեսակի մոտեցում է առաջարկում՝ թույլատրված, օգտագործելի, չեզոք, պախարակվող և արգելված: Տարբեր մագհաբներ համաձայնության չեն եկել այն հարցի վերաբերյալ, թե արդյոք «հալալի» մեջ մտնում են առաջին չորս տեսակները (որոնց վերաբերյալ չկա հստակ արգելք), թե միայն երկուսը: Հասկացությունը հիմնականում վերաբերում է արգելված մի շարք սննդի տեսակների, ինչպես նաև ֆինանսական և տնտեսական ոլորտին:

Հանաֆիականություն. սուննիական չորս *մագհաբներից* մեկը, որի անվանումն առաջացել է իր հիմնադրի՝ Աբու Հանիֆայի (մահ. 767) անունից: Ձևավորվելով Իրաքում՝ այս մագհաբը հետագայում լայն տարածում ստացավ սուննիների մեջ: Օսմանյան կայսրությունում ընդունվեց որպես պետական մագհաբ, ինչը չէր նշանակում, որ մյուս երեք մագհաբներն արգելվում են, կամ այդ ուղղություններին պատկանող գիտնականները հետապնդվում են, սակայն նրանք պարտադրված էին իրենց *ֆեթվաներն* արձակել համաձայն հանաֆիական կրոնաիրավական դպրոցի կանոնների: Աբու Հանիֆան առաջինն էր ֆակիհներից, որ սկիզբ դրեց մուսուլմանական գիտության գրավոր գրառման ավանդույթին: Նա և նրա գործը շարունակող աշակերտները մշակեցին *կիյասի* և *իսթիհսանի* կիրառման մեթոդները, ինչպես նաև հիմնավորեցին սովորույթային իրավունքի (*ուրֆ*) ընդգրկումը ֆիկհի մեջ: Ներկայումս սուննիների մեծամասնությունը պատկանում է այս մագհաբին:

Հանբալիականություն. սուննիական չորս մագհաբներից մեկը, որի անվանումը առաջացել է իր հիմնադրի՝ Ահմադ իբն Հանբալի (780-855) անունից: Ահմադ իբն Հանբալի՝ որպես մուսուլմանական կրոնաիրավական ոլորտի մասնագետի ձևավորման շրջանը համընկնում է խալիֆայությունում ռացիոնալիստական *մութազիլիականության* ազդեցության աճի և 9-րդ դարի առաջին քառորդում միակ թույլատրված ուղղություն լինելու հետ: Իբն Հանբալը, չընդունելով մութազիլիական մոտեցումները մարդու կամքի ազատության, Ղուրանի արարված լինելու և մի շարք այլ հարցերի վերաբերյալ, ենթարկվեց ճնշումների և հետապնդումների: Հետագայում, երբ մութազիլիականությունը մերժվեց նոր իշխանությունների կողմից, Իբն Հանբալը դարձավ շատ ազդեցիկ հեղինակություն, ինչը նրան թույլ տվեց իր աշակերտների և կողմնակիցների հետ միասին ձևակերպել նոր մագհաբի դրույթները: Հանբալիականությունը արգելում է ֆիկհում տեղ գտած *բիդան* (վնասաբեր նորամուծություն)՝ նկատի ունենալով այն

նորամուծությունները, որոնք հստակ չեն հիմնավորվում Ղուրանի այաթներով և սուննայով: Նրա հիմնական նպատակն էր օրենքների ճիշտ կիրառման միջոցով ապահովել վերադարձը «առաքինի նախնիների» (աս-սալաֆ աս-սալիհին) կարգերին: Օրինակ՝ նա կողմնակից էր խալիֆի նշանակմանը Բանու կուրայջ ցեղի անդամներից ընտրության միջոցով: Ֆիկհում սահմանափակվում էր *կիյասի* կիրառումը, և մերժվում *ռայր*: Հանրալիականության հենքի վրա 18-րդ դարում ձևավորվեց *վահաբականությունը*:

Հանիֆ. նախախլամական շրջանի միակ Աստծուն հավատացող մարդիկ, որոնք չէին պատկանում որևէ կրոնական համայնքի: Համարվում էր, որ հանիֆները դավանում են Իբրահիմի հիմնած կրոնը:

Հաջ. արաբ.՝ ուխտագնացություն: Ամեն տարի տեղի ունեցող ուխտագնացություն դեպի Մեքքայում գտնվող հիմնական մուսուլմանական սրբավայր՝ Քաաբա: Այն տեղի է ունենում Ջուլ-հիջջա ամսին, և յուրաքանչյուր առողջ և նյութապես ապահովված հավատացյալ պարտավոր է կյանքում առնվազն մեկ անգամ հաջ կատարել: Այլ ամիսներին նույնպես կարելի է մեկնել Մեքքա՝ Քաաբայի շուրջը անհրաժեշտ ծեսերը կատարելու, սակայն դա չի համարվում հաջ, այլ կոչվում է ումրա՝ փոքր ուխտագնացություն:

Հասան իբն Ալի (624-669). շիայականության 2-րդ իմամ: Մուհամմադ մարգարեի ավագ թոռը, Ալի իբն Աբի Տալիբի և Ֆատիմայի ավագ որդին: Հոր սպանությունից հետո (661) Իրաքում հռչակվեց խալիֆ և մոտ վեց ամիս կրեց այս պատվավոր կոչումը, սակայն Սիրիայի կառավարիչ Մուավիայի հետ բանակցությունների արդյունքում համաձայնեց ընդունել վերջինիս որպես խալիֆ, սակայն ստանձնել այդ բարձրագույն պաշտոնը նրա մահից հետո: Մուավիան պարտավորվել էր հսկայական փոխհատուցում վճարել իրեն և իր կրտսեր եղբորը՝ Հուսեյնին: Շիա և սուննի հեղինակները միաձայն պնդում են, որ Հասանը համաձայնեց այս պայմանագրին՝ ձգտելով թույլ չտալու արյունահեղություն, չնայած որ նրա եղբայր Հուսեյնը և բազմաթիվ այլ կողմնակիցներ դեմ էին դրան: Հասանը տեղափոխվեց Մադինա, որտեղ էլ մահացավ: Շիայական վարկածով նրան թունավորել էր իր կինը Մուավիայի դրոմամբ: Հասան իբն Ալիի մականուններից մեկը Միտլակ է (հաճախ ապահարգան տվող), մեծ քանակությամբ կանայք է ունեցել, որոնցից ծնվել են բազմաթիվ զավակներ:

Հասան իբն աս-Սաբահ (1050-1123). *ասասիներ*ի պետության հիմնադիրը: Հայտնի է նաև Շեյխ ալ-Ջաբալ (Լեռան ծերունի) անունով: Ծնվել է Կում քաղաքում, իսմայիլական դաիներից մեկից ընդունել է այս կրոնը, այնուհետև, որպես տաղանդավոր և հույսեր ներշնչող երիտասարդ, ուղարկվել է Ֆատիմյան խալիֆայություն՝ կրթություն ստանալու նպատակով: Վերադառնալուց հետո գլխավորել է տեղի իսմայիլականներին Սելջուկյանների դեմ նրանց պայքարում: Գաղտնի քարոզչական հաջող ծավալմանը զուգահեռ իրար հետևից գրավել է սարերի գլխին գտնվող մի քանի ամրոցներ, որոնցից առաջինը և գլխավորը Ալամութն էր, և այս ամրոցների շուրջը կառուցել իր պետությունը նիզարիական սկզբունքների հիման վրա: Ստեղծել և հմտորեն կիրառել է քաղաքական ահաբեկչության համակարգ: Ասասիների ձեռքով սպանվել են բազմաթիվ թագավորներ, սուլթաններ, վազիրներ, դուքսեր և երևելի վտանգ ներկայացնող այլ անձնավորություններ: Ահաբեկչության հետևանքով հաստատված սարսափի մթնոլորտը թույլ է տվել Հասան իբն աս-Սաբահին տարածել իր ազդեցությունը և նոր կողմնակիցներ ձեռք բերել: Նկարագրվում է որպես ասկետական կյանք վարող անձնավորություն, շատ զուսպ և հաստատակամ: Համաձայն առասպելական պատմության՝ Ռեյ քաղաքի մեղրեսեում նա ընկերացել է ապագա հռչակավոր սելջուկյան վազիր Նիզամ ալ-Մուլքի հետ, որը հետագայում սպանվեց նրա հրամանով, և հանձարեղ բանաստեղծ և գիտնական Օմար Խայամի հետ: Նրա

ստեղծած քաղաքական տեռորի համակարգը հետագայում լայնորեն օգտագործվեց բազմաթիվ ծայրահեղական ուղղությունների և խմբերի կողմից:

Հարամ. արաբ.՝ արգելված: Իսլամում արգելված գործողություններ, նախևառաջ այն գործողությունները, որոնք արգելվում են Ղուրանում: Դրանցից են բազմաստվածությունը, շնությունը, գողությունը, կեղծ վկայությունը, արգելված սնունդ ուտելը, ալկոհոլային խմիչքներ օգտագործելը, մոլի խաղեր խաղալը, պարը, երաժշտությունը և այլն: Հարամ անվանվել են նաև այն տարածքները, որտեղ արգելված է զենք կրել, ինչպես նաև այն ամիսները, երբ կատարվել են ուխտագնացություններ: «Հարամ» եզրի մյուս նշանակությունն է տան կամ բնակարանի կանացի մասը, այսինքն՝ այն մասը, որտեղ օտար տղամարդիկ մուտք չունեն:

Հիջաբ. արաբ.՝ քող, նաև՝ արգելք: Հիշատակվում է Ղուրանում և հաղիսներում: Իսլամում այս եզրը նշանակում է ցանկացած կանացի հագուստ, որը նրան ծածկում է գլխից մինչև ոտքեր: Առօրյայում հիջաբը մուսուլման կանանց գլխաշորն է:

Հիջրա. արաբ.՝ վերաբնակեցում, գաղթ: 622 թ. սեպտեմբերի 24-ին Մուհամմադ մարգարեն Մեքքայից տեղափոխվեց Յաթիբ, որը այնուհետև կոչվեց Մադինաթ ան-նաբի (Մարգարեի քաղաք կամ ուղղակի Մադինա): Մադինա վերաբնակվելու պատճառը հետզհետե ուժգնացող հետապնդումն էր Մեքքայի կռապաշտների կողմից, ինչը մարգարեի հորեղբայր և Բանու Հաշիմ ցեղի առաջնորդ Աբու Տալիբի մահից հետո դարձավ շատ վտանգավոր: Մադինայի արաբական ցեղերն ընդունեցին իսլամ և մարգարեին հրավիրեցին իրենց քաղաք, որպեսզի նա վերջ դնի այդ ցեղերի միջև այրունահեղությանը և *ուժմա* ստեղծի: Մադինա տեղափոխվելու օրը համարվում է մուսուլմանական թվարկության սկիզբ: Մարգարեի հետ սկզբնական շրջանում 80-100 հավատացյալ տեղափոխվեց Մադինա: Այս մուսուլմանները կոչվեցին *մուհաջիրներ*: «Հիջրա» եզրը հետագայում ստացավ ևս մեկ փոխաբերական իմաստ: Նշանակում էր տգիտությունից, Ալլահին չճանաչելուց, վայրենությունից անցում կատարել Ալլահին ճանաչելուն, *իլմին*, քաղաքակրթությանը:

Հուջջաթ ալ-Բսլամ. արաբ.՝ «իսլամի ապացույց»: Տասներկուերորդական շիաների հոգևորականի աստիճան, որը Մեծ Այաթոլլահ և Այաթոլլահ աստիճաններից ցածր է: Այն ստանալու համար հավակնորդը պետք է ուսանի Ղուրան ուսումնասիրող գիտություններ, *ֆիկհ*, *քալամ*, *հաղիսներ*, *թաֆսիրներ*, արաբերեն, ումմայի պատմություն և այլն: Ուսումը բարեհաջող ավարտելուց հետո նա ստանում է ոչ միայն այս աստիճանը, այլև *իջթիհադի* իրավունք:

Հուսեյն իբն Ալի (626-680). շիայականության 3-րդ իմամը, Ալի իբն Աբի Տալիբի և Ֆատիմայի կրտսեր զավակը, Մուհամմադ մարգարեի թոռը: Հայտնի էր որպես խիզալի զինվոր, որն իր հոր և ավագ եղբոր կողքին մասնակցել էր մի շարք ճակատամարտերի: 2-րդ իմամ Հասանի մահից (շիաների համոզմամբ՝ սպանությունից) հետո դարձավ շիայականության առաջնորդը: Երբ խալիֆ *Մուավիան*, հակառակ իմամ Հասանի հետ ձեռք բերած պայմանավորվածության, ավանդեց իշխանությունն իր որդի Յազիդին, Հուսեյնը խիստ դատապարտեց նրանց: Քուֆայի բնակիչների բազմաթիվ կոչերից հետո իր հարազատների և մերձավորների հետ մեկնեց այդ քաղաք, որպեսզի գլխավորի Օմայանների դեմ ապստամբությունը, սակայն ճանապարհին՝ Քերբելայի մոտ, 680 թ. հոկտեմբերի 10-ին նրան շրջապատեց Յազիդի ուղարկած բանակը և դաժանաբար սպանեց տղամարդկանց, իսկ կանանց և երեխաներին գերի վերցրին: Քուֆացիները չմիացան Հուսեյնի խմբին և շիայականության պատմության մեջ մտան որպես դավաճաններ: Հուսեյնի մարտիրոսությունը կարևոր դեր կատարեց շիայականության կրոնադիցաբանական համակարգի ձևավորման տեսակետից: Ամեն տարի իմամ Հուսեյնի մահվան ամսվա առաջին տասը օրը շիաները մասնակցում են միատերիաների, որոնց ընթացքում խարազանում են իրենց՝ ողբալով իմամի մահը և ի նշան

իրենց դավաճանության: Քերբելայում գտնվող դամբարանը շիայական սրբավայր է, որտեղ ամեն տարի միլիոնավոր ուխտավորներ են հավաքվում:

Ղ

Ղուրան. արաբ.՝ ընթերցանություն, ընթերցում, նաև արտասանություն: Իսլամի սուրբ գիրքն է: Բաղկացած է 114 սուրաներից, 6204-ից 6236 (տարբեր բաժանման վարկածների համաձայն) *այաթներից* և 320 հազարից ավելի տառերից: Մուսուլմանները հավատում են, որ Ղուրանը Ալլահի խոսքն է, որը 23 տարիների ընթացքում (610-632) Ջիբրիլ հրեշտակապետի միջոցով հաղորդվել է Մուհամմադ մարգարեին: Գրի է առնվել 633 թ-ից մինչև 657 թ. հիմնականում Մուհամմադ մարգարեի քարտուղար Ջալդ իբն Մաբիթի կողմից: Նույն ժամանակաշրջանում տեղի է ունեցել Ղուրանի տեքստի կառուցվածքի հստակեցումը: Ղուրանը սկսվում է ալ-Ֆաթիհա սուրայով, որը կրոնական պրակտիկայում կիրառվում է որպես ամենահաճախ արտասանվող կամ ընթերցվող սուրան: Այնուհետև, սկսած 2-րդ՝ ալ-Բակարա (Կուլ) սուրայից, Ղուրանի գլուխները դասավորված են ըստ ծավալի նվազման (որոշ բացառություններով): Բոլոր սուրաները, բացի 9-րդ՝ աթ-Թաուբա (Ապաշխարություն) սուրայից, սկսվում են բասմալլայով (Հանուն Ալլահի՝ զբասիրտ և բարեգութ): Ղուրանը բանավոր կերպով հաղորդվող տեքստ է: Այն պարունակում է նաև խոսքի այն հատվածը, որն ավելացրել է հասցեագրողը՝ հաշվի առնելով տեքստի հասցեատիրոջ հիշողության մեջ պարունակվողը: Այս պատճառով Ղուրանի այաթների իմաստը հիմնականում անհասկանալի է կամ աղոտ, առանց համապատասխան լրացումների և բացատրությունների, որոնք պարունակվում են *թաֆսիրներում*: Ամբողջ տեքստը հետագայում բաժանվել է հատվածների, օրինակ՝ ամսվա օրերին համապատասխան՝ 30 ջուզի (մասի), շաբաթվա օրերին համապատասխան՝ 7 մանզիլի (տան) և այլն:

Մուսուլմանական ավանդույթը Ալլահից ստացված Ղուրանի սուրաները բաժանում է երկու շրջանի՝ Մեքքայական և Մադինայական: Արևմտյան իսլամագիտությունն այս բաժանումը լրացնում է՝ բաժանելով մեքքայական շրջանի սուրաները երեք շրջանի՝ բանաստեղծական, ռաիմանական և մարգարեական, որոնցից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատկությունները: Դեռ 7-8-րդ դարերում Ղուրանի տեքստի, իմաստների, Ալլահից «իջեցման» (նուզուլ) ժամանակի և տարածության պայմանների, բառերի իմաստների և ծագման, ինչպես նաև այլ հանգամանքների ուսումնասիրության նպատակով ստեղծվում է գիտությունների հատուկ ոլորտ՝ ուլում ալ-կուրան (գիտություններ Ղուրանի մասին), որն ակտիվորեն մշակվում է մինչև այսօր:

Ս

Սադիհա. քաղաք ներկայիս Սաուդյան Արաբիայի արևմտյան մասում՝ պատմական Հիջազում: 622 թ. Մուհամմադ մարգարեն Մեքքայից Սադիհա կատարեց *հիջրա*, ինչով նոր շրջան սկսեց իսլամի՝ Արաբական թերակղզում ամրապնդման պատմության մեջ: Նախաիսլամական շրջանում քաղաքի անունը Յասրիբ էր, մարգարեի այստեղ բնակվելուց հետո այն ստացավ Սադիհաթ ան-Նաբի (Մարգարեի քաղաք) անունը: Իսլամի սրբազան քաղաքներից մեկն է, որտեղ արգելված է մուտքը բոլոր «անհավատներին»: Այստեղ է մարգարեի գերեզմանը, ինչպես նաև հավատացյալների համար բազմաթիվ այլ նշանավոր վայրեր:

Սազհաբ. արաբ.՝ *զահաբա, գնալ, ուղի վերցնել* բայից, ճանապարհ, ուղի, ուղղություն: Կրոնաիրավական ուղղություն *ֆիկհում*: Սուննիական իսլամում 10-րդ դարից սկսած հաստատվել են չորս մազհաբների՝ *մալիքիական, հանաֆիական, շաֆիական և հանբալիական*: Տասներկուերորդական շիաներն ունեն իրենց մազհաբը՝ *ջաֆարիական*: Իսլամում բոլոր

ճյուղերն ունեն իրենց մազհաբները: «Մազհաբ» եզրը երբեմն օգտագործում են նաև նկատի ունենալով «ճանապարհ դեպի Ալլահ» իմաստը, որով նկարագրում են առանձին իմամների կամ սուֆիական շեյխերի ձևավորած հոգևոր կատարելագործման ուղին:

Մակալ. սուֆիական տարիկաթների համակարգում՝ սուֆիի հոգևոր կատարելագործման հերթական աստիճան: Տարբեր տարիկաթներում մակամների թիվը կարող է տարբեր լինել:

Մալիք իբն Անաս (713-795). մալիքիական մազհաբի հիմնադիր: Ըստ միջնադարյան պատմիչների՝ մայրը հղի է եղել նրանով շատ երկար, 2 կամ 3 տարի: Սովորել է ժամանակի ամենահայտնի գիտնականների մոտ, այդ թվում՝ շիայական, օրինակ՝ Ջաֆար ա-Մադիկի: Ձեռք է բերել ալիմի բացառիկ համբավ: Իր աշակերտներին հաղորդել է իր «Մուվատտա» («Արահետ») ստեղծագործությունը, հայտնի են ևս ութ նրանից հաղորդվող գրքերի անուններ: Իմամ Մալիքը խիստ քննության էր առնում իրեն հաղորդվող հադիսները և շատ զգույշ էր վերջիններիս օգտագործման մեջ: Արձակել է բազմաթիվ ֆեթվաներ, որոնց ձևավորման մեթոդների շնորհիվ ստեղծվեց *մալիքիականությունը*:

Մալիքիականություն. Իմամ Մալիք իբն Անասի հիմնած մազհաբ: Իմամ Մալիքը կրոնաիրավական վճիռների և դատողությունների հիմք էր ընդունում Ղուրանը, սուննան (մարգարեի հադիսներից բացի, նա սուննայի մեջ էր ընդգրկում նաև նրա զինակիցների արձակած ֆեթվաները), *իջման, կիյասը, ռայը*, ինչպես նաև «մադիսայի բնակիչների արարքները, եթե դրանք չէին հակասում Ղուրանի և սուննայի տեքստերին: Ներկայումս այս մազհաբը տարածված է հիմնականում Հյուսիսային և Արևմտյան Աֆրիկայի երկրներում:

Մահդի. արաբ.՝ ճիշտ ճանապարհով (դեպի Ալլահ տանող) ընթացող: Ղուրանում այս եզրույթը չի հանդիպում, սակայն լայնորեն մեկնաբանվում է հադիսներում: Մուննիների սկզբնական պատկերացումներում մահդին Իսն է (Հիսուսը), որը ժամանակների վերջում հաստատում է երկրի վրա աստվածային արդարություն և հայտնում մոտեցող Ահեղ դատաստանի մասին: Մահդիի այս դերակատարությունը նման է Մեսիայի վերաբերյալ քրիստոնեական պատկերացումներին, սակայն սուննիականությունում մահդին նաև կրոնի բարենորոգչի դեր ունի: Հետագայում մահդին նույնացվում է այլ կերպարների հետ, ինչը հնարավորություն է տալիս խալիֆայության, ապա նաև Օսմանյան կայսրության տարբեր մասերում մի շարք անձնավորությունների ի հայտ գալուն, որոնք իրենց մահդի էին հռչակում: *Տասներկուերորդական* շիաների կրոնական համակարգում մահդին 12-րդ իմամն է, որը մինչև իր նոր հայտնության պահը թաքուցման մեջ է լինելու: Մահդիի մասին պատկերացումները պատասխան են մարդկանց երազանքներին արդար և ներդաշնակ կյանքի մասին:

Մաշհադ. արաբ.՝ մարտիրոսության վայր: 818 թ. այստեղ մահացել է տասներկուերորդականության 8-րդ իմամ խալիֆ Մամունի փեսա Ալի իբն Մուսա առ-Ռիդան՝ իմամ Ռեզան: Շիաների համոզմամբ նրան թունավորել էին հենց խալիֆի հրամանով: Իմամ Ռեզայի գերեզմանը դարձավ սրբազան վայր, այստեղ կառուցվեց դամբարան, իսկ փոքրիկ գյուղը վերածվեց Իրանի՝ բնակչությամբ երկրորդ քաղաքի: Տարեկան Մաշհադ են գալիս 20 միլիոնից ավելի ուխտավորներ:

Մաուլավիյա, թուրք.՝ մեվելեվի. սուֆիական տարիկաթ, որի հիմնադիրը հանճարեղ բանաստեղծ Ջամալ աղ-Դին ալ-Ռումի (1207-1273) է: Տարիկաթի անդամները ալ-Ռումիին կոչում էին «մաուլանա» (մեր տեր), այստեղից էլ առաջացել է տարիկաթի անվանումը: Տարիկաթի գոյաբանական տեսության հիմքում ընկած է գոյի միասնականության տեսությունը, որի հիմքում այն գաղափարն է, որ Ալլահի էության արտահոսման արդյունքում են ստեղծվել աշխարհը, տիեզերքը, մարդը, ուստի Աստծո էության ճանաչումը և վերադարձը դեպի այն

հնարավոր է միայն իռացիոնալ ճանապարհով: Տարիկաթը հայտնի էր իր կրոնական հանդուրժողականությամբ: Կենտրոնը թուրքական Կոնյա քաղաքում է: Տարիկաթը առավել հայտնի է իր զիքրով, որի ժամանակ սուֆիները պտույտներ են գործում իրենց առանցքի շուրջը՝ խորհրդանշելով արևի, աստղերի, լուսնի, երկնքի, աստծո և մարդկանց միասնականությունը: Ձեռքերի դիրքը պարի ընթացքում խորհրդանշում է մահվան և կյանքի միասնականությունը: Համաձայն առասպելի՝ ալ-Ռումին, իր մտքերով տարված, փողոցում հանկարծ լսում է դարբնի մուրճի ռիթմիկ դիսկոդիսկոնցը և սկսում այդ ռիթմի տակ պտտվել: Պարը կոչվում է «սամա» (երկինք): Տարիկաթի հոգևոր շղթայի մեջ կան և՛ սուննի, և՛ շիա գործիչների անուններ: Մաուլավիները հատուկ հագուստ և կոնաձև գլխարկ են կրում:

Մաուլիդ ան-Նաբի. մարգարեի ծննդյան օրն է, որը նշում են հավատացյալները մուսուլմանական լուսնային օրացույցի երրորդ ամսվա 12-րդ օրը:

Մասջիդ. արաբ. նաև **Ջամաա**, մզկիթ: Առաջացել է արաբերեն *ուլջուդ*՝ *խոնարհում* բառից: Հավատացյալները հավաքվում են մզկիթում Ալլահի առջև խոնարհվելու համար: Այստեղ չկան պարտադիր ծեսեր՝ բացի ծիսական մաքրության վիճակի մեջ մտնելու նպատակով կատարվող լվացումից: Չեն մատուցվում պարագաներ, չեն կատարվում այլ նման գործողություններ: Միայն ուրբաթօրյա ընդհանուր աղոթքի ժամանակ հավատացյալները լսում են տվյալ մզկիթի իմամ խասիբի (քարոզիչ) քարոզը:

Մասջիդ ալ-Ալլաա. արաբ.՝ հեռավոր մզկիթ: Գտնվում է Երուսաղեմում: Մուսուլմանական հիմնական սրբավայրերից մեկն է: Համաձայն ավանդության՝ կառուցվել է այն վայրում, որտեղ Բուրակը հասցրել է Մեքքայից Մուհամմադ մարգարեին (*խրա*՝ զիշերային ճամփորդություն), և որտեղից նա բարձրացել է երկինք (*միրաջ*): Այս մզկիթում միաժամանակ կարող է աղոթել հինգ հազար հավատացյալ:

Մասջիդ ան-Նաբի. արաբ.՝ մարգարեի մզկիթ: Գտնվում է Մադինայում: Այս մզկիթում է նաև Մուհամմադ մարգարեի գերեզմանը:

Մարաբուտներ. արաբ.՝ մուրաբիտ, առաջացել է *ռիբատ*՝ *ամրոցատիպ կացարան* բառից: Եվրոպական միջնադարյան աղբյուրներում մարաբուտ էին անվանում ռիբատներում բնակվող ֆիդայի սուֆիներին, որոնք իրենց կյանքը նվիրել էին ջիհադին: Սկզբնական շրջանում մարաբուտները պաշտպանում էին խալիֆայության սահմանները: Մարաբուտների միավորումներից մեկը 9-րդ դարում Ալմորավիդների (արաբ.՝ ալ-Մուրաբիտուն) հարստությունը հիմնեց Հյուսիսային Աֆրիկայում, որտեղից 1090 թ. իրականացրեց Արաբական Իսպանիայի նվաճումը: Ավելի ուշ մարաբուտ սուֆիների շեյխերը մեծ համբավ ձեռք բերեցին և հռչակվեցին որպես սուրբ շեյխեր: Հյուսիսային Աֆրիկայի երկրներում մինչև այսօր որոշ մարաբուտների դամբարաններ ուխտագնացության վայրեր են, իսկ նրանց ժառանգները մեծ հեղինակություն վայելում:

Մարջա աթ-թակլիդ. արաբ.՝ կրկնօրինական աղբյուր, անձ, որին հետևում են, ձգտում նմանվելու, կրկնելու: *Տասներկուերորդականների* մոտ՝ *մուջթահիդի* բարձրագույն աստիճան, բարձրագույն հոգևոր հեղինակություն: Այդ աստիճանն ունեցող աձնավորությունը փոխարինում է թաքուցման մեջ գտնվող իմամին:

Մեքքա. քաղաք ներկայիս Մաուլյան Արաբիայի արևմուտքում՝ պատմական Հիջազում: Այստեղ է ծնվել և իր քարոզը սկսել Մուհամմադ մարգարեն: Մեքքայում է իսլամի գլխավոր սրբավայրը՝ *Բաաբան*, ուր *հաջ* կատարելու համար ամեն տարի գալիս են միլիոնավոր մուսուլմաններ աշխարհի բոլոր ծայրերից:

Միլլա. արաբ.՝ կրոն, կրոնական համայնք: Ղուրանում այդպես է անվանվում Իբրահիմի և մյուս մարգարեների քարոզած կրոնը: Միջնադարում այդպես են կոչվել բոլոր մուսուլմանների կողմից ընդունված կրոնական համայնքները, նաև մուսուլմանական: Օսմանյան կայսրությունում այս հասկացության հիման վրա ստեղծվեց միլեթների վարչաիրավական համակարգը, որոնց ինքնավարություն էր տրվել իրենց ներքին գործերում:

Միհրաբ. փորվածք մզկիթի պատի մեջ, որով նշվում էր ուղղությունը դեպի Մեքքա, որպեսզի աղոթքի ժամանակ դեմքով այդ ուղղությամբ լինեն:

Մինարե. մզկիթին կից աշտարակ, որից *մուազզինը ազան* է կարդում, այսինքն՝ հրավիրում է հավատացյալներին աղոթքի: Առաջին մուազինը Բիլալ անունով մի սևամորթ հավատացյալ էր, որն ուներ շատ բարձր ձայն: Մադինայում հավատացյալների թիվը շատացել էր, և նրանք իրարից հեռու էին, ուստի հաճախ բաց էին թողնում աղոթքը՝ չնկատելով ժամանակը: Մարգարեն հավատացյալներին աղոթքի մասին տեղեկացնելու համար հրամայեց Բիլալին բարձր տանիքից բոլորին կանչել աղոթելու: Հետագայում հատուկ բարձր աշտարակներ կառուցվեցին՝ *մինարեներ*:

Մինբար. մզկիթում տեղադրված ամբիոն, որից *խատիբը (քարոզիչը)* քարոզով դիմում է հավատացյալներին:

Միրաջ նաև Իսրա, արաբ.՝ հառնում: Մուհամմադ մարգարեի՝ երկինք բարձրանալու և Ալլահի հետ հանդիպման ավանդապատում: Մարգարեն բարձրանում է յոթ երկինք, գրուցում Մուսայի, Իբրահիմի, Իսայի և մյուս մարգարեների հետ, դեկավարում է նրանց ընդհանուր աղոթքը, այնուհետև հանդիպում է Ալլահի հետ: Բարձրյալն այդ հանդիպման ընթացքում կրոնի և հավատի մասին է սովորեցնում Մուհամմադին, տեղեկացնում նրան դրանց հիմքերի մասին, հանձնարարում քարոզել աստվածային կրոնը և օրենքը:

Մուազին (նաև՝ Մուեզին). մինարեից ազան կարդացող, աղոթքի կանչող:

Մուալիմ. արաբ.՝ ուսուցիչ: Սկզբնական շրջանում՝ կրոնի ուսուցիչ: Նաև՝ հարգանքով դիմելու ձև:

Մուդարաբա. արաբ.՝ շահույթի բաշխում ըստ մասնաբաժինների: Իսլամական բանկերի գործունեության սկզբունքներից մեկը:

Մութազիլիականություն. արաբ.՝ *իթազալա՝ անջատվել, առանձնանալ* բայից: Մութազիլիականության հիմնադիր Վասիլ իբն Ատան (մահ. 748), վիճելով մեդքի էության հարցի շուրջ, անջատվեց (մեկուսացավ) Հասան ալ-Բասրիի շուրջը հավաքված ալիմներից, ինչը և հիմք դարձավ նոր ուղղության ձևը բերած անվան համար: Մութազիլիականությունը ձևավորվեց այն շրջանում, երբ ումման, որի հավատացյալների էթնիկական և ռասայական պատկանելությունը, մշակութային ժառանգությունը, քաղաքակրթական մակարդակը և միջավայրի ու կյանքի պայմանները սկզբունքորեն տարբերվում էին Մադինայի ումմայի հատկանիշներից, նոր իրավիճակին ադապտացվելու խնդիրները լուծելու համար պետք է նորովի գիտակցեր կրոնի և հավատի նկատմամբ առաջացող հարցերը: Մութազիլիականությունը այս հարցերին պատասխանելու համար առաջարկեց ռացիոնալիստական մոտեցումներ: Այն հաստատում էր բանականությամբ առաջնորդվելու սկզբունքը՝ հակադրվելով *թակլիդին* (նախորդ սերունդների հեղինակություններին կուրորեն հետևելու սկզբունքին): Մութազիլիականները հռչակեցին մի շարք նոր սկզբունքներ (օրինակ՝ գոյի և գոյության տարբերակումը, սուբստանցիայի և ակցիդենցիայի կատեգորիաները) նյութական աշխարհը ճանաչելու համար: Նրանք համարում էին խալիֆի իշխանությունը բացառապես աշխարհիկ բնույթ ունեցող: Կրոնաիրավական համակարգում մութազիլիականությունը ընդունեց հինգ հիմնարար սկզբունք:

ա) աստվածային արդարություն (*առլ*), որը ենթադրում է մարդու կամքի ազատությունը և Ալլահի կարողությունը՝ միայն լավագույնը գործելու,

բ) *թաուհիդ*, ինչն իրենց ընկալմամբ բացառում էր Ալլահի մարդակերպ լինելը և աստվածային էությունից առանձին գոյություն ունեցող աստծո ատրիբուտները: Այս դրույթից բխում է նաև մութագիլիականության համար սկզբունքային Ղուրանի արարվածության մասին դրույթը, այլապես խախտվում էր բացարձակ միաստվածության հիմնաքարը: Եթե Ղուրանը, այսինքն՝ Ալլահի խոսքը արարված չէ, եղել է ի սկզբանե, ապա կա երկու աստված՝ Ալլահը և նրա խոսքը, ինչն անընդունելի էր,

գ) *ալ-վադ վա-լ-վաիդ* (խոստում և հատուցում): Ալլահը խոստացել է, որ մարդը հատուցում է ստանալու իր ապրածի և կատարածի համար, թե՛ բարու և թե՛ չարի համար: Ոչ ոք, նույնիսկ մարգարեն չի կարող միջամտել և միջնորդ լինել Ալլահի առջև,

դ) *մանգիլա բեյնա մանգիլաթեյն* (վիճակ երկու վիճակների միջև) ծանր մեղք գործած մուսուլմանը այլևս հավատացյալ չի կարող ճանաչվել, սակայն նա դեռևս անհավատ էլ չէ: Չապաշխարած անձնավորությունը դատապարտվելու է դժոխքի, սակայն նրա պատիժն ավելի մեղմ է լինելու, քան անհավատներիինը,

ե) *ամր բի-լ-մառուֆ ուա նահի ան ալ-մունքար* (գովելիի խրախուսում և պախարակելիի մերժում), ինչը մութագիլիականությունը համարում էր մուսուլմանի պարտականություն:

9-րդ դարի ամբողջ առաջին կեսի ընթացքում մութագիլիականությունը գերիշխող դիրք ուներ խալիֆայությունում, սակայն հետագայում գրկվեց ազդեցությունից և զիջեց դիրքերը ավանդապաշտներին: Մութագիլիականությունը մեծ դեր կատարեց *քալամի* ստեղծման գործում:

Մութաքալիմ. քալամի մասնագետ:

Մուհաջիբ. Մուհամմադ մարգարեի հետ 622 թ. Մեքքայից Մադինա ուխտագնացություն կատարած հավատացյալները:

Մուհթասիբ. արաբ.՝ *իհթասարա՝ ստուգել, հաշվարկել* բայից: Միջնադարում՝ պաշտոնյա, որը հսկում էր շուկաներում կարգուկանոնը, հետևում առևտրի օրենքների պահպանմանը: Ավելի ուշ շրջանում՝ բարոյականության նորմերի և շարիաթի վարքի կանոնների վերահսկիչ:

Մուհամմադ մարգարե (570-632). իսլամում՝ մարգարե, «մարգարեների կնիք», այսինքն՝ Ալլահի ուղարկած վերջին մարգարեն: Պատկանում է Մեքքայի Բանու Կուրայջ ցեղի Բանու Հաշիմ ճյուղին: Հոր անունն Աբդալլա էր, մոր անունը՝ Ամինա: Մանուկ հասակում որբացել է և անցել սկզբում պապի՝ Աբդ ալ-Մուտալիբի, ապա հորեղբոր՝ Աբու Տալիբի խնամքի տակ: Պատանեկան տարիքում մեքքայական քարավանով ճամփորդել է Սիրիա, տեսել եկեղեցիներ և վանքեր, զրուցել հոգևորականների հետ: Մուհամմադը Մեքքայում աշխատանքի է անցնում Խադիջա անունով հարուստ վաճառական կնոջ մոտ, որին դուր է գալիս իր երիտասարդ ազնիվ և խելացի գործակատարը, և նրանք ամուսնանում են: Խադիջան 40 տարեկան էր, արդեն երկու անգամ ամուսնացել էր և 4 երեխաների մայր էր: Մուհամմադը 25 տարեկան էր: Ֆատիմայից Մուհամմադն ունեցավ 4 դուստր և երկու արու զավակ, վերջիններս դեռ մանուկ հասակում մահացել էին: Ավագ որդու անունով Մուհամմադին կոչում էին նաև Աբու Կասիմ: Իր բազմազավակ հորեղբոր՝ Աբու Տալիբի բեռը թեթևացնելու համար Մուհամմադն իր ընտանիք ընդունեց նրա որդուն՝ *Ալի իբն Աբի Տալիբին*: 610 թ. Մեքքայի մոտակայքում գտնվող քարանձավում Մուհամմադը առաջին հայտնությունն է ստանում, և Ալլահը Ջիբրիլ հրեշտակապետի միջոցով հրամայում է նրան կատարել իր վրա դրված մարգարեական առաքելությունը, որի համար նրան տրվում են առաջին *այաթները*: Առաջինը իսլամ է ընդունում

Խաղիջան, ապա՝ Ալին, իսկ հետո՝ Մուհամմադի մտերիմ բարեկամ հարուստ և հեղինակավոր վաճառական Աբու Բաքրը: Մուհամմադի քարոզը և Ալլահի այաթների միջոցով նոր արժեքային համակարգի տարածման փորձերը մեքքացի կռապաշտների դժգոհությունն են առաջացնում, ինչն աստիճանաբար ստեղծում է լարված հարաբերություններ ընդլայնվող մուսուլմանական համայնքի և բազմաստված մեքքացիների միջև: 619 թ. մարգարեն երկու ծանր կորուստ է կրում. մահանում են իր հորեղբայր Բանու Հաշիմ ցեղի առաջնորդ Աբու Տալիբը և Խաղիջան, որոնք իր հենարանն ու պաշտպաններն էին: Մուսուլմանների և հատկապես մարգարեի վիճակը Մեքքայում գնալով ավելի ու ավելի ծանր է դառնում: Ի վերջո, հասնելով պայմանավորվածության *Մադինայի* բնակիչների հետ, 622 թ. նա իր համայնքով տեղափոխվում է (*հիջրա* կատարում) այդ քաղաք, որտեղ սկսվում է իսլամի պատմության նոր փուլը: Մադինայում մարգարեն դարձավ քաղաքի հոգևոր և աշխարհիկ միանձնյա ղեկավարը, կատարեց օրենսդրի և գերագույն դատավորի գործառույթներ: Սակայն, ինչն ամենակարևորն էր, *Ղուրանի* այաթներում պարունակվող օրենքների և պատգամների հիմքի վրա նա ստեղծեց ումման: Մարգարեն ի հայտ բերեց բացառիկ քաղաքական, դիվանագիտական և ռազմական տաղանդներ՝ մինչև իր կյանքի ավարտը կարողանալով հաղթել ոչ միայն հզոր Մեքքային, այլ նաև իսլամականացնել ամբողջ Արաբական թերակղզին: Համաձայն մուսուլմանական ավանդության՝ իր վերջին *հաջի* ժամանակ Ալլահը մարգարեին հայտնեց իր այաթով, որ ավարտել է իր կրոնը մարդկանց համար (Ղուրան, 5:3): Խաղիջայի մահից հետո մարգարեն, ըստ տարբեր աղբյուրների, ունեցել է 10-16 կին: Համաձայն պատմիչ Յակուբիի՝ նրանց թիվը 23 կամ 25 էր: Մուհամմադի բոլոր երեխաները, բացի Իբրահիմից, ծնվել էին Խաղիջայից: Արու գավակները մահացել էին մանուկ հասակում: Բոլոր դուստրերը, բացի *Ֆատիմայից*, մահացել էին դեռ իրենց հոր կենդանության օրոք: Ֆատիման մահացել էր նրանից 6 ամիս հետո:

Մուսին. հավատացյալ մուսուլման:

Մունաֆիկուն. *եզակի՝ Մունաֆիկ*, արաբ.՝ երկերեսանիներ, կեղծավորներ: Այդպես են Ղուրանում անվանվում Մադինայի *ումմայի* այն անդամները, որոնք իբրև թե ընդունել էին իսլամ, սակայն իրականում չէին հավատում: Մունաֆիկների առաջնորդը Աբդալլահ իբն Ուբայն էր, որը Մադինայում Բանու խազրաջ ցեղի ղեկավարներից էր և մարգարեի քաղաքական հակառակորդը դարձավ: Շատ հարցերում հակադրվում էր նրան, նույնիսկ փորձեց իր կողմնակիցների հետ առանձին մզկիթ հիմնել, սակայն դա նրան չհաջողվեց: Երբ նա մահացավ, մարգարեն աղոթեց նրա գերեզմանի վրա, որից հետո Ղուրանում հայտնվեց մի այաթ, որով արգելվեց մունաֆիկների գերեզմանի վրա աղոթք կարդալ: Հաղիսներից մեկում ասվում է, որ մունաֆիկները դժոխքում ավելի դաժան տանջանքներ են ստանալու, քան անհավատները, որովհետև նրանք կեղծավորությամբ վստահություն են ձեռք բերում, որն օգտագործում են խռովություն և գժտություն ստեղծելու համար: «Ալ-Մունաֆիկուն» է կոչվում նաև Ղուրանի 63-րդ սուրան:

Մուշարաֆա. արաբ.՝ մասնակցություն: Իսլամական բանկերի գործունեության սկզբունք, որը հիմնվում է շարիաթի վրա:

Մուջահիդ. արաբ.՝ *ջահադա՝ ջանալ* բայից: Կրոնի մարտիկ, սրբազան պատերազմ՝ ջիհադ վարող:

Մուջթադիդ. արաբ.՝ *ֆեթվա* արձակել, ինքնուրույն կրոնաիրավական լուծում տալ: *Բջթիհադի* իրավունք ունեցող ալիմ: Այդ իրավունքը ստանալու համար նա պետք է անգիր իմանար Ղուրանը, հիմնական մեկնաբանությունները, 3 հազարից ոչ պակաս *հադիս*՝ իսնադներով, խոր գիտելիքներ ունենար *ֆիկհից* և կարողանար կիրառել ֆեթվա արձակելու

համար անհրաժեշտ մեթոդները, գերազանց տիրապետեր արաբերենին՝ բոլոր հարակից գիտություններով և այլն:

Մուսս. աստվածաշնչյան Մովսես, Ալլահի ուղարկած մեծ մարգարեներից մեկը:

Մուսլիմ. արաբ. մուսուլման:

Մուրաբախա. իսլամական տնտեսության մեջ արտաքին տնտեսական գործարքներ ֆինանսավորելու նպատակով շարիաթից բխող սկզբունք:

Մուրադ. այն հավատացյալը, ում Ալլահը սիրում է, ցանկանում է իրեն մոտեցնել:

Մուրիդ. սուֆի դառնալ ցանկացող հավատացյալ, որն ուսանում է որևէ շեյխի մոտ: Ալլահին ճանաչել ձգտող:

Մուֆթի. արաբ.՝ *աֆթա՝ կարծիք արտահայտել* բայից: Եզրույթն առաջացել է 8-րդ դարի սկզբին «կրոնական հարցերով խորհրդական» իմաստով: 1524 թ. Օսմանյան կայսրությունում Քեմալ փաշան նշանակվել է գլխավոր մուֆթի՝ կրելով նաև շեյխ ալ-իսլամ տիտղոսը: Այս պետական պաշտոնյան ստանձնում էր պատասխանատվություն կրոնական կրթության և շարիաթի դատարանների գործունեությունը կարգավորելու և կանոնակարգելու համար: Հետագայում ղեկավարում էր նաև դար ալ-իֆթան՝ կրոնաիրավական որոշումների համապատասխանությունը շարիաթի սկզբունքների ստուգող հանձնաժողովը: Ներկայումս այս պաշտոնը գոյություն ունի սուննիական բնակչություն ունեցող երկրների մեծամասնությունում: Աշխարհիկ պետություններում մուֆթիներն իրենց հավատացյալների համայնքների ղեկավարներն են:

Ն

Նարի. մարգարե:

Նահիբ. արաբ.՝ տեղակալ: Օսմանյան կայսրությունում՝ մուֆթիի տեղակալ, երբեմն նաև՝ շարիաթի դատարանի դատավորի (կադի) տեղակալ:

Նակիբ. արաբ.՝ ավագ, լիազոր: Աբբասյանների ժամանակաշրջանում՝ հատուկ պաշտոնյա, որը վերահսկում էր Մուհամմադ մարգարեի շառավիղների գործերը, հետևում ումմայի կողմից նրանց տրամադրվող ֆինանսական հատկացումների շարիաթին համապատասխանող իրականացմանը: Մուֆիականությունում՝ տարիկաթի ղեկավարի լիազոր կացարաններում: Իսմայիլականությունում՝ հոգևոր հիերարխիայի բարձրագույն աստիճաններից մեկը:

Նակշբանդիականություն. սուֆիական 12 հիմնական տարիկաթներից մեկը: Հիմնադիր՝ Բահա ադ-Դին Նակշբանդի Բուհարայի (1314-1389): Ոսկե սիլսիլայի մեջ, որը խորհրդանշում է հոգևոր հաղորդականությունը, և որը սկսվում է Մուհամմադ մարգարեից և Աբու Բաքրից, կան նաև շիայական իմամների և գործիչների անուններ, օրինակ՝ 6-րդ իմամ Ջաֆար աս-Սադիկի և մարգարեի զինակից Մալման ալ-Ֆարիսիի: Նակշբանդիական տարիկաթը մերժում էր սուֆիական շատ տարիկաթների առօրեական կյանքից և գործունեությունից հրաժարվելու պրակտիկան, չէր ընդունում նաև բարձրաձայն *զիքրը*՝ համարելով, որ Ալլահի հիշատակումը պետք է կատարվի սուֆիի սրտում: Այս մոտեցումը բխում էր մի առասպելից, համաձայն որի՝ մարգարեն Աբու Բաքրին սովորեցրել է լուռ զիքրը, երբ որ նրանք Մադինայի ճանապարհին թաքնվել էին քարանձավում: Պահանջում էր իր անդամներից խստորեն հետևել շարիաթի օրենքներին և կատարել հավատացյալի վրա դրված բոլոր պարտականությունները: Նակշբանդիական տարիկաթի մականները 10-ն են: Տարիկաթի գործելակերպը և նպատակները շրջադարձ ապրեցին Ուբայդալլահ Ահրարի (մահ. 1490) ժամանակաշրջանում, երբ նա,

տեսնելով իշխող դասի՝ Ալլահից և արդարությունից հեռանալը, հայտարարեց, որ այսուհետ իր ճանապարհն է հզորություն և ազդեցություն ապահովելը նակշբանդիականության համար՝ իշխանության վրա ճնշման հնարավորություն ունենալու համար: Նակշբանդիականությունը կադիրիական տարիկաթից հետո ամենամեծ տարածում ունեցողն է: Հատկապես ուժեղ են նակշբանդիների դիրքերը Թուրքիայում, Բալկաններում և Հյուսիսային Կովկասում: Սկսած միջնադարից՝ նակշբանդիները կատաղի պայքար են մղել բեկթաշիական տարիկաթի դեմ, որում ի վերջո հաղթող են եղել: Տարիկաթը շատ հարուստ է, ունի հսկայական կալվածքներ, ձեռնարկատիրական ընկերություններ և այլն: Կան տեղեկություններ, որ Թուրքիայի նախագահ Էրդողանը և իշխող կուսակցության վերնախավի զգալի մասը նակշբանդիական տարիկաթի անդամներ են:

Նահի ան ալ-մունքար վա ամր բի-լ-մառուֆ. արաբ.՝ գովելի խրախուսում և պախարակելի մերժում: Մուսուլմանի վարքը և ապրելակերպը հասարակության մեջ կարգավորող սկզբունք, համաձայն որի՝ հավատացյալը չպետք է անտարբեր լինի իր շուրջը տեղի ունեցողի նկատմամբ, այլ պարտավոր է արձագանքել, եթե դա հնարավոր է, գործով, խոսքով, իսկ եթե անհնար է կամ վտանգավոր, ապա մտքում իր վերաբերմունքն արտահայտելով:

Նամազ. տե՛ս Մալաթ:

Նաջաֆ. քաղաք Իրաքի հարավում, որտեղ իմամ *Ալի իբն Աբի Տալիբի* դամբարանն է: Շիայական սրբազան վայր է, որ ամեն տարի տասնյակ միլիոնավոր ուխտավորներ են գնում:

Նիզարիներ. տե՛ս *Բամայիլականություն:*

Նիկար. մուսուլմանական կանացի գլխաշոր, որն ամբողջովին ծածկում է կնոջ դեմքը, մազերը և պարանոցը՝ նեղ անցք թողնելով աչքերի համար: Սովորաբար սև գույնի է լինում: Չշփոթել փարաջայի հետ:

Նուսայրիներ. տե՛ս *Ալավիներ:*

Շ

Շահադա. արաբ.՝ վկայություն: Հավատի բանաձևի («Վկայում եմ, որ չկա աստվածություն Ալլահից բացի, և Մուհամմադն է Ալլահի մարգարեն») հռչակում այն պայմանով, որ հռչակողը հստակ հասկանում է այդ բանաձևի իմաստը և հրաժարվում է բոլոր պատկերացումներից և մտքերից, որոնք հակասում են դրան:

Շահսեյ-վահսեյ. տե՛ս *Աջուբա:*

Շայթան. սատանա:

Շարիաթ. Ալլահի կողմից տրված հավետենական օրենք, որին պարտավոր է հետևել յուրաքանչյուր մուսուլման:

Շարիֆ. արաբ.՝ ազնվաբարո, երբեմն թարգմանում են նաև ազնվական, ինչը սխալ է: Այդպես էին անվանում Բանու Հաշիմ ցեղի անդամներին, քանի որ Մուհամմադ մարգարեն դրա զավակներից էր: Հետագայում այդպես անվանեցին շիայական 2-րդ իմամ *Հասան իբն Ալիից* սերողներին՝ ի տարբերություն 3-րդ իմամ *Հուսեյն իբն Ալիի* շառավիղների, որոնց պատվանունը *սայիդ* էր:

Շաֆիականություն. սուննիական չորս մազհաբներից մեկի անվանումն է, տրվել է մազհաբի հիմնադիր իմամ աշ-Շաֆիի (767-820) անունով: Ծնունդ է առել Բաղդադում, հետագայում տարածվել Եգիպտոսում և Հիջազում, ապա՝ գրեթե ամբողջ միջնադարյան

սուննիական աշխարհում: Ձգտում է ֆիլիի համակարգում ռացիոնալիստական մեթոդների կիրառմանը, այդ իսկ պատճառով *քալամի* հիմնադիրները մեծ մասամբ պատկանել են այս մագհաբին: Միջին դիրք է գրավում *հանաֆիականության* և *մալիքիականության* համեմատ, ավելի մոտ է կանգնած վերջինիս: *Հանրալիականության* նկատմամբ ունեն խիստ քննադատական, երբեմն նաև թշնամական վերաբերմունք, ինչը հատկապես ակնհայտ է եգիպտական շաֆիական ալիմների վահաբականությանը տված գնահատականներում: Շաֆիականությունը սահմանափակում է *նայի* և *կիյասի* կիրառումը: Ներկայումս շաֆիները մեծամասնություն են կազմում Եգիպտոսում, Բահրեյնի՝ սուննիական փոքրամասնության մեջ, Արևելյան Աֆրիկայում, Ինդոնեզիայում, գործում են նաև Սիրիայում և Հարավային Արաբիայում:

Շեյխ. արաբ.՝ *տարեց, ծերունի*: Նոր և նորագույն շրջանում արաբական ցեղերի առաջնորդների պատվանունը: Այդպես են հարգանք դրսևորելով անվանում նաև կրոնական հեղինակություններին, ասվածավախությանը աչքի ընկնող հավատացյալներին, սուֆիական ուսուցիչներին:

Շեյխ ալ-խալամ. տե՛ս **Մուֆթի**:

Շիրք. հեթանոսություն, կռապաշտություն, բազմաստվածություն:

Ո

Ոստիկան. պահլավերեն «ostican», նշանակում է հավատարիմ, վստահելի: Հայերենի մեջ (գրաբարում) ոստիկան էին կոչվում թագավորին հավատարիմ և վստահելի մարդիկ, որոնց թագավորը նշանակում էր վերակացու, կուսակալ որևէ գավառի կամ աշխարհի վրա: Արաբական տիրապետության ժամանակաշրջանում ոստիկան էին կոչվում արաբների կողմից Հայաստանի վրա նշանակված կուսակալները: Ոստիկանը հնազանդ պիտի պահեր երկիրը, պաշտպաներ արտաքին ուժերի հարձակումներից և ժամանակին հավաքեք հարկերը: Ոստիկանի նստավայրը Դվինն էր, իսկ 8-րդ դարի վերջերից՝ Պարտավը:

Ջ

Ջաբարիականություն. արաբ.՝ պարտադրանք, նաև՝ նախախնամություն, ճակատագիր, երբեմն թարգմանվում է որպես ֆատալիզմ: Առաջին հայեցակարգային և գոյաբանական մուսուլմանական ուղղություններից է վաղ իսլամում: Կտրականապես մերժում էր մարդու կամքի ազատությունը, համարում էր, որ անձի բոլոր քայլերը, գործողությունները, արարքները կանխորոշված են Ալլահի կողմից:

Ջահիլիա. արաբ.՝ *ջահիլ՝ տգետ*: Նախաիսլամական ժամանակաշրջան, երբ մարդիկ տգետ էին, քանի որ Ալլահին չէին ճանաչում:

Ջամաա. տե՛ս **Մասջիդ**:

Ջաֆար աս-Սադիկ (702-765). շիայականության մեջ՝ 6-րդ իմամ: Կարևորագույն դերակատարությունն է ունեցել տասներկուերորդականության կրոնաիրավական համակարգի զարգացման, կանոնակարգման և որպես ամբողջականություն ձևավորելու գործում: Շիայական ավանդությունը հատկապես նշում է նրա գիտելիքները ջաֆրի ոլորտում (գաղտնի իմամից իմամ հաղորդվող էզոտերիկ գիտելիք, որի շնորհիվ Ջաֆար աս-Սադիկը հաճախ աստվածային ներշնչանք և շնորհ էր ստանում): Քաղաքական առումով Ջաֆար աս-Սադիկը ձգտում էր լավ հարաբերություններ պահպանելու իշխանության եկած *Աբբասյանների* հետ և մերժում էր շիայական տարբեր խմբերի ապստամբելու և իշխանությունը Ալիի ընտանիքին վերադարձնելու կոչերը և փորձերը, ինչը հավանաբար պատճառ դարձավ իսմայիլականության ստեղծման

համար: Շիայական ավանդությունը համարում է, որ 6-րդ իմամին թունավորել են խալիֆ ալ-Մանսուրի հրամանով, ինչը սուննիների կողմից ժխտվում է:

Ջաֆարիականություն. 6-րդ իմամ Ջաֆար ալ-Մադիկի անունը կրող շիա տասներկուերորդականների մագհաբ: Ջաֆար ալ-Մադիկն իր կյանքի ընթացքում ոչ միայն կառուցեց շիայական կրոնաիրավական ամբողջական համակարգը, այլ նաև, ունենալով բազմաթիվ աշակերտներ, կարողացավ տարածել այն և դարձնել կիրառելի շիայական բոլոր համայնքներում: Ճանաչելով Ղուրանը և սուննան որպես առաջնային աղբյուրներ՝ նա մերժում էր զինակիցներից հաղորդվող հադիսները և իր գործունեության մեջ օգտագործում էր ոչ միայն մարգարեից, այլ նաև «առիկ ալ-բեյթից» հաղորդվողները: Բացի վերը նշված աղբյուրներից՝ Ջաֆար ալ-Մադիկը լայնորեն կիրառում էր ռայը՝ անձնական դատողությունը, անձնական կարծիքը, քանի որ համարում էր, որ անհրաժեշտ է հենվել ակլի, այսինքն՝ բանականության, առողջ տրամաբանության վրա: Նրա կարծիքով, եթե ակլը կարծում է, որ ինչ-որ բան օգտակար է, ապա դա իրոք օգտակար է, իսկ եթե կարծում է, որ վնասակար է, ուրեմն իրոք վնասակար է: Իջրիհադի դերը բարձր գնահատելով՝ Ջաֆար ալ-Մադիկը ընդլայնեց վերջինիս կիրառման շրջանակները: Ջաֆարիական մագհաբի շրջանակներում հետագայում առաջացան երկու տարբեր մոտեցումներ ունեցող ճյուղեր՝ ուսուլիական և ախբարիական: Ուսուլիականներն ընդունում էին ֆիկհի 4 աղբյուր՝ Ղուրան, սուննա, իջմա և ակլ: Ախբարիականները, որոնք հատկապես ազդեցիկ էին 17-18 դդ., ընդունում էին միայն Ղուրանը և սուննան, ինչպես նաև հրաժարվում էին 4 շիայական հադիսների ժողովածուներում պարունակվող հադիսների իսկությունը վերլուծելուց:

Ջիզյա. գլխահարկ, որը, համաձայն *շարիաթի*, պարտավոր էին վճարել *զիմմիները*: Հարկը պարտադիր էր հասունության տարիքի բոլոր տղամարդկանց համար՝ բացի ծերերից, հաշմանդամներից, ստրուկներից և (մինչև 8-րդ դ. սկիզբ) հոգևորականներից: Մուսուլմանական կրոնաիրավական ուղղություններն իրարից տարբերվում են այս օրենքի մեկնաբանման հարցերում: Որոշ դեպքերում ջիզյան համարվում է զիմմիների տվյալ համայնքի (օրինակ՝ տվյալ քաղաքի հայ առաքելականների համայնքի) կոլեկտիվ պատասխանատվությունը: Օսմանյան կայսրությունում անձնական պատասխանատվությունը և համայնքային պատասխանատվությունը երբեմն զուգահեռ էին կիրառվում: Ջիզյան վճարելուց հետագայում ազատվում էին նաև մուսուլմանական բանակում ծառայող զիմմիները:

Ջիհադ. արաբ.՝ *ջահադա՝ ջանալ, ջանք գործադրել* բայից: Եզրույթի կրոնագաղափարական իմաստն է՝ ջանք գործադրել Ալլահի ճանապարհին: Տարբերակվում են ջիհադի տեսակներ: «Մեծ ջիհադը» մարդու ներքին պայքարն է չար մտքերից, սատանայի ազդեցությունից ազատվելու համար: «Փոքր ջիհադը» զինված սրբազան պատերազմն է անհավատների դեմ:

Ջին. մուսուլմանական դիցաբանական համակարգում կրակից ստեղծված ոգիներ են, որոնք կարող են ցանկացած կերպարանք ընդունել, այդ թվում՝ նաև մարդկային: Լինում են չար և բարի ջիններ:

Ռ

Ռահբար. պարսկ.՝ ուղի ցույց տվող, առաջնորդ: Իրանի Իսլամական Հանրապետության գերագույն ղեկավար:

Ս

Սադակա. ողորմություն, բարեգործական նպատակներով ծախսվող միջոցներ: Հաճախ շփոթում են *զաքաթի* հետ:

Մալաթ. արաբ.՝ *աղոթք կամ նամագ* (պարսկ.): Մուննիները պարտավոր են ամեն օր հինգ անգամ աղոթքի ամբողջ նախատեսված ծեսը կատարել: Շիաները (տասներկուերորդական) ամբողջական ծեսը կատարում են երեք անգամ, բայց արտասանում են սահմանված աղոթքները հինգ անգամ: Եթե հարգելի պատճառներով հավատացյալները չեն կատարում աղոթքը, ապա նրանք պարտավոր են հետագայում լրացնել այն:

Մալիդ. շիայական 3-րդ իմամ Հուսեյն իբն Ալիի շառավիղների պատվանունն է:

Մաու. արաբ.՝ պահք: Ամեն տարի Ռամադան ամսին հավատացյալները պարտավոր են պահք պահել, ինչը նշանակում է, որ նրանք չեն կարող ուտել, խմել, ծխել և մարմնական այլ պահանջներ բավարարել լուսաբացից մինչև մայրամուտ: Ռամադան ամսին է Ալլահը Մուհամմադին հանձնել մարգարեական առաքելությունը և նրան տվել աստվածային հայտնությունը, ուստի հավատացյալներն այդ ամիսը պետք է անցկացնեն աղոթքներով և Ալլահի փառաբանմամբ: Պահքը տևում է 30 օր և ավարտվում է երեքօրյա տոնակատարությամբ, որ կոչվում է *իդ ալ-ֆիտր*:

Մաֆիդ. արաբ.՝ դեսպան, բանագնաց, ճամփորդ: 12-րդ իմամ Մուհամմադ ալ-Մահդիի «փոքր թաքուցման» շրջանում (874-940) այդպես էին կոչվում այն չորս անձնավորությունները, որոնք, ինչպես հավատում էին *տասներկուերորդականները*, ուղարկվում էին իմամի կողմից համայնքը ղեկավարելու համար:

Միֆֆինի ճակատամարտ. Միֆֆինը Եփրատ գետի հարավային ափին գտնվող ավան է, որի մատույցներում 657 թ. տեղի ունեցավ ճակատամարտ *Ալի իբն Աբի Տալիբի* և *Մուավիայի* բանակների միջև: 8 օր տևած մարտերի արդյունքում Ալիի բանակը մոտ էր հաղթանակին, սակայն 9-րդ օրվա լուսաբացին Մուավիայի բանակում կովող Մուհամմադ մարգարեի զինակիցները նիզակների վրա Ղուրանի էջեր բարձրացրին մարտը դադարեցնելու նպատակով, և Ալին համաձայնեց այդ առաջարկին: 12 հազար մարտիկ, որոնք համաձայն չէին այդ որոշման հետ, դուրս եկան Ալիի բանակից, ինչը սկիզբ դրեց *ուժմայի* առաջին բաժանման և *խարիջիականությանը*: Ճակատամարտը փաստորեն ռազմական առումով ավարտվեց Ալիի հաղթանակով, սակայն քաղաքական առումով հաղթողը Մուավիան էր, որն օգտվեց զինադադարից և կարողացավ ուժեղացնել իր դիրքերը հետագա իշխանության համար տարվող պայքար մղելու համար:

Մուննա. արաբ.՝ օրինակ, ճանապարհ: Մուհամմադ մարգարեի խոսքը, գործը, նույնիսկ լռությունը, որոնք վկայված են *հադիսների* մեջ: Մուննան *ֆիկհի* Ղուրանից հետո երկրորդ կարևորագույն աղբյուրն է և հիմք է ծառայում Ղուրանի մեկնաբանության, ինչպես նաև կրոնական և իրավական որոշումներ ընդունելու, օրենքներ ստեղծելու համար: Մուննային պետք է հետևեն ուղղահավատ բոլոր մուսուլմանները:

Մուննիներ. սուննային հետևող և սուննիականությանը պատկանող մուսուլմաններ:

Մուֆիականություն. 8-րդ դարի երկրորդ կեսին առաջացած միստիկական ուղղություն իսլամում, որն իր զարգացման ընթացքում երեք փուլեր է անցել՝ *զուհդի* (ասկետիզմի), սուֆիական դեպի Ալլահ ճանապարհի տեսության ձևավորման և *տարիկաթների*: Համարվում է, որ սուֆիականությունը ձևավորվել է քրիստոնեական արևելյան գնոստիկական հերետիկոսական աղանդների, նեոպլատոնականության և հնդկական հոգևոր տեսությունների ազդեցության ներքո: Հիմնական գաղափարը կապված է էմանացիոն տեսության հետ, ըստ որի՝ Բարձրյալը, իր էությունը արտահոսեցնելով իրենից դուրս, ստեղծել է աշխարհը, գոյը, տիեզերքը: Ուստի ճանապարհը դեպի աստված կարող է հասանելի դառնալ միայն հոգու, այլ ոչ թե բանականության աշխատանքի շնորհիվ: Սուֆիականության տարբեր ուղղություններ ձևավորել

են իրենց հոգևոր ճանապարհները, որոնք բաղկացած են հալերից (վիճակ) և մակամներից (կանգառ, կայան, աստիճան, մակարդակ): Մշակվել են մեդիտացիոն տարբեր տեխնիկաներ, որոնց շրջանակներում ստեղծվել են սուֆիական պոեզիան, երաժշտությունը, պարը և այլ ձևեր:

Վ

Վիլայաթ ալ-Ֆակիհ, պարսկ.՝ **վեյլայաթե ֆադիհ**. շիա տասներկուերորդականների պետական կառավարման կրոնաքաղաքական վարդապետություն, համաձայն որի՝ 12-րդ իմամի «մեծ թաքուցման» մեջ լինելու պայմաններում պետությունը պետք է կառավարվի ուսյալ ֆակիհների և մուջթահիդների կողմից:

Տ

Տալիբներ. 12-րդ դարում ստեղծված իսլամայիլականության ճյուղ:

Տալիբան. արաբ.՝ տալիբ՝ *ուսանող, մեղրեսեի աշակերտ* բառից: Ձևավորվել է 1994 թ. Աֆղանստանում փուշտուն ժողովրդին պատկանող կրոնական ուսումնական հաստատությունների ուսանողների և աշակերտների արմատական շարժման արդյունքում: Իշխանության գլուխ է եկել 1996 թ. (մինչև 2001 թ.)՝ ստեղծելով Աֆղանստանի իսլամական էմիրությունը և Վազիրիստանի իսլամական էմիրությունը Պակիստանի Վազիրիստանի շրջանում: 2003 թ. ՄԱԿ-ը ընդգրկել է Տալիբանը ահաբեկչական կազմակերպությունների ցուցակի մեջ: 1996 թ. գրավեցին Քաբուլը և Աֆղանստանի ամբողջ տարածքում շարիաթը դարձրին օրենքների միակ համակարգը: *Աշարիականության* հետևորդներ են: Արգելվում են հեռուստատեսությունը, համակարգիչները, համացանցը, երաժշտությունը, գեղանկարչությունը, քանդակագործությունը, շախմատը և այլն: Կանանց արգելվում է աշխատել, բուժվել տղամարդ բժիշկների մոտ, մասնակցել հասարակական կյանքին և այլն: Հայտնի են բազմաթիվ վայրագություններով, հատկապես շիաների նկատմամբ, ինչպես նաև բուդդիստական հուշարձանների ավերմամբ: Ներկայումս լուրջ ուժ են Աֆղանստանում և զինված պայքար են տանում ՆԱՏՕ-ի ստորաբաժանումների և Աֆղանստանի օրինական իշխանությունների դեմ:

Ու

Ուլեմ (հոգն.՝ ուլամա). տե՛ս **Ալիմ**:

Ումմա. մուսուլմանների կրոնական համայնք: Կատարյալ ումման Մուհամմադ մարգարեի Մադինայում ստեղծած ումման էր:

Ուսուլ ադ-դին. տե՛ս **Արքան ալ-դին**:

Ուսուլ ալ-իման. տե՛ս **Արքան ալ-իման**:

Ուրֆ. սովորույթային իրավունք, տոհմացեղային հասարակության սովորույթներ և չգրված օրենքներ, որոնցով կարգավորվում և կանոնակարգվում էին այդ հասարակությունների կյանքի բոլոր ոլորտները: Այն մասով, որը չէր հակասում իսլամի դրույթներին, սովորույթային օրենքը մտնում է *շարիաթի* մեջ: Քանի որ տարբեր տարածաշրջաններում սովորույթները տարբեր էին, շարիաթի մեջ նույնպես զգալի տարբերություններ կան:

Ք

Քաաբա. արաբ.՝ խորանարդ: Մուսուլմանական հիմնական սրբություն, գտնվում է Մեքքայում Մաջլիս ալ-հարամ մզկիթի բակի կենտրոնում: Շինության պատի մեջ տեղադրված է «սև քարը», որը, ինչպես հավատում են մուսուլմանները, Ալլահն է ուղարկել երկիր: Հաջի ժամանակ հավատացյալները 7 անգամ պտույտ են գործում Քաաբայի շուրջը, համբուրում «սև քարը» և այլ ծիսական գործողություններ կատարում: Խորանարդաձև շինությունը ծածկված է

քիսվայով՝ սև կտորով, որի վրա ոսկեթելով ասեղնագործված են այաթներ Ղուրանից: Համաձայն ավանդության՝ Քաաբան կառուցել է Ադամը, սակայն այն քանդվել էր ջրհեղեղի ժամանակ, սակայն արդեն Իբրահիմը և նրա որդի Իսմայիլը վերականգնեցին այն (այլ վարկածի համաձայն՝ այն կառուցվել է Իբրահիմի և Իսմայիլի ձեռքերով): Քաաբան Արաբական թերակղզու այդ շրջանի սրբավայրն էր արդեն *Ջահիլիայի* շրջանում: Հիջրայից հետո Մուհամմադ մարգարեն աղոթքի ուղղությունը փոխեց դեպի Քաաբա՝ այդպիսով այն վերածելով մուսուլմանական սրբավայրի:

Քալամ. արաբ.՝ խոսք: Մուննիական իսլամի աստվածաբանական տեսական համակարգ, որը կրոնական ուսմունքի հիմնավորման նպատակով կիրառում է ձևական տրամաբանության փաստարկներ, բանականությունից բխող ապացույցներ՝ ի տարբերություն ավանդական իսլամական գիտության, որը հիմնվում էր *թակլիդի* վրա: Քալամի հիմքը դրվել է մութագիլիական գիտնականների ջանքերով, որոնք կոչ էին անում կրոնափրավական ոլորտում հիմնվելու միայն ռացիոնալ բացատրությունների վրա: Հետագայում այս մոտեցումը զարգացվեց և մանրամասն մշակվեց՝ վերածվելով քալամի, ալ-Աշարիի և ալ-Մատուրիդիի կողմից:

Քահին. նախաիսլամական արաբական ցեղերում՝ քուրմ:

Քասվա/քիսվա. տե՛ս **Քաաբա:**

Քաֆիր. արաբ.՝ *քաֆարա՝ անշնորհակալ լինել, անհավատ լինել* բայից: Հայերենում ավելի հայտնի է *գյավուր* ձևը: Քաֆիր են անվանում անհավատներին: Անհավատ են նրանք, որոնք մերժում են *թաուհիդը*, Մուհամմադի մարգարեական առաքելությունը, Ահեդ դատաստանը, դժոխքի և դրախտի գոյությունը և այլն: Խաչակրաց արշավանքների ժամանակաշրջանից այդպես սկսեցին անվանել նաև քրիստոնյաներին, չնայած դա հակասում է վաղ իսլամի ձևակերպումներին և շարիաթին:

Քերբելա. քաղաք Իրաքում՝ Քուֆայի մոտակայքում, որտեղ գտնվում է շիայական 3-րդ իմամ Հուսեյն իբն Ալիի դամբարանը: Սրբավայր է, ուր ամեն տարի միլիոնավոր ուխտավորներ են գալիս:

Քուֆր. անհավատություն: Տե՛ս **Քաֆիր:**

Օ

Օմայաններ. նախաիսլամական շրանում Մեքքայի Բանու կուրայշ ցեղի ճյուղ, որն ամենաազդեցիկն էր Մուհամմադ մարգարեի այդ քաղաքում քարոզելու ժամանակաշրջանում: Բանու օմայա ցեղի առաջնորդ Աբու Մուֆյանը Մուհամմադի և իսլամի թշնամին էր և իսլամ ընդունեց իր ցեղի մյուս ներկայացուցիչների հետ միայն այն ժամանակ, երբ մուսուլմանների հաղթանակը ակնհայտ էր դարձել: Այս ցեղին էր պատկանում նաև հետագայում 3-րդ խալիֆ հռչակված *Օմանը*, որի սպանությունից հետո Աբու Մուֆյանի որդի *Մուավիան*, որը Միրիայի կառավարիչն էր, չընդունեց *Ալի իբն Աբի Տալիբի* խալիֆայությունը, և նրանց միջև պատերազմ սկսվեց: Ալիի մահից հետո համաձայնության գալով Հասանի հետ՝ Մուավիան 661 թ. դարձավ խալիֆ և մայրաքաղաքը տեղափոխեց Դամասկոս: Այսպես հիմնվեց Օմայան խալիֆների հարստությունը, որը կառավարեց մինչև 750 թ.: Մուսուլմանների մեծամասնությունն այս հարստության իշխանությունը համարում էր անօրինական: Արաբական խալիֆայության պատմության մեջ Օմայանների ժամանակաշրջանը համարվում է արաբական գերիշխանության շրջան՝ ի տարբերություն հետագայում ձևավորված արաբամուսուլմանականի:

Օմար իբն ալ-Խատաբ. 2-րդ խալիֆ, պատկանում է «ալ-խուլաֆա առ-ռաշիդուն»՝ «առաքինի խալիֆների» թվին: Օմարի խորհրդով Աբու Բաքրը հրամայեց Ջադ իբն Մաբիթին գրի առնել Ղուրանը: Խալիֆայությունը ստանձնել է 634 թ. Աբու Բաքրի հրամանով: Օմարի

Ժամանակ սրբնթացորեն ծավալվեցին արաբական նվաճողական արշավանքները, տապալվեց և կազմալուծվեց Մասանյան Իրանը, և ջախջախիչ պարտության մատնվեց Բյուզանդիան: Օմարը տաղանդավոր զորավար էր և պետական գործիչ, որը զգալի ներդրում ունեցավ խալիֆայության պետական համակարգի և վարչական կառույցների ստեղծման գործում: Սպանվեց ստրուկի ձեռքով 644 թ.:

Օսման իբն Աֆվան. 3-րդ խալիֆ, նույնպես պատկանում է «առաքինի խալիֆների» թվին: Խալիֆ դարձել է՝ ընտրվելով խալիֆ Օմարի նշանակած 6-հոգանոց հանձնաժողովի (շուրա) կողմից, ընդ որում ընտրողների մեջ լուրջ անհամաձայնություններ են եղել, թե որ թեկնածուն է ավելի արժանի (Օսմանի հետ միասին քննարկվում էր նաև Ալի իբն Աբի Տալիբի թեկնածությունը): Օսմանի խալիֆայության ժամանակաշրջանում շարունակվեցին հաղթական արշավանքները, և ընդլայնվեցին խալիֆայության սահմանները: Նրա ժամանակ ավարտվեց Ղուրանի գրավոր խմբագրության ստեղծումը: Օսմանը վերածեց շարիաթի դատարանը առանձին ինստիտուտի: Բացի դրանից՝ նա հիմնեց ոստիկանության ինստիտուտը: Լինելով շատ նվիրված և աստվածավախ հավատացյալ՝ Օսմանը նաև, համաձայն որոշ աղբյուրների, թույլ մարդ էր իր բնավորությամբ: Այս պատճառով նա չէր կարողանում դիմադրել Բանու սմայա ցեղի ներկայացուցիչների ճնշումներին և իր մերձավոր արյունակիցներից շատերին նշանակեց Բարձր և կարևոր պաշտոնների: Նրանցից շատերը ոչ միայն իրենց չարդարացրին, այլ նաև աչքի ընկան իրենց ազահությամբ, դրամաշորթությամբ: 656 թ. սպանվեց Մադինա եկած եգիպտացի ապստամբների ձեռքով: Սպանության պահին նա Ղուրան էր կարդում: Օսմանը ամուսնացել էր մարգարեի դուստրերի հետ, և այդ պատճառով նրան անվանում էին Ջու-ն-նուրայն՝ Երկու լուսարձակի տեր:

Ֆ

Ֆատիմյաններ. իսմայիլական խալիֆայական հարստություն, որը Հյուսիսային Աֆրիկայում հիմնել էր 910 թ. իսմայիլական շարժման ատաջնորդ Ուբայդալլահը, որն իր ծագումը կապում էր Մուհամմադ մարգարեի դստեր՝ Ֆատիմայի հետ: 969 թ. Եգիպտոսի գրավումից հետո խալիֆայության մայրաքաղաքը Կահիրեն էր: Ֆատիմյանները կարողացան ընդարձակել իրենց խալիֆայության սահմանները՝ գրավելով Սիրիան, Հիջազը, Սիցիլիան, Պաղեստինը: Ֆատիմյան խալիֆայության տարածքից իսմայիլական քարոզչությունը տարածվում էր բուհների և սելջուկների տիրապետության տակ գտնվող տարածքներ՝ խոշորություն և ապստամբություններ առաջացնելով այդ տարածքներում: Սակայն Աբբասյանների, Սելջուկների, նորմանների, ապա նաև խաչակիրների հարվածների հետևանքով Ֆատիմյան խալիֆայությունը աստիճանաբար կորցրեց իր նախկին հզորությունը, և 1171 թ. հռչակավոր Սալահ ադ-Դինը վերջ դրեց այդ պետությանը: Ֆատիմյան խալիֆայությունում, որը աչքի էր ընկնում իր կրոնական հանդուրժողականությամբ, հայերը ապրել են արտոնյալ կարգավիճակով: Նրանք ակտիվորեն մասնակցել են երկրի տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքին, զբաղեցրել բարձր պաշտոններ բանակում և պետական համակարգում: Հատկապես հայտնի է 11-րդ դարի պետական և ռազմական գործիչ Բադ ալ-Ջամալի ալ-Արմանին, որը Ֆատիմյան խալիֆ ալ-Մուսթանսիրի խնդրանքով հայկական ստորաբաժանումներից կազմված բանակով կարողացավ ազատագրել Կահիրեն թյուրքերից և վերադարձնել խալիֆին իր մայրաքաղաք:

Ֆակիհ. արաբ.՝ *ֆակիհա՝ հասկանալ, ճանաչել* բայից: Ֆիկհի մասնագետ: Մուսուլմանական կրոնաիրավական տեսության մշակողներ, զարգացնողներ և դասավանդողներ: Ուշ միջնադարում զգալի դեր էին խաղում մուսուլմանական տարբեր

երկրների վարչական, դատական և տնտեսական համակարգերում: Ներկայումս մի շարք երկրներում ֆակիինների դերը նույնպես կտրուկ աճում է:

Ֆատիմա (բինթ Ալի իբն Աբի Տալիբ). Մուհամմադ մարգարեի դուստրը, Ալի իբն Աբի Տալիբի կինը, իմամներ Հասանի և Հուսեյնի մայրը: Ֆատիմայից են սերել մարգարեի բոլոր ժառանգները: Եգիպտոսի Ֆատիմյանների իսմայիլական դինաստիան նույնպես իր ծագումը կապել է Ֆատիմայի հետ: Այս տիկնոջ կերպարը չափազանց հարգված է բոլոր մուսուլմանների կողմից: Շիայականության մեջ Ֆատիման ունի գերբնական հատկություններ, նա առանձին պաշտամունքի առարկա է:

Ֆատիմայի ձեռք. Մուհամմադ մարգարեի դուստր Ֆատիմայի անունը կրող հմայական հատկություններ ունեցող թալիսման: Մուսուլմանական ավանդությունը կապում է այս հմայակի ստեղծումը մի առասպելի հետ, որի բովանդակությունը հետևյալն է. Ֆատիման գրավով ապուրը խառնելիս է լինում, երբ տեսնում է, որ իր ամուսին Ալի իբն Աբի Տալիբը նոր կին է բերում տուն: Հուզված և վիրավորված Ֆատիման չի նկատում, որ գողը ձեռքից բաց է թողել, և շարունակում է եռման ապուրը ձեռքով խառնել՝ չզգալով, որ այն վառում է իր մաշկը: Այս պատճառով ամուլեթը խորհրդանշում է համբերություն, հույս և հավատ և այս որակներով է օժտում այն կրողին: Իրենից ձեռք է ներկայացնում, որի բույժ մատը մարգարեն է, ցուցամատը՝ Ֆատիման, միջնամատը՝ Ալին, մյուս երկու մատները՝ նրանց զավակներ Հասանը և Հուսեյնը: Իսկ սուննիները հինգ մատները հասկանում են և մեկնաբանում որպես կրոնի հինգ սկզբունքները:

Ֆեթվա. իրավական, կրոնական, ծիսական որևէ հարցի վերաբերյալ մուֆթիի, մուջթահիդի կամ կրոնաիրավական որոշում արձակելու իրավունք ունեցող որևէ այլ հեղինակության կողմից ձևակերպած հրահանգ կամ առաջարկած լուծում, որը պաշտոնական բնույթ ունի: Ֆեթվան կարող է ունենալ գրավոր կամ բանավոր ձև և հիմք է դառնում կադիների դատական որոշումներ արձակելու ժամանակ: Ֆեթվաներ կարող են ձևակերպվել նաև հավատացյալների այս կամ այն հարցի շուրջ խնդրի առաջացման վերաբերյալ:

Ֆիկհ. կրոնաիրավական գիտությունների համալիր: Ֆիկհի խնդիրն է վերածել հավիտենական աստվածային կամքը մարդու գործելակերպի, վարքի և բարոյականության վերաբերյալ, որը հայտնվել է Ղուրանում, և որն արտահայտվել է Մուհամմադ մարգարեի սուննայում, իրական կյանքում գործող և կիրառվող օրենքների և կանոնների: Մարդկանց ամենօրյա կյանքում գործած արարքների այդ օրենքներին և կանոններին համապատասխանությունը ֆիկհի ձևակերպած մեթոդներով ստուգվում է և տրվում շարիաթի դատին: Այլ կերպ ասած՝ ֆիկհի առարկան են Բարձրյալի կամքի և տրված օրենքի մեկնությունը և պարզաբանումը վերջինս կիրառելի դարձնելու նպատակով: Ֆիկհը բաղկացած է երկու կարևոր մասերից՝ տեսական ուսուլ ալ-ֆիկհ (ֆիկհի արմատներ), և կիրառական՝ ֆուրու ալ-ֆիկհ (ֆիկհի ճյուղեր (կամ ոլորտներ)): Ֆիկհի շրջանակներում ձևավորվել են տարբեր *մազհաբներ*:

Abstract

The geopolitical position of the Republic of Armenia, its historical course and the developments in modern rapidly changing world create needs for every member of civil society to have credible source of information to help him or her to quickly navigate in these complex issues.

Three of the neighboring countries of Armenia are Muslim countries and only with Islamic Republic of Iran Armenia has close relations, and still have unresolved conflicts with Turkey and Azerbaijan. Moreover, the activities of Islamic extremist groups and the impact on both regional and global politics, increase the importance of knowledge and understanding of these processes.

Armenians have trade, economic, cultural and social relations with many Arabic countries and a lot of citizens of Armenia work in those countries. Armenia has also political and diplomatic active presence in Arabic countries. These factors and also the existence of the Armenian communities in the Muslim countries make important for the citizens of Armenia to have reliable source of information about their religious and cultural peculiarities which will help the members of civil society in establishing relations with Muslim colleagues.

The structure of the current handbook was crafted taking into account these realities and includes sections on Iran, Arabic countries, Islamic extremist groups, as well as vocabulary of Islam.

Eurasia Partnership Foundation's (EPF) guiding vision is a South Caucasus that is peaceful, conflict-free and cooperative with civically engaged citizens, socially responsible businesses, and sustainable, accountable and effective third sector organizations. EPF works on critical thinking issues and alternative education methods for many years within its various programs: human rights, conflict transformation and peace-building, and civil society building.

Armenia and the region

This manual is about the neighboring societies of Armenia. It is developed for the civil society representatives, students and the general public in order to get acquainted with the cultural, political and social developments of the region.

The Center for Civilization and Cultural Studies (CCCS) is an independent division of the Yerevan State University (YSU) that conducts fundamental studies in the fields of culture, politics, geopolitics, etc. The CCCS also carries out expert analyses in several aspects of civilization processes and situational studies focused on current events and global developments.

Authors:

Anna Gevorgyan
Davit Hovhannisyan
Hayk Mkrтчyan
Shoushan Kyureghayn
Tatevik Mkrтчyan

This manual is a part of the series of manuals published under the 'EPF University' headline. The series include texts which belong to four large directions:

Critical Thinking (CT)

War and Peace (WP)

Civil Society (CS)

Education, methodology of history, culture and values (EMHCV)

The manual was developed as part of “CSO DePo: CSO Development Program” implemented by the generous support of the American People through the United States Agency for International Development (USAID). The contents and the views expressed as part of the Program are the sole responsibility of Eurasia Partnership Foundation and do not necessarily reflect the views of USAID or the United States Government.

“CSO DePo: CSO Development Program” aims at fostering sustainable civil society development through strengthening the capacity of CSOs as critical actors to advance and oversee reform, improve services and contribute to the development of more effective governance in the economic, democratic, health and social spheres.